

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

- 1.- Վ. ԹԵՔԵԱՆԿրակի եւ ձիւնի միջեւ
- 8.- Ն. ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ ..Հայաստանասէրներ
- 41.- Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆՄանկութեան քաղաք
- 42.- » »Անկախութեան հրապարակը
- 44.- Գ. ԱԲԷԼԵԱՆԱննա հարսը
- 53.- ՄԱՐՈՒՇԱյն հեռուոր երկրին, որ կը կոչուի հայր
- 54.- » »Երգ վերադարձի
- 56.- » »Փարատոբսալ
- 59.- * * *Յետադարձ ակնարկ
- 60.- Փ. ԼՈՒԻԱյբէն մինչեւ Ֆ քաարունը
- 61.- Բ. ՔՈՃԻՕԲեմին վրայ առանձին
- 62.- Ս. ԼԻԻՆՕՄեռած հոգիներ մի ըլլաք
- 66.- * * *Նիկոլայ վասիլովիչ Կոկոլ
- 67.- Ն. ԿՈԿՈԼԽենթի մը օրագիրը
- 91.- * * *Մամուլի արձագանգներէն
- 93.- Ժ. ԱԹԹԱՐԵԱՆՅակոբ Կարապետցի «Անկատար» հատորը
- 101.- Ռ. ԻՇԽԱՆԵԱՆՖրանսիացի անուանի հայագէտը
- 106.- * * *Մշակութային լուրեր

Բազմ

ԱՅՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ Ե ԱՐՈՒԵՍՏԻ

Լ. ՏԱՐԻ

ԹԻԻ 7-8

ՅՈՒՂԻՍ-ՕԳՈՍՏՈՍ

1991

ՊԵՅՐՈՒԹ

Վ. ԹԵՔԵԱՆ

ԿՐԱԿԻ ԵՒ ՋԻՒՆԻ ՄԻՋԵԻ

Ա.

Փողոցներու գուռէն անձրեւին ձիւնին եկայ քեզ գտնելու համար
Անգամ մըն ալ այդպէս ըրի գաւակ չունէի այն ատեն

Կ'ըսեն որ հաւասարակշռեմ կեանքը
Եղած-չեղածը բաղնիքին ջուրը կարելի է հաւասարակշռել
կերակուրին համեմը ինքնաշարժին դեկը
Եւ հեծիկը որ մանկութեանս նամբաները կը գծէ

Այսօր կը կրնամ հաւասարակշռել

Մնացեալը բազմադոնակ անցումներ
Երազներ են որ կը մագլցին պարապութեան մէջ
առտուններու արտոյտները բռնելով
Պիտի մերժեմ ալիքներ գծել
որպէսզի յանկարծ չանշարժանան

Ծովեր ինչո՞ւ պիտի հասկնայի ձեր լեզուն
 եւ օր մը կաղկաղ քալէի ձեր քովէն
 կծիկ կծիկ խօսքերու տափուքիւնը շրջելով ձեր վրայ
 կենակիցի պէս որ օրերու
 անսահման սպիտակութեամբ կը ծածկէ իր կեանքի
 անաղմուկ մահնակալը

Երկար պահեր գգուագին խօսակցելով
 վիռուկ սքեմով քակատագրին հետ
 եւ պարարտ յուսահատութեան որ չ'անպարեր մեկնիլ
 միշտ արդար է եւ միշտ տգեղ ու հմայիչ
 բայց այդ ալ կը սմբի չորցած խեղճի նման
 եթէ չսնուի

Սուտ սուտ աննդութիւններ
 պահպանել տարիներով հաւաքուած մումերը
 տունը տափ պահելու

Ինչո՞ւ որո՞ւ համար

Կ'ըսեն որ հաւասարակշռեմ կեանքը
 երբ ամբողջ տրուածը խարխուլ կշիռք մըն է

Բ.

Հանգոյցը գունդ չէ այս երկար գիշերն է հանգոյցը
 կը փորձեմ գտնել գաւակներս
 վերմակը վրայէն հրա՞ծ են արդեօք
 չպտոկած լուսցի՞ն խաղամուկիկ ոտքերը
 կաթնապուրը որ այնքան կը սիրեն տա՞ք էր
 թէ պաղած է
 — Այո երբեմն երազներէն պիտի վախնամ կ'ըսէի
 — Լոյսը վառած պահէ այսօր կը կրկնէր մեծը
 Լոյսին վրայ միմոսը ամբողջ գիշեր կը խնդար
 կարմիր քիթը վառելով

Կը քննային իրենք տափ թէյին յանձնուած շաքարի նման

Պարտէզը մանկութեան խեղճերուն կը դպնայի
 շրթներուն կը տանէի մեղրի պէս էին

Թերեւս չմեծնալը ամենամեծ հասունութիւնն է

Պիտի մեծնամ եւ պիտի սնանիք
 ժամանակաւոր անուններով

Պիտի սորվի՛ք բանալիներու մասին
 եթէ սխալ գործածէ՛ք՝ դարձեալ պիտի բանան
 եթէ նիշդ գործածէ՛ք՝ դարձեալ դուռեր պիտի դիմադրեն
 Ոչ կեանքը ակնթարթ մը չէ
 ոչ ալ պահերու գումար մը
 ոչ ալ բարդ կամ պարզ կերպով մեկնելի բան մը
 ոչ պայքար է ոչ խաղաղութիւն
 Կծու գիղջերու եւ տեսիլներու համեմներու միջեւ դիմանալու ձեւ մըն է
 ոգիի պէս որ բնական լոյս մը չունի եթէ չտաս

Ընտանիք ենք ձմեռնային առասպելներ կը թխենք
 հաստատուն ու ջերմածորան
 հարիւր տոկոսով բուրդէ շինուած անկողիներու պէս
 Երբ այսքան թեթեւ են բարձերը
 բազմաթիւ մանուկներ կը ծնին
 Ամբողջ կեանք մը ոտաբոսիկ յիշատակներ կը գծենք
 հեռու գիւղ մը լքած՝ մոռացութեան անիւր
 Յետոյ մենք մեզմէ կը հեռանանք տարիներու ընթացքին
 կ'ապրինք ուրիշի մը կեանքը
 առանց հարցուփորձի

Ամէն առտու կաթ խմելու է որովհետեւ շատ սպիտակ բան
 մնացած չ'ըլլար
 Տրտմութիւնը որ հիմա գայրոյթի գիկգակ տարագով կ'երեւայ
 կը տեսնէք որ մեծցեր է գգգգուած ու մերկ
 հսկայ վերքերով որ աղ կ'աղաչեն
 Ուշադիր եղէք յիշողութեան փսփսուքին
 ան է որ ձեզ գերի կամ ազատ կ'ընէ
 ձեզ մեծ կամ փոքր ցոյց կու տայ
 Եւ այն օրը որ վիրակապս չբաւէ ձեր վախերուն
 կրնա՛ք փակել ձեր վերքերը միայն եթէ աղանաք

— Մամա մինչեւ հիմա ո՞ւր էիր կը հարցնէ
 երբ միմոսին կարմիր քիթը հանգած է ալ
 — Բոլոր գոյներուն ծանօթացայ տղաս

Ժամանակը վախցած նստեր է տանս շեմին
 գաւակ մը իր մօրը համար գերեզման կը շինէ ծովուն եզերքը

Գ.

Կին եմ կամովին մեղանչող եւ գոյատեւող
 բացած բացարձակի հոսանքը
 կը փափաքիմ բառերը
 կը փայլեցնեմ մարմնիս վրայ

Իջիր համբոյրի ֆարայրը

իջիր

այտոսկրներդ թող թակարդեն լուսինը

եւ գիտերս

Հանէ կուրծքիս վրայէն

պատրանքի խայթող միջատները

մտած ատենդ տեսա՞ր հազարաչֆանի նոննիին շուքը
կոյրի խաղեր կը խաղար

Կը կակուղնամ բարձի պէս

Արձակուած շնչառութիւնը

գերաթրթիռ կամարներու մէջ կ'ոռնայ

Ցերեկանանք բոնելու

աղանիին արձակած ներմակ մտազայթները

մեր ցանած բառերու փստերուն մէջ իջեւանած այս գիշերը

Հին աստուածները վրիժառու պատերազմներու մէջ մեռան

Արեւը կլլեր էր նամակներս

եւ մութը շուրջս կը մեծնար

Տունը տխուր նստեր է տեղէն երբեք չշարժած աթոռի պէս

Ամէնէն յիմար բանն է կեանքը անցընել յոյսերու մէջ

Իջիր ֆարայրը իջիր

ֆաղցրահեւ ու ֆրոնաթոր

գրկէ գիս ցաւի խուրձերուն վրայ

Թեւերդ տարածէ որ ջնջուին մեր դէմքէն
ածխահար օրերը

իջիր

ինչպէս ֆարը կը նլխպայ

ծիածանուած լինի պորտին

իջիր խինդի խորխորատը

որ մեր մատները բազմանան

Երագի լայն պատշգամներ դարերով ամայի մնացին

հոն թզուկներ կ'երգէին ադամաթուզեր խածնելով

Ինչո՞ւ համեմներով պէտք է երգեմ քեզ

արիւնս չի՞ բաւեր

Ծննդոցի պէս

բան մը կ'իջնէ երկար երկար ձմեռնային գիշերներու

գունատ աչքերը փակելու

Զգացական բազմավտանգ նամբորդութենէ ետք
 իրար համտեսելու վայրկեանին
 ահեղ ֆարը գլորած յարութեան շունչով
 եւ խաչելութեան բազմաթիւ ձայնով
 արեւազալի ծնունդին դիմաց
 կու լայիմք
 Քանի՛ քանի դար է քնացած չէիմք

Մեր դէմքերը դիմացկուն էին
 Փոսը փորի պէս կը ծաւալէր
 նորայայտ անունդին չքեր ֆարերուն կառչած
 մութը կը կոնչար
 Գիտէիմք մութին կեանքը անոր դիմաց ա՛լ չէիմք պոռար
 Լացն էր մեր խօսքը
 ողբին եւ լուրին
 Կու լայիմք անոնց համար որոնց շրթներուն վարդի հունտերը չինկան
 որոնք փափուկ աչքերով եւ կարծրացած կզակներով
 անշունչ ձմեռներուն տաք պահեցին մեր Երկիրը

Ամբողջ հայաշխարհը մէ՛կ գանգուած էր
 մատաղի նման անձայն
 Եկեղեցիներ իրենց մետաղները կորսնցուցեր էին
 Օդը կը ֆերէր իր հիւանդ մորթը
 Մոխրագոյն Երկիր
 սասանած տուններ
 ոռնացող ձիւներ՝ անկէզ երազներու մէջ
 Արթուն է միայն նախահայրական յիշողութիւնը
 որուն բերանը ծծած հին Հոռմի կաթը
 եւ բռնուած՝ կարթէն նոր Հոռմի
 որ մարգարէներ կը նետէ կրակին մէջ
 խաբելով՝ ձե՛րն է պատիւը աւ խաղին
 Ժամանակը պիղատոսացած կը դիտէ
 իրենց սեփական խօսքերուն մէջ կը հրկիզուէին մարգարէներ
 որ Երկիրը վառի

Մենք մտերիմն ենք
 սահմանէ սահման իր կեանքի գնով հին ծիրանի փողով
 նամբորդող իր տէրը փնտռող որք նշմարտութեան
 Ապրե՛ր ենք ընծայումի եւ ներումի լարերով
 անթեւ մանուկներու հետ համբացուած ծերերու
 մշտատատան ընծիւղներու տառապանքի
 Զարաշահումի եւ կեղծիքի կիզիչ Երկրին մէջ
 մեր արցունքի եւ բարկութեան աղօթքները ովասիսած
 հագուադէպ անցորդներու ծարաւը յագեցնելով

Այս անդունդէն պիտի ելլենք
արեւածագը գրկած
Նստէ՛ քովս մի անապարհը
Տեղ չմնաց հասնելիք՝ ամէն ինչ անցանք
անոր գիտակցութիւնն է այս լացը յարարուի
եւ ոսկեցոյուն
Հաւատալէ ետք որ սէրն է փրկութիւնը
միակ բանը որ կրնամ ընել՝ հաւատացնել է
Լոռւմը հրաշքի՛ լրումն է սիրոյ

Նստէ քովս դեղձի սա կորիզը կը տեսնե՞ս
մայրամուտին ցանենք
Դեռ քանի մը դար կայ բաժնուելու

Ե.

Բացեր էր բոլոր աչքերը եւ կը հարցնէր՝
Ըսէ՛ ինձի ինչի՞ կը նմանի կեանքդ

Օգոստոս, 1991
Նիւ Ճըրզի

ՎԵՀԱՆՈՅՇ ԹԵՔԵԱՆ

Ն. ՊԵՇԻԿԹԱՇԼԵԱՆ

— **ՀԱՅԱՍՏԱՆԱՍԷՐՆԵՐ** —

(ԵՐԳԻԾԱՎԷՊ)

ԵԴՈՒԱՐԴ ՈՒ ՄԱՐՏԻՐՈՍ ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ ՄԸ



Պարահանդէսէն մեկնելու պահուն, Եդուարդ առիթէ մը օգտուելով՝ գաղտնօրէն ժամադրուած էր Մարտիրոսին հետ, երկու օր ետքը, առաւօտուն:

Որոշեալ ժամուն Մարտիրոս մօտն էր Եդուարդին, այս անգամ սենեակին մէջ:

Եդուարդ կը փափաքէր, որ Մարտիրոս կարգայ նամակները, եւ յայտնէ իր կարծիքը:

Գաղտնապահութեան խոստում առնելէ ետքը, նամակները յանձնեց:

Մարտիրոս ծխիկ մը վառելով՝ թաղուեցաւ բնօրէնի մէջ:

Եդուարդ պահ մը ուզեց Արթուրի եւ Անժելիֆի միջեւ պատահած միջադէպն ալ պատմել, սակայն, նախընտրեց այս մասին լռել, քանի որ խնդիրը առաւելապէս Անժելիֆին կը պատկանէր, եւ արտօնութիւն չէր առած ուրիշի մը խօսելու համար:

Մարտիրոսին դէմքը վերածուած էր բեմի մը, ուր կը խաղային զանազան շարժումներ ու արտայայտութիւններ: Երբ վերջացուց բնօրէնի մը, բացագանչեց.

— Զգուելի գրպարտութիւններ:

— Ո՞վ կը կարծես, որ գրած ըլլայ այս նամակները...

— Անմիջապէս բսեմ.— Եպրաֆսէն:

— Ինչո՞ւ գրած է...

— Որովհետեւ կ'ուզէր, որ իր կամուրջէն անցնէիր, Անժեւիֆին տիրանալէ առաջ: Ետքն ալ պիտի պարծենար, որ ինք գլուխ հանած է Եդուարդ—Անժեւիֆ միութիւնը:

— Այս առթիւ, յայտնեմ, որ կախարդ կինս ինծի ըսած է.— «Ատ Եպրաֆսէն սիրահարուած է Եդուարդին: Տարիքէն ալ չ'ամչնար: Մօտեցած է յիսունի, բայց ինքզինքը միշտ ախորժաբեր կերակուր կը կարծէ»: Եւ դարձեալ այս առթիւ, պատմեմ քեզի բացարձակապէս իրական մանրավէպ մը:

— Մեծ շահագրգռութեամբ մտիկ պիտի ընեմ, որովհետեւ գիտեմ, թէ լաւ կը պատմես ու պարապ բան չես պատմեր: Բայց պատմելիքէդ առաջ, ըսէ նաեւ, թէ ի՞նչ է կարծիքդ Գաթարիի մասին:

— Գաթարին կարելի է Եպրաֆսէին հարազատ, բայց հակառակորդ ղոյրը կարծել:

— Իսկ Անժեւի՞քը...

— Բարեբախտաբար, ոչինչ ժառանգած է մօրմէն: Ան ամէն կերպով կը նմանի իր հանգուցեալ հորաբրոջը, որ հոգիով ու մարմինով երկրային հրեշտակ մըն էր: Բայց Գաթարի կը պարծենայ, որ Անժեւիֆ իրեն ելած է: Թէեւ ինք լաւ գիտէ այդպէս չըլլալը:

— Հիմա, սիրելի Մարտիրոս, կրնաս պատմել:

— Երկրորդ Աշխարհամարտի վերջին տարին էր: Կիրակի օր մը, կէսօրէն ետքը, Գոլիպրի երաժշտական հաստատութեան մեծ սրահին մէջ սարքուած էր գինե-սեղան մը, ի պատիւ յօրինող ու խմբավար վաղամեռիկ Գուրգէն Ալեմշահի: Սեղանապետ ընտրեցին գիս: Փարիզահայ ծանօթ դէմքերը գրեթէ բոլորն ալ այնտեղ էին: Սրահը լիքն էր: Յանկարծ, լուր մը լոյսի պէս շողաց: Թէ Գերմանիայէն Փարիզ ժամանած են խումբ մը Հայաստանցիներ, ռազմագերիներ, ու ներկայ պիտի ըլլան: Արդէն վարն են: Ո՛ւր որ է կու գան: Անմիջապէս, սրահին մէկ անկիւնը անոնց տեղ պատրաստուեցաւ: Եկան մեր ախրբարիքը, արեւցնելով ոգեւորութիւնը: Ինչպէս ըսի, սեղանապետ էի ու կը վարէի հաւաքոյթը: Ռազմագերիներու խումբէն մէկը, բաժնուելով իր ընկերներէն, եկաւ նստաւ քովս. պարզապէս փակաւ ինծի, ու անդադար, իբրեւ յանկերգ, սկսաւ կրկնել հետեւեալ խօսքը.— «Ա՛հ, ախրէր ջան, դուք չգիտէք, թէ Հայաստանը ինչպիսի մի տժոխք է...»: Աս խօսքը, մօտաւոր իմաստներով, բայց միշտ «տժոխք» բառը գործածելով, կրնամ ըսել, որ կրկնեց տասը-հասն անգամ, ի վերջոյ, դդումի համ տալով, ու գործիս ալ արգելք ըլլալով: Համբերութիւնս

հատած՝ ըսի.— «Ախբէր ջան, տեսնում ես, որ քամատա եմ: Երբ հանդէսը վերջանայ, այնուհետեւ կը խօսինք»: Որո՛ւ կ'ըսես: Անկարելի եղաւ այդ երիտասարդին, հորէնին խօսք հասկցնել, զինքը ի կարգ հրաւիրել: Ու անդու կը կրկնէր ու կը կրկնէր.— «Հայաստանը մի չտեսնուած տժոխք է... իրական տժոխքը, եթէ կայ էլ, հէ՛ջ... Բուն տժոխքը Հայաստանն է»: Պոռթկացի ու ըսի.— «Դէ՛, բաւական է, հասկացանք, էլի՛... Յետոյ կը խօսենք այդ մասին»: «— Ասում եմ տժոխք է...»: «— Իսկ ես տրախտ է չասացի...»: «— Տժոխք, մի գարհուրելի տժոխք»: Երբ հանդէսը վերջացաւ, մէկու մը հետ խօսակցութիւն մը պատրուակելով՝ ուղղակի փախայ այդ ընկեր Տժոխքին ֆովէն: Անցաւ երեք օր: Եպրաֆսէենց գացած էի կէսօրէ ետքը, ժամը մէկուկէսին: Եւ հոն, Եպրաֆսէենց տունը ի՞նչ կ'ուզես որ տեսնեմ, ո՞վ կ'ուզես որ տեսնեմ...

— Ներդուրթիւն կը խնդրեմ, սիրելի Մարտիրոս, կարծեմ էն անուշ տեղը պատմութիւնդ ընդմիջելուս համար, սակայն, կարելոր հարցումի մը համար է. ինչո՞ւ կ'ըսես «Եպրաֆսէենց տունը», փոխանակ ըսելու «Արշակենց տունը» կամ «Արշակեաններուն գացած էի»:

— Հը՛մ... Մենք ընտանիք մը կ'անուանենք իր անդամներէն անո՛ր անունով, որ հագած է աւագ *փանթալոն*: Ո՛չ ոք կ'ըսէ.— «Արշակենց կամ Արշակեաններուն գացի», այլ կ'ըսեն.— «Եպրաֆսէենց», որովհետեւ տունին տէրն ու տիրականը Եպրաֆսէն է: Անո՛ր խօսքը կը կատարուի:

— Իսկ Մամասեաններուն համար ինչպէ՞ս կ'ըսեն...

— Կ'ըսեն.— «Գաթարիենց գացի»: Հոն ալ աւատապետուհին Գաթարին է: Մականը, ցոկանը անոր ձեռքն է: Կը տեսնե՞ս, որ Եպրաֆսէ ու Գաթարի այս գետնին վրայ ալ կը նմանին իրարու: Բայց սա ալ ըսեմ, որ Գաթարի՝ Եպրաֆսէին չափ ո՛չ խառնակիչ է, ոչ ալ աղին:

— Է՛, լա՛ւ: Արշակը չի՞ նեղուիր, Գեղամը չի՞ նեղուիր, որ ընտանիքը կը կոչուի կնոջ անունով:

— Երկուքն ալ չեն նեղուիր: Ինչո՞ւ նեղուին, քանի որ այդպէս իրենք կ'ըլլան թէ՛ արդիական, թէ՛ յառաջդիմական ամուսիններ: Ատոնցմէ գատ, քագուհիի ամուսին ըլլալը միթէ պատի՞կ պատիւ է:

— Շնորհակալութիւն լուսաբանութեանդ համար: Հիմա, բարեհաճէ շարունակել պատմութիւնդ:

— Ո՞ւր էի...

— Եպրաֆսէէնց տունը...

— Հա՛... Տեսայ, որ ընկերուի Եպրաֆսէնն ճոխ սեղան մը սարքած էր, ի պատիւ կամ ի սէր ընկեր հորէնին, ա՛յն հորէնին, որ «Հայաստանը տժոխֆ է» կը կրկնէր անդադար:

Եպրաֆսէն ու հորէնն քով քովի նստած՝ կը խմէին ու կ'ուտէին, բայց բացորոշապէս յայտնի էր, որ առաւելապէս գիրար կ'ըմպէին ու կը համտեսէին:

Ընկերուի Եպրաֆսէն կէս մը գինովցած էր ու զիս տեսնելով՝ բացագանչեց.

— Ի՞նչ լաւ բրիւր, որ եկար: Քեզի կը ներկայացրնեմ Հայաստանի քաջ ռազմագերիներէն ընկերը հորէնը, որ իսկական կարմիր մըն է, ու կը յայտարարէ.— «Հայաստանը տրախտ է, տրախտ... Մէկ հատիկ տրախտ է»: Նայեցայ հորէնին, ոը տասն անգամ կարմրած էր զիս տեսնելով, եւ յիշած էր «տժոխֆ»ը: Դրախտը եւ Դժոխֆը խուժած էին Քաւարան: Շատ անհանգիստ էր խեղճ ընկեր հորէնը: Յայտնապէս կը վախնար դիմակագերծ բլլալէ: Եպրաֆսէն առաջարկեց.— «Ընկեր հորէն, մեք ընկերոջ ներկայութեան, անգամ մըն ալ յայտարարէ Հայաստանի տրախտ բլլալը»: հորէն շատ գէշ դրութեան մէջ էր: Նստած էր փուշերու վրայ: Զէր գիտեր, թէ ես անգութ չեմ, նաշ մը, սիրասեղան մը քիթ բերնէ բերելու աստիճան: հորէնն ճիգ մը քրաւ, եւ առանց ոգեւորութեան յայտարարեց.— «Հայաստանը տրախտ է»: Ես բսելիք ունէի Եպրաֆսէնն. ըսի ու անմիջապէս մեկնեցայ, նոյնիսկ մերժելով խմել բաժակ մը գինի: Դուրս ելայ, որպէսզի ներկայութեանս անտանելի բեռէն ազատի հորէնը, ու հանգստօրէն ուտէ-խմէ սեղանէն եւ սիրուիլէն: Ութ-տասը օր ետքը, մեծ փողոցի մը մայթին վրայ, դէմ դիմաց եկանք հորէնն ու ես: հորէնն չախորժեցաւ մեր հանդիպումէն: Տարի գինքը տան մը մուտքին մէջ, ու հարցուցի.— «հորէն ջան, ո՞նց ես, լա՞ւ ես...»: Պատասխանեց.— «Լաւ եմ, ախրէր ջան»: Աւելցուցի.— «հորէն ջան, մի բան եմ ուզում հասկանալ քեզանից: Ո՞նց կը լինի, որ դու ինձ ասում էիր, թէ «Հայաստանը տժոխֆ է», իսկ էն տիկնոջ, Եպրաֆսէնն էլ ասում էիր, թէ «Հայաստանը տրախտ է»: Էս մէկը չհասկացայ... Ո՞նց կը լինի եղպիսի բան...»: հորէնն շուարեցաւ, սկսաւ կակագել ու ըսել քանի մը բառ, նշանակութենէ զուրկ — «Այսինքն... ինչպէս ասեմ... էնպէս...»: Անմիջապէս խօսքը կտրեցի ու ըսի.— «Զկարծես, թէ ես քեզ երկերեսանի մարդու տեղ եմ

դնում: Չկարծես, թէ ես քեզ ստախօսի, կեղծողի տեղ եմ դնում: Դու իսկական ճշմարտախօս մարդն ես, որովհետեւ Հայաստանը թէ տրախտ է, թէ՛ տժոխֆ»: Իսկ ընկեր հորէն ապշահար բացագանչեց.— «Ես՛... էդ մէկը ո՞նց կը լինի...»: Եւ ես իրեն բացատրեցի.— «Հայաստանը դրախտ է՝ իր բնութիւնով, իսկ դժոխֆ է՝ իր բռնակալ *սեֆիմով*»: Խորէն խանդավառուեցաւ ու պոռաց.— «Հա՛, ախբէր ջան, երդում եմ ի՛նչի վրայ որ կամենաս, ճշմարտութիւնը ա՛յդ է»: Միայն սա չափ չար եղայ, ժպտելով երբ հարցուցի.— «Կ՛երդն՞ու եպրաֆսէին վրայ...»: Խորէն խորովածի վերածուեցաւ, իսկ ես հեռացայ:

— Իսկ ինչպէ՞ս վերջացաւ Խորէն-Եպրաֆսէ սիրային գուգերգութիւնը...

— Սկիզբը, Եպրաֆսէ եղած էր Խորէնին գերին: Եղած էր սիրոյ մուրացկանուհի: Սիրոյ կշիռը քիչ անգամ նժարները հաւասար կը պահէ: Ընդհանրապէս մէկ կողմը աւելի ծանր, միւս կողմը թեթեւ կ'ըլլայ: Այդ պատճառով, կողմերէն մէկը կը դառնայ սիրոյ մուրացկան: Եպրաֆսէ կը վախճար, որ քածին մէկը իրմէ կը յափշտակէ Խորէնը: Բայց հագիւ քանի մը ամիս տեսեց այդ վիճակը: Եպրաֆսէ մտերմացաւ ուրիշ ռազմագերիի մը, ու կապուեցաւ Նորիկին, որ աւելի գեղեցիկ էր եւ տարիքով ալ աւելի պատիկ: Ահա այդ ատեն է, որ դերերը փոխուեցան: Խորէնն է, որ դարձաւ սիրոյ ստրուկ ու մուրացկան, եւ ծնրադիր կը հայցէր գթութիւն: Եպրաֆսէ ալ երբեմն Խորէնին հետ կ'ըլլար, իբրեւ ողորմութիւն:

— Իսկ Եպրաֆսէին ամուսինը, տղան...

— Տղան դեռ տղայ էր: Բայց ստահակ մը դարձաւ, երբ մեծցաւ: Կը մեղանչէր ու կ'ըսէր.— «Մարդ մէկ անգամ աշխարհ կու գայ: Ամէն արարած ապրելու, վայելելու իրաւունք ունի: Գետնին տակը անցնի բռնակալութիւնը. իսկ ամէնէն մեծ բռնակալն ալ «Բարոյական» կոչուածն է»: Գալով Արշակին, ան ալ չգիտնալ կը ձեռացնէր, որովհետեւ ինքն ալ փրանսուհի պուպրիկի մը հետ էր: Առատ դրամը, դիւրին շահուած դրամը, բազմաթիւ Հայեր հեռացուց մարդկութենէ:

— Ուրեմն Եպրաֆսէ սանձարձակ սիրագործեց...

— Ունի մեծ քոյր. խելքը գլուխը Հայուհի մը, որ Փարիզէն երկու ժամ հետու հաստատուած է: Ան տեղեկանալով քոջը ու քեռայրին կեանքին, Փարիզ եկաւ ու հեղինակաբար ազատագրեց Արշակեան ընտանիքը: Ազատագրեց քոյրը՝ ռազմագերիներուն տրախտն ու

տժոխֆը ըլլալէ, ազատագրեց նաեւ իր քեռայրը՝ պուպրիկի մը ձեռքը խաղալիք ըլլալէ: Ազատագրութեան դարաշրջանը սկսած էր: Միայն Արթուրը կարելի չեղաւ շիտակ նամբու վրայ դնել:

— Ուրեմն Արշակ պուպրիկի մը խաղալիքը եղած էր, այսինքն՝ խաղալիքին խաղալիքը...

— Կատարելապէս: Շարժուն ու հանոյակատար խաղալիքի մը վերածուած էր Արշակը, պուպրիկը իրեն պանկէ ըսէր՝ կը պանկէր. աչքերդ գոցէ ըսէր՝ կը գոցէր. քալէ ըսէր՝ կը քալէր: Մա՛նաւանդ՝ երբ պուպրիկը գոհարեղէններ ուզէր՝ կը տանէր, անոր ուզածէն աւելի սուղնոցները:

— Բան մըն ալ հարցնեմ. Եպրաֆսէին պատմեցի՞ր ընկեր խորէնին տժոխֆի ու տրախտի խնդիրը...

— Չպատմեմ կ'ըլլա՞յ: Կոկորդալիր խնդաց ու ըսաւ. — «Ատ խեղնին արտասահմանեան տրախտն ալ, տժոխֆն ալ է՛ս եղայ»: Բնական էր, որ ընկեր խորէն՝ Հայաստանի կարօտը առնէր հայաստանասէրէ մը:

— Մարտիրոս, այնքան Եպրաֆսէին միսը կերանք, որ ախորժակս բացուեցաւ: Այսօր հիւրս ես: Երթանք մէյ-մէկ բերնօ խմենք, անկէ ետքն ալ կը նաշենք:

ԳԱԹԱՐԻ ԵՒ ԱՆԺԵԼԻՔ ԵՐԲ ԿԸ ԳՏՆՈՒՆԵՒՆ ՀԱՅԱՍՏԱՆ

Շաբաթ օր մը, ժամը հինգին, ըստ ժամադրութեան, Եդուարդ գնաց Մամասեաններուն, այսինքն՝ Գաթարիենց:

Տունը կը գտնուէր միայն Գաթարի:

Գեղամ հեռաձայնով կանչուած էր բարեկամի մը կողմէ, գործի վերաբերեալ կարելոր խնդիրով մը, իսկ Անժելիք գացած էր ատամնաբոյժին, յուսալով, որ ժամը հինգէն առաջ վերադարձած կ'ըլլայ, սակայն չէր կրցած դառնալ:

Գաթարի ապահովցուց, որ երկու բացականերն ալ պիտի չուշանան: Սուրն, ծխիկ, ըմպելի ու խմորեղէն հրամցուց:

Եւ հիւրասենեակին մէջ կը սկսին գրոյցի: Նիւթէ նիւթ ընթանալով, կանգ առին Հայաստանի վրայ: Գաթարի պատմեց Անժելիքին հետ Հայաստան երթալը, իբրեւ *թուրիսթ*:

Պաթարիի շատաբանութիւններէն ետքը, Եդ-
ւարդ, ծածուկ հեզնութեամբ, հարցուց.

— Երեւանի ճայնասփիւռէն խօսեցա՞ք...

— Հարկաւ: Ռատիոյին մարդիկը խնդրեցին, ես
ալ խօսեցայ:

— Բերանացի՞, թէ գրաւոր:

— Գրաւոր, մի՛շտ գրաւոր:

— Դո՞ւք գրեցիք...

— Շիտակը՝ կարողութիւններ շատ ունիմ, բայց
այդ մէկը չունիմ: Արդէն իրական կնոջ մը համար ան-
վայել բան է գրելը: «Ինծի նայեցէք, ինձմով զբաղեցէք»
ըսելու պէս բան մըն է: Կը գրեն ա՛յն կիները, որոնք
կա՛մ կանացիութենէ գուրկ են, կամ ալ առնական կոպ-
տութիւն մը ունին: Մէյ մըն ալ կը գրեն փառամով կի-
ները: Եւ գրածնին ի՛նչ է որ... Մէյ մը փչեմ՝ փետուր
կ'ելլէ, մէյ մըն ալ փչեմ՝ կ'ելլէ փոշի: Ու տակը բան չի
մնար: Ես անոնցմէ լաւ կը գրեմ, բայց գրածս չեմ հաւ-
նիր: Աննաշակ չեմ:

— Լա՛ւ. ուրեմն ո՞վ գրեց ձեր նառը:

— Անժելիքիս շուրջը դարձող ուսանողներէն մէ-
կուն գրել տուի: Ես ալ փոխարէնը, իր բրոջը տրուելու
համար, շրթունքի ներկ ու գոյգ մը *հայլըն* գուրպայ
նուիրեցի: Ուսանողին գրածը՝ իրենց լեզուով, «ում»ով
էր: Գրութիւնը նախ մեր լեզուին թարգմանեցի,
սրբագրեցի ալ, շատ մը աղուոր բաներ աւելցուցի, թէ՛
կոկեցի, թէ՛ ուռեցուցի: Վերջապէս, զօրացուցի, զար-
դարեցի եւ իմաստներով լեցուցի: Գրուածքն ալ մա-
քուր մը ընդօրինակեցի, որ իմ գիրովս ըլլայ: Տակն ալ
վնասպէս ստորագրեցի, ստորագրութեանս տակն ալ
դրի գիծերու պատուանդան մը:

— Շատ գովեցի՞ք Հայաստանը:

— Հարկաւ, եւ ի՛նչ գովեստ...: Մեծաբանակ,
առանց չափի ու կշիռի: Ածականներու կարաւանով
գովեստ փոխադրեցի: Ուսանողին մէկ ըսածը՝ տասը
ըրի, տասը ըսածը՝ հարիւր, իսկ հարիւրը՝ հազար:
Շատ գոհ մնացին: Քանի՛-ֆանի՛ անգամ, եւ ան ալ ին-
տո՛ր, ձեռքերս սեղմեցին: Սա ալ ըսեմ, որ գրուածք մը
կարդալէն ալ կախում ունի: Ես կարդացի արտասանե-
լով՝ մեծ դերասանուհիի մը պէս: Գրուածքին հոգիին
վրայ նոր հոգի մը աւելցուցի: Մի՛ ժպտիք...: Հաւատա-
ցէ՛ք, որ չեմ չափազանցեր: Զիս լսողները կարծած են,
որ ես արտասահմանեան գործիքէ մըն եմ, կամ եւրո-
պական բեմերու ասմունքով մը:

— Բնաւ չեմ կասկածիր ձեր *քամէտիէնի* կարողութիւններուն վրայ: Է՛, լա՛ւ. ձեր մեծաբանակ գովեստները լսելէ ետքը, չառաջարկեցի՞ն, որ Հայաստան հաստատուիք, ա՛լ հոն մնաք, հո՛ն ապրիք:

— Անոնք կը ճանչնան մարդիկը: Ինծի ատանկ բան ըսող չեղաւ: Ես կրնա՞մ սեղմիլ Հայաստանի մէջ: Ես Ռուսաստանի մէջ անգամ չեմ կրնար սեղմիլ:

— Բայց Ռուսաստանի մէջ չսեղմուողներուն համար ունին Սիպերիան, որ շատ լայնարձակ է ու ամայի: Ի՛նչ մարդիկ սեղմած են այնտեղ:

— *Օքսիժէնի* պակաս կայ: Շնչելը դժուար է: Ինծի արեւ, ովկիանոս, ցոխութիւն պէտք է: Խօսքը մեր մէջ, այնտեղ բնական կեանքը սպաննած են, ու կ'ուզեն գիտական կեանք մը ստեղծել: Եթէ յաջողին անգամ, տխուր յաջողութիւն մը պիտի ըլլայ: Սով կայ ժպիտի: Անշուշտ կը ժպտին, շատ ալ կը ժպտին, բայց սանկ ողջ հոգիէն, ողջ մարմինէն բխած չէ իրենց ժպիտը: Մեքե-նայի ժպիտ է, կեղծ է, ու դեռ կեղծին կեղծն ալ կայ: Զէ՛, շիտակը Հայաստանս շատ կը սիրեմ, բայց հեռուէն, մի՛շտ հեռուէն: Երբեմն կը մօտենամ իբրեւ զբօսաշրջիկ: Մեծ սէրերը հոգեկան կ'ըլլան, ըսուած է: Եթէ միշտ քովը ըլլաս սիրածիդ, կը կշտանաս, ու ա՛լ չես սիրեր առաջուն պէս: Կարգուած մարդիկը լա՛ւ որ ամբողջ ցերեկը բացակայ են տուներէն:

— Բայց չէ՞ որ հայրենիքին մէջ ըլլալու է, մասնակից անոր վերելքին: Մեր քրտինքը խառնելու է կատարունոյ աշխատանքին...

— Իրաւունք ունիք: Բայց ձեր քսածը ամէն մարդու համար չէ: Ինծի համար բնաւ չէ: Հոն իմ տեղս չէ: Ասկէ ետքը, ես ո՛չ թէ Հայաստանի կամ Ռուսաստանի, Ամերիկայի մէջ անգամ չեմ կրնար ապրիլ: Ըսե՞մ աւելին. Ֆրանսայի մէջ ալ միակ ապրելիք տեղս Փարիզս է: Աս ամէնը հարկաւ մեր մէջ կը մնայ:

— Այդ մասին կրնաք վստահ ըլլալ: Բայց ոեւէ Հայու համար այդպէս արտայայտուիլը մեղք է աններելի, իսկ Հայաստանասէրի մը համար մեղք է անորակելի, անփաւելի:

— Հայաստանասէր մը նշմարտասէր ըլլալու է: Բոլոր Հայաստանասէրներն ալ, հոս մնացողներուն համար եմ, ինծի պէս են, բայց ինծի պէս նշմարտախօս չեն:

— Ուրեմն Հայաստանասէր էք պղատոնականօրէն:

— Ատ ի՞նչ ըսել է...

— Ըսել կ'ուզեմ, թէ ձեր սերը գործ չէ, այլ խօսք է, թէ հեռուէն կը սիրէք, առանց դատելու:

— Ատանկ աւելի լաւ է: «Աչքէ հեռու, սիրտէ հեռու» ըսուած է: Ճիշդ չէ միշտ: Մերը աչքէ հեռու, սրտի մօտիկ է: Ասանկ լաւ է: Եթէ իրարու միանանք, մենք կրնանք Հայաստանէն յուսախաբ ըլլալ, Հայաստանն ալ կրնայ մենէ յուսախաբ ըլլալ, իսկ այսպէս, մեր սերը յաւիտենական է: Հայաստանի մեզի հանդէպ ունեցած համակրութիւնն ալ յաւիտենական է: Մենք յաւիտենական մտածումներուն եւ գգացումներուն նայինք: Մնացեալը վաղանցուկ է: Յաւիտենական բաներն են, որոնք արժէք ունին: Յաւիտենական է Հայաստանը, ինչպէս նաոխս մէջ ըսի, ու աւելցուցի, որ համայնավարութիւն՝ յաւիտենականութիւն ըսել է, ու պիտի տիրէ աշխարհի, նոյնիսկ տիեզերքի: Յառա՛ջ, դէպի տիեզերական բարձունքներ, դէպի յաւիտենականութիւն: Ո՛չ մէկ ուժ, ո՛չ երկրային, ո՛չ երկնային կարող է արգելք հանդիսանալ մեր յառաջդիմութեան, մեր համայնավարութեան, մեր յաւիտենականութեան: Այսպէս վերջացուցի նաոս: Արիւնս բռնկած էր, ձեռքերս կը դողային ու աչքերէս կայծեր կ'ելլէին: Բոլորն ալ ձեռքերս սեղմեցին: Բայց սեղմեցին, խօսք չէ: Քանի մը օր սա մայրապետի մատներս ցաւեցան:

— Ես ալ կը փափաքիմ սեղմել ձեր ձեռքը, բայց առանց ցաւեցնելու ձեր մայրապետական մատները:

— Կրնաք համբուրել:

— Բնականաբար, քանի որ ձեռք ունիք մայրապետի:

— Կը վայեցնէի մայրապետութիւնը...

— Նոյնիսկ հայրապետութիւնը, եթէ փանքալոն ունենայիք:

— Ունի՛մ, ունի՛մ. անհոգ եղէք:

Եւ եղուարդ խոնարհաբար իր շրթունքները հանգչեցուց Գաթարիի աջին վրայ:

Գաթարի ըսաւ.

— Ես ալ ձեր նակատը համբուրեմ:

Բայց համբուրեց շրթունքները:

Եղուարդ գարմանահար հարցուց.

— Ձեր բառարանին մէջ «նակատ» բառը շրթունքներէ կը նշանակէ...

Գաթարի համարձակօրէն պատասխանեց.

— Ճակատը համ չունի: Ատկէ գատ, «կոխ»ի իմաստ ունի. մինչդեռ շրթունքը սիրոյ իմաստ ունի:

Կ'ըսեն՝ «պատերազմական մական կամ մականա-
մարտ, մական մականի գալ»: Մինչդեռ շրթունքները
խորհրդանիշն են սրբութեան եւ սիրոյ:

— Պէտք է խոստովանիմ, որ այդ խնդիրներուն
մէջ, պէտք եղածին չափ յառաջդիմական չեմ:

— Պէտք է ըլլաք. Գիտէք անշուշտ, որ խօսք մը
կայ, որ կ'ըսէ. — «Մօրը նայէ, աղջիկը առ»:

— Այդ ձեւով աղջիկ առնողներ կան անշուշտ:
Բայց ոմանք ալ կը գոհանան՝ գուշակելով համը: Առոր
համար քիչ մը մարգարէ ըլլալու է:

— Ձեմ գիտեր, թէ մարգարէ ըլլալով՝ համը եւ
հոտը ինչքան միշտ կը գուշակուի: Բայց հիմա կը հաս-
կընամ, որ ինչն^օ սէր ու պատիւ չեն վայելած մարգա-
րէները: Դուք բացառաբար բախտաւոր էք. մարգարէ
ըլլալով՝ սիրուած ու յարգուած էք:

— Կը տեսնեմ, որ դուք ալ մարգարէ էք...

— Այն կիներ, որ չի կրնար Մագթադինէ ըլլալ, ու-
զէ-չուզէ կ'ըլլայ մարգարէ:

Խօսակցութիւնը վերջ գտաւ Անժելիֆի մուտքով,
որ հարցուց.

— Ինչի^օ մասին կը խօսէիք ու լռեցիք...

Եղուարդ պատասխանեց.

— Մայրիկդ ու ես մարգարէ եղած՝ կը խօսէինք
հրեշտակի մը ապագային մասին:

— Եւ ո՞վ է այդ հրեշտակը:

Գաթարի ըսաւ.

— Ա՛, այդ մէկը գաղտնիք է:

— Կ'ըսեն, թէ սատանաները նախկին հրեշտակ-
ներ են: Ճիշդն է...

Գաթարի պատասխանեց.

— Կ'ըսեն: Ես ալ ժամանակին հրեշտակ էի, բայց
սատանայ չկրցայ ըլլալ:

— Իսկ ես կը յաջողի՞մ սատանայ ըլլալ:

Եղուարդ պատասխանեց.

— Ձես յաջողիր, քանի որ ամէն կերպով կը նմա-
նիս մայրիկիդ:

— Ատ ալ միշտ է. այդ պարագան մոռցած էի:

Գաթարի նշոյց.

— Դուն կը յաջողիս: Արդէն սատանայ դառնալ
սկսած ես: Աս աշխարհին մէջ կատարեալ արարածը ա՛ն
է, որ թէ՛ հրեշտակ, թէ՛ սատանայ է:

Եղուարդ աւելցուց.

— Յիսուս ըսաւ, որ աղանիի պէս միամիտ ու
օձի պէս խորամանկ ըլլալու է: Օձը սատանան է, ինչպէս

սատանան օձ է: Բայց նոր սատանան միայն մէկ անկում ունենալու է. այն ալ գիւնքը սիրողին գիրկը իյնալն է:

— Մամա՛, թոյլ կու տա՞ս, որ ատանկ անկում մը ունենամ...

Եւ առանց սպասելու պատասխանի, ինկաւ Եղուարդին գիրկը, ու շրթները միացուց անոր շրթներուն:

Գաթարի յայտարարեց.

— Եթէ ասիկա հրեշտակի առաջին անկումդ է, կանուխ է. իսկ եթէ սատանայի առաջին անկումդ է, ուշ է:

Եղուարդ եզրակացուց.

— Քիչ առաջ, կը խօսէիք յաւիտենականութեան մասին, որուն մէջ ո՛չ կանուխ կայ, ոչ ալ ուշ:

Երբ Անժելիք հագուստը փոխելու համար հեռացաւ, Գաթարի յանձնեց Եղուարդին երեք թուղթ, ու ըսաւ.

— Երեք ոտանաւորներ են: Գրուած են Երեւանի մէջ, երբ հոն էին: Ոտանաւորներէն մէկը գրուած է Պէյրութէն ներգաղթած երիտասարդ բանաստեղծի մը կողմէ, իսկ միւս երկուքը գրուած են հայաստանցի սկսնակ բանաստեղծի մը կողմէ: Ձեր քով պահեցէ՛ք ու կարդացէ՛ք երբ մինակ ըլլաք: Անժելիքը չգիտնայ: Չ՛ուզեք, որ մարդու ցոյց տամ ասոնք: Ան կ'ըսէ, թէ քաջքը՝ շուկներ են աս ոտանաւորները, իսկ ես կը գտնեմ, որ քաջքուկէ աւելի գովեստ են իրեն: Անժելիքս գովեստէն ալ չ'ախորժիր: Համեստ է:

— Ձէ՞ որ ձեզի ելած է:

— Ա՛հ, որքա՛ն նիշդ է: Աղջիկս ամէն բանով ինձի կը նմանի:

* * *

Եղուարդ անհամբերութենէն կը վառէր, վայրկեան առաջ կարդալու համար երեք ոտանաւորները:

Մէկ միջոց կար. կարդալ սրբապղծութեամբ:

Մտաւ հանգստավայրը, լոյսը վառեց ու կարդաց հետեւեալ ոտանաւորները.

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ԱՆՃԵԼԻՔ

Երեւա՛ն, Սեւա՛ն,
Դատուան, դէմը Վան,
Արտամե՛տ, Ոստա՛ն...
Աշխարհ Հայաստան:

Եւ քար ու ծառ շատ,
 Նուռ, խաղող, փըշատ,
 Բարտի ու սօսի...
 Գեառ կը հօսի...

Եւ Արարատը...
 Բայց կոնկակը չէ,
 Արարատ լեռը.
 Մեր կոնկակից վար
 Առնուած բերը...

Բիւրա՛կ, Բիւրակա՛ն,
 Գառնի, Օշակա՛ն,
 Գորիս, Դիլիջա՛ն...
 Ամբողջ տեսարժան:

Գեղեցիկ շատ բան
 Ունի Հայաստան.
 Բայց իբր հրաշալիք՝
 Ունի Անժելիք:

Հայաստանն է լիք՝
 Կոյսերով տիկնիկ,
 Բայց միշտ մէկ հատիկ
 է վեհն Անժելիք:

ԹՈՒՐԻՍԹ ՄԱՅՐԻԿ ԵՒ ԱՆՃԵԼԻՔ

Հայաստանասէր մամղէլ Անժելիք,
 Ո՛վ գիտէ ինչե՛ր բերիք հայրենիք:
 Եւ պիտի տանես ի՛նչ բաներ կուտակ,
 Որպէս շահեկան ու սուրբ յիշատակ:

Անշուշտ կը տանես մի տասը մուշտակ,
 Քըսան տուփ քաւեար, քառսուն շիշ կոնեակ.
 Իսկ մամադ ունի տասներկու ճամպրուկ,
 Իր հետ տանում է ապրանքների բուրդ:

Մենք պիտի չինենք տուն բազմադարան,
 Հայաստանասէր Հայոց թանգարան:
 Չենք մոռանալու, որ մամադ բերեց նայլընից զուլպայ,
 Պիտի յիշէ զինք սերունդն ապագայ:

Հայաստանասէր լինելը խօսք էր, դուրք ելած փորձի,
 Ու վերածեցի խօսքը՝ մեծ պարծի:
 Հայաստանասէր եղողն ունեցաւ կուս սակեպըսակ,
 Բայց աւելի կուս մի լիքը քըսակ:

Եկաք Հայաստան ծանրութեամբ բեռի,
 Մարդ իր սիրածին շատ բան կը բերի:
 Մարդ իր սիրածից շատ բան կը տանի.
 Այս առևտուրին անունը սուրբ է.— Սէ՛ր Հայաստանի:

Սէր կայ, որ կ'ուտի, կը հանի հոգի,
 Սէրը շատ անգամ գործ է Շալոօքի.
 Սիրոյ մէջ կ'ըլլան խաբուող ու խարող,
 Խարողն է սիրող, սիրողն էլ լափող:

*
* * *

Մայր իմ Հայաստան, չըլլայ վախենաս զանակ սրողից,
 Զըլլայ վախենաս պիղատոսական ձեռը սրբողից,
 Ոչ էլ վախենաս քո ծոցում նստած՝ քեզ զէմ սաղբողից...
 Բայց խիստ զգոյշ կաց, քեզ շատ սիրողից:

ՎԱՐԳ ՈՒ ՓՈՒՇ

Մամզէլ Անժելիքի

Փրանսերէն գիտես հոսիլ,
 Առանց սիրոյ կրնաս մսիլ...
 Քեզ խրատներ ունեմ տալիք.
 — Նախ հայերէն սորվէ՛ խօսիլ.

Օտար լեզուով կը զեզգեզես,
 Սիրոյ երգեր կը հեղեղես,
 Զայնով—ձեռով կին չես, է՛գ ես...
 — Նախ հայերէն պէտք է երգես:

Նոր վէպերի անուն կը տաս,
 Ծուռ ճամբայից շիտակ կ'երթաս,
 Հայերէնի չես առած դաս.
 — Նախ հայերէն հարկ է կարդաս:

Օտար պարբիկը կը գովես,
 Երեքսոսով այր կը թովես...
 Բոլոր մեղքերդ այ կը քուես,
 — Նախ հայ պարերն երբ կաքուես:

Շաա լաւ գիտես մի վերք փորել,
 Հուր նեւերիդ ծայրը սրբել,
 Հրձիգ լինել ու սիրա այրել...
 — Նախ հայերէն սորվէ՛ր գրբել:

Արդ, Հայաստան երբ մըտած էս,
 Կոչու միդ կանչը դատ՞ծ էս,
 Ապագայի մանկատա՞ծ էս,
 Հայ մայր լինել կը մտածե՞ս...

Եղուարդ այդ երեք ֆերթուածներէն ֆաղեց աշխարհագրական, ազգագրական, առեւտրական, կուսակցական, ներքոյական եւ իմաստասիրական տեղեկութիւններ ու ծանօթութիւններ:

Երբ դուրս ելաւ հանգստավայրէն՝ անհանգիստ էր: Կը նմանէր բարձրագոյն ուսումնարանէ մը դուրս ելլող ուսանողի մը, որ թէեւ տիրացած էր ընդհանուր զարգացումի մը, բայց շատ աւելին գիտնալ կը փափափէր, դառնալու համար հմուտ... անժելիֆագիտութեան մէջ:

ԳՈՂՈՒԹԻՒՆԸ ՆՈՐ ԼՈՅՍԵՐՈՒ ՆԵՐՔԵՒ

Պարահանդէսէն շաբաթ մը ետքը, տեղի ունեցած էր Եղուարդի ու Անժելիֆի նշանտուֆը, գետեզերեայ գեղեցիկ ու ընդարձակ սրահի մը մէջ: Կնիֆահայր-կընֆամայր եղած էին Մանուէլեանները, Մարտիրոս ու Սեւան:

Նոյն տեղը, ամիս մը ետքը, սարֆուած էր հարսանիքը, մասնակցութեամբ նուագախումբի մը եւ մօտաւորապէս երկու հարիւր հոգիի ներկայութեամբ, որոնց մէջ կը գտնուէին Եղուարդին կողմէ հրաւիրուած Դաշնակցականներ, ինչպէս նաեւ՝ Դաշնակցութեան համակիրներ: Ամէն ինչ լաւ անցած էր: Անախորժ դէպք մը պատահած չէր, անգամ մը եւս ապացուցանելով, որ ուրախութիւնն ու կերուխումը սուրբ սիւներն

են համերաշխութեան, համաձայնութեան, համակցութեան եւ այլ բաներու:

Միակ անախորժ բանը, *պիւ ֆէին* մէջ, ծանօթ պիւֆէականներու կողմէ կատարուած ու դեռ կատարւող գողութիւնն էր. ան ալ այնքան գաղտնօրէն ու ախորժակով կը շարունակուէր, որ ոչ ոքի անհանգրստութիւն չէր պատճառեր: Գողերը ուտելիք եւ ըմպելիք կը քաֆցընէին իւրացնելով:

Եղուարդ չէր ուզած մնալ միայն ձախակողմեաններու շրջանակին մէջ: Յայտնած էր, թէ պիտի հրաւիրէ Դաշնակցականներ ու համակիրներ: Քանի մը ձախեր վախցած էին, թէ անհանոյ դէպքեր կրնան պատահիլ:

Հարսանիքը, առանց ոգեւորութեան վայրէջքի, տեւած էր մինչեւ արշալոյս:

Պարահանդէսին պիւֆէին հասոյթին կէսէն աւելին կողոպտուած էր Թորոս եւ Ընկերութեան կողմէ: Հակառակ այդ աղաղակող իրողութեան, հագիւ քանի մը հոգի կասկածանքով մեղմօրէն առարկութիւններ բրած էին: Ընդհակառակն, շատեր շնորհաւորութիւններ եւ շնորհակալութիւններ յայտնած էին մասնաւորապէս Թորոսի՛ն եւ ընդհանրապէս Քերոբէին, Տիրատուրին ու Արուսին, անոնց արագ, անքերի գործունէութեան համար:

(Միջանկեալ բտենք, որ Հայաստանաւեր մը, պարահանդէսէն ետքը, իր Հայաստանաւեր մտերիմին քսած էր.— «Թորոս եւ Ընկերութիւնը փառաւորապէս կողոպտեցին պիւֆէն, վստահ եղիր»): Միւսը պատասխանած էր.— «Եթէ իրապէս կողոպտեցին, *Հէյալ* ըլլայ. կը նախընտրեմ կողոպուտ մը, քան թէ ներկաներուն դժգոհութիւնները: Ամէն ոք գոհ էր պիւֆէի մեր ընկերներէն»):

Գոհ էին նաեւ գողերը: Միայն Թորոսն էր, որ չարտասանուած դժգոհութիւն մը ունէր: Կողոպտուած գումարը չորս հոգիի մէջ բաժնուած էր հաւասարապէս: Ինք կը սպասէր, որ իր ընկերները իրեն գումար մը աւելի տային, իբրեւ պետ, իբրեւ առիւծի բաժին, քանի որ կողոպուտը ինք հնարած էր, գործադրութեան միջոցներն ալ ինք ցոյց տուած էր: Ատկէ ալ գատ, պիւֆէն իրեն յանձնուած էր, եւ ինքն էր, որ երեք ընկերներ գործակից նշանակած էր: Անշուշտ առանց իրեն ալ պիտի ըլլար գողութիւնը, սակայն, ոչ այդքան շատ, եւ բաժանումը պիտի ըլլար հաւասար: Թորոս որոշած էր այլ

առիթով մը կողոպտել նաեւ իր բաժնեկիցները: Այդ առիթը չուշացաւ, Եղուարդին նշանտուփով ու հարսանիփով:

Անգամ մը եւս գնահատելով Թորոս եւ Ընկերութեան պիւֆէի կանոնաւոր կազմակերպումը, խնդրած էին, որ նշանտուփի ու հարսանիփի պիւֆէի բեռը բարեհանին վերցնել չորս ընկերները:

Թորոս նպարեղէնի մեծ ու օտար վաճառատունէ մը առած էր, մեծաքանակի գնով, ազանդերներ, խոզեղէններ ու ազգի-ազգի բմպելի: Ամէն բանէ գնած էր ահագին քանակութեամբ: Առած էր պայմանաւոր կերպով, որ էր չգործածուածները վերադարձնել:

Ապրանքները նախ փոխադրել տուած էր Տիրատուրին. ու Արուսին յարկաբաժինը, ուր մնացին իւրացուած բաւական ուտելիք եւ բմպելի:

Ատկէ գատ, գնումը, գիները խարդախելով, ինչպէս նաեւ ետ տրուած ապրանքներուն փոխարժէքը գրպանելով, Թորոս ապահոված էր մեծ գումար մը, իր ընկերներուն բաժինէն խորելով, իբրեւ իրաւունք առիւծի:

Հարսանիփի ընթացքին, ընկեր Թորոս արժանացաւ բացառիկ գնահատութեան: Գինով Հայաստանասէր մը բաժակ առաջարկելով՝ ըսաւ.

— Եթէ մեր սիրելի ընկեր Թորոսը Մոսկուա ըլլար, հորհրդային Միութիւնը Միկոյեան մը աւելի կ'ունենար:

Այդ բոլորէն գատ, Թորոս, Քերոբէ, Տիրատուր եւ Արուս վարձատրուեցան նիւթապէս, իրենց ծանր աշխատանքին համար, թէ՛ Եղուարդին, թէ՛ Գեղամին կողմէ:

Թորոս յանախ կ'ըսէր.

— Աս ընկեր Եղուարդը իր ոտներով բախտ բերաւ մեզի:

Արուս կ'աւելցնէր.

— Ասկէ ետքը բերելիքներուն նայինք:

Հարսանիփին յաջորդ Կիրակի կէսօրին, Տիրատուրին տանը մէջ, իր քրոջ՝ ընկերուհի Արուսին խնամփով, սարքուած էր սեղան մը, որ կատարելագործումն էր կերուխումի:

Բացի բաժակներէն, պնակներէն ու սպասի վերաբերեալ առարկաներէն, ինչպէս նաեւ սեղանէն ու սփռոցէն, բոլոր ուտելիքները եւ խմելիքները հարսանիփէն աւար մնացածներուն մէկ մասն էին: Կային տակաւին քանի մը սեղան սարքելու չափ ապրանքներ:

Իրարու կը ժպտէին մասնաւորապէս շիշերը օդիի, բէրնոյի, փասքիսի, փորթոյի ու ազնուական գինիներու:

Սեղանակիցներն էին Թորոս, Քերոբէ, Տիրատուր եւ Արուս, որոնք ժամերով կերան, խմեցին ու ծխեցին: Չորսն ալ Փարիզ ֆազաէն մէյ-մէկ թաղ ծախած էին, երբ սկսան խօսիլ գողութեան մասին: Այդ նիւթին վրայ գրոյց մը բացուելուն պատճառ եղաւ Տիրատուր, երբ ըսաւ.

— Վերջիվերջոյ, մեր ըրածը գողութիւն էր:

ԹՈՐՈՍ.— Մեր ըրածը լայնացում է: Երբ աշխատելով հանդերձ՝ նեղը կը գտնուիս, գողութիւնով կը լայնցնես նեղութիւնդ: Եւ գողութիւնը ոնրագործութիւն չէ, որ խղնի խայթ ունենաս: Գողութիւն չենք ըրած գործաւորներէ: Արհեստով գողեր չենք: Գողութիւնը գործ չենք ըրած: Ըսուած է.— «Ամէն մարդ իր գործին գողն է»: Մենք գործով գող չենք, հապա գործին մէջ գող ենք: Անհուն է տարբերութիւնը: Տակաւին ուրիշ բան մենք մեր գողցածը չենք մսխեր խաղամուլութիւնով կամ ուրիշ մուլութիւնով: Մենք կ'ապրուինք ու կ'ապրինք: Մենք պատուաւոր գողեր ենք:

(Ընկերուհի Արուս ծուռ-ծուռ նայեցաւ Եղբորը):

ՔԵՐՈԲԷ.— Մեր ըրածը գողութիւն է եղե՛ր: Մեր ըրածը ընտանի, ընդունելի իւրացում մըն է: Միթէ ուսանողները, աշակերտները կողոպտա՞ծ կ'ըլլան իրենց փրոֆեսէօրները, ուսուցիչները՝ իւրացնելով անոնց գիտութիւնը, կարողութիւնը: Միթէ աշակերտները կողոպտա՞ծ կ'ըլլան իրենց արհեստաւոր վարպետները, իւրացնելով անոնց գիտցածը ու կրցածը, կատարած գործը:

ԱՐՈՒՍ.— Մարդ խղմտանքէ գուրկ ըլլալու է, այդքան մը իւրացումէ զրկելու համար իր անձը: Մարդ ինքզինքին հանդէպ անխիղճ, անողորմ ըլլալու է, առիթէն չօգտուելով՝ սուրբ մնալու համար: Մենք մեր գործը կը շարունակենք պարկէշտ յարատեւութիւնով:

ՔԵՐՈԲԷ.— Անկասկած: Ապուշ արտայայտութիւններու պէտք չունինք: Տիրատուր, ուրիշ անգամ այդքան անարդար ելոյթ չունենաս:

ՏԻՐԱՏՈՒՐ.— Սիրելի բնկերներ, ես չընենք չքսի, ինչո՞ւ ըրինք չքսի, ա՛յլ ընելու չէ ալ չքսի: Ես մեր ըրածին անունը տուի: Միայն սխալ բառ գործածեցի:

ԱՐՈՒՍ.— Գործին կնփահա՞յրը ըլլալ ուզեցիր: Մենք ֆեզի կնփահայր չնշանակեցինք: Օր մը, եթէ կնփահայր ալ ընենք ֆեզ, երէխային անունը մե՛նք կ'որոշենք:

ԹՈՐՈՍ.— Վերցուցէ՛ք գողութիւնը աշխարհէս, ու տեսէ՛ք, թէ ի՛նչ կ'ըլլայ հետեւանքը: Եւրոպայի ու Ամերիկայի մէջ, տարեկան յիսուն միլիոն հոգի կը մեռնին անօթութենէ: Չմեռնողներն ալ կ'ըլլան մահամերձներ: Եւրոպացիներն ալ, ամերիկացիներն ալ, հնդկաստանցիներուն պէս կը մնան անօթի:

ՔԵՐՈՒՅԷ.— Բացարձակապէս:

ԱՐՈՒՍ.— Դրամատիրական երկիրներու մէջ, պէտք է գնահատել ու փաջալերել գողութիւնը: Իսկ մեր ըրածը փշրանքի գողութիւն է, եթէ գողութիւն է: Ուրիշներ արջառներ, հօտեր, կարաւաններ կը կլկեն:

ԹՈՐՈՍ.— Ո՛չ մարդ շահագործեցիմք, ոչ ալ մէկուն փսակը թոցուցիմք: Մենք մեր արդար բաժինին մէկ մասը առինք: Եւ եթէ այսօրէն ալ չընէիմք, այն ատեն է, որ գող կ'ըլլայիմք, քանի որ մեր արդար բաժինէն մենք մեզ գրկած եւ ունեցողին ձգած կ'ըլլայիմք: Կը տեսնէ՞ք, որ ինչքան պատուաւոր ենք իբրեւ գող: Եթէ գող պիտի համարուիմք անարդարօրէն:

ԱՐՈՒՍ.— Մեր գողութիւնը գողութեան դէմ է:

ՏԻՐԱՏՈՒՐ.— Ընկերներ, ներողամիտ եղէ՛ք. բան մըն էր ըսի, առանց խորապէս մտածելու:

ԱՐՈՒՍ.— Ասկէ ետքը, նախ խորհէ՛, ապա խօսէ՛, երբ մա՛նուանդ՝ մեզի պէս արդար ու անիրաւուածներու մասին կը խօսիս:

ԹՈՐՈՍ.— Այսօր գողութիւն, շատ աւելին ալ, ամէն ժամ կը պատահի Խ. Միութեան մէջ անգամ: Եւ ժամական միլիոն անգամ ու շատ աւելի:

ԱՐՈՒՍ.— Ատ ըսածիդ չեմ հաւատար:

ԹՈՐՈՍ.— Աս վերջերս, Հայաստանի մէջ, գողութեան դէպքերը նոյնիսկ բազմացած են:

ԱՐՈՒՍ.— Ատ լուրը ուրկէ՞ առիր: Հայաստանի մէջ գողութիւն կ'ըլլա՞յ...

ԹՈՐՈՍ.— Լուրերը կ'առնեմ Երեւանի թերթերէն:

ԱՐՈՒՍ.— Սուտ լուրեր են:

ԹՈՐՈՍ.— Հայաստանի թերթերը սուտ կը գրե՞ն: Ե՞րբ պատահած է ատանկ բան:

ԱՐՈՒՍ.— Եթէ սուտ չեն, սխալ են:

ԹՈՐՈՍ.— Դուն օր մը օրանց Հայաստանի թերթերը կարդացած չես:

ԱՐՈՒՍ.— Կարդամ-չկարդամ: Միայն վստահ գիտեմ, որ այդ լուրերը սխալ են:

ԹՈՐՈՍ.— Ուրեմն միշտ կը սխալի՞նք Հայաստանի թերթերը:

ԱՐՈՒՍ.— Աչֆովս տեսնամ, նորէ՛ն չեմ հաւատար:

ԹՈՐՈՍ.— Ի՞նչը աչֆովդ տեսնաս. լո՞ւրը, թէ գողութիւնը:

ԱՐՈՒՍ.— Լուրը կարգամ, չեմ հաւատար: Գողութիւնը աչֆերովս տեսնամ, նորէն ու մի՛շտ չեմ հաւատար:

ԹՈՐՈՍ.— Հապա ինչի՞ կը հաւատաս...

ԱՐՈՒՍ.— Կը հաւատամ, որ Հայաստանս հորհրդային է, ու հորհրդային Երկրի մէջ գողութիւն չի կրնար ըլլալ:

ԹՈՐՈՍ.— հիմա ըսել պիտի տաս...

ԱՐՈՒՍ.— Ի՞նչ բան...

ԹՈՐՈՍ.— Ամբողջ Խ. Միութեան մէջ, ամէն մէկ աշխատաւոր կը գողնայ իր աշխատած տեղէն: Եւ եթէ չգողնայ, չի կրնար ապրիլ: Սա ալ ըսեմ, որ Խ. Միութեան մէջ սեփականութիւն չկայ: հորքին եթէ նայինք, ամէն ինչ ամէնուն կը պատկանի: Անանկ որ, գողութիւն չկայ: Առանց արտօնութեան առնել կայ: Ամէն մարդ կ'առնէ ամէնուն պատկանող ապրանքներէն: Եւ դուրսը, փոխանակութիւններ կ'ընեն: Ատ գողութիւն չէ: Գողութիւն չէ, քաւ լիցի:

ԱՐՈՒՍ.— Հապա ի՞նչ է:

ԹՈՐՈՍ.— Սոցիալիզմ:

ԱՐՈՒՍ.— Ուրեմն կանկրատները մէյ-մէկ մեծ սոցիալիստներ են:

ԹՈՐՈՍ.— Երբե՛ք: Թէեւ կանկրատները կը կողոպտեն դրամատերները, բայց չեն դադրիր կողոպտիչներ ըլլալէ: Նախ՝ անոնք կը կողոպտեն առանց գաղափարականութեան: Եւ երկրորդ՝ խորհրդային քաղաքացին կամ գիւղացին կ'առնէ իր արտադրածէն, արտադրելիքէն: Գաղափարական ունեցողին է գողնալու իրաւունքը:

ԱՐՈՒՍ.— Լա՛ւ. հապա գրասենեակի մէջ աշխատող պետական պաշտօնեան ի՞նչ կը գողնայ ապրուելու համար:

ԹՈՐՈՍ.— Է՛ն առաջ «փափախ» կ'առնէ, այսինքն՝ կրծօն: Ատկէ գատ, կ'առնէ մատիտ, գրիչ, մելան, թուղթ, պահարան, ծծուն թուղթ, քանակ, աթոռ, գրասեղան, ապակի պատուհանի: Չմեռն ալ կը գողնայ փայտ կամ ածուխ:

ԱՐՈՒՍ.— Չըսե՞ս, որ հոն ալ հոստեղի պէս է:

ԹՈՐՈՍ.— Կ'աշխատին, որ հոստեղի պէս ըլլայ, այսինքն՝ այդ աստիճան չըլլայ առնել-տանիլը:

ՔԵՐՈՐԷՆ.— Ընկերներ, կր ներէ՛ք, սակայն շատ երկարեցի՛ք այդ խնդիրը: Մենք մեր անմիջական հարցերով զբաղինք: Ըսելի՛ք ունի՛մ: Շիտակը խօսելով, ես կը վախնայի, որ պարահանդէսին յանձնախումբը պիտի չկլլէ մեր ցոյց տուած հասոյթը, ու խնդիր պիտի յարուցանէ, ամբաստանելով մեզ իբրեւ գող:

ՏԻՐԱՏՈՒՐ.— Այդ պատճառով ես բաւական հաւկիթ ածեցի:

ԱՐՈՒՍ.— Ափոք մը, որ հաւկիթ կ'ածէ: Ատանկ բան մտփէս անգամ չանցուցի:

ԹՈՐՈՍ.— Պարահանդէսը յաջողութիւն մըն էր, հաւասար էր յաղթանակի: Յանձնախումբին անդամները պարահանդէսին յաջողութիւնը իւրացուցին, այսինքն՝ անոնք պարահանդէսը բարոյապէս կողոպտեցին, մենք ալ պիւֆէն նիւթապէս կողոպտեցինք: Եւ քանի որ բարոյականը բարձր է նիւթականէն, ուրեմն մենէ շատ աւելի կողոպտեցին յանձնախումբին անդամները: Գողը գողին գող կ'ըսէ՞:

ՏԻՐԱՏՈՒՐ.— Շիտակը ես աւելի վախցայ՝ նշանտուփն ու հարսանիփն մեր ըրածէն, որ աւելի բացէ ի բաց բացարձակ ու համարձակ էր:

ԱՐՈՒՍ.— Վախկոտը վատ է: Ա՛հ, Աստուած իմ, քաջ եղբայր մը չունեցայ, գոնէ քաջ ամուսին մը ունենայի: Գողութիւնը քաջութիւն ըսել է:

ՔԵՐՈՐԷՆ.— Իսկ ես այդ խնդիրէն բնաւ չվախցայ, որովհետեւ Գեղամը կողոպտուելու մէջ վարժ է, իսկ ընկեր Եղուարդը այնքան ասպետական է, որ չկողոպտուիլը նախատուելու հաւասար կը համարէ:

ԹՈՐՈՍ.— Ընկերներ, կը մոռնա՛ք էականն ու կենսականը: Ընկեր Եղուարդը անանկ աղջիկ մը առաւ, այսինքն՝ իւրացուց, կողոպտեց, որ ծանրութեամբը գոհար է: Իսկ Անժելիփն ալ անանկ երիտասարդ մը կողոպտեց, անանկ երիտասարդի մը տիրացաւ, որ իր ծանրութեան հարիւր անգամը տոլար է: Երկուփն ալ մեծ կողոպտիչներ ըլլալով, մեր համեստ կողոպուտը մատերնի՞ն պիտի փաթթէին: Եղուարդի պէս մէկը եթէ չկողոպտէինք, մուրացկանի տեղ դրած կ'ըլլայինք գինեփը:

ԱՐՈՒՍ.— Ընկեր Թորոս, երբեմն սուտ ու սխալ բաներ կ'ըսես թէւ, բայց անանկ տրամաբանական հիմերու վրայ կը դնես ըսածներդ, որ մարդ կը հիանայ վրադ: Մե՛ղք որ իրաւաբանութեան չես հետեւած:

ԹՈՐՈՍ.— Թո՛ղ իրաւաբանութիւնը ինծի հետեւի: Ընկերներ, որպէսզի մարդ ասանկ պատուաւոր

սեղանի մը շուրջը նստի, ու գաղափարակից պատուական ընկերներու հետ քննարկէ, պէտք է անպատիւ գործեր կատարած ըլլայ: Այսպէս է աշխարհի օրէնքը:

ԱՐՈՒՍ.— Ինչպէս ըլլար գիտե՞ք. պէտք էր, որ պիւֆէ կազմակերպելու եւ վարելու մենաշնորհը ունենայինք:

ՏԻՐԱՏՈՒՐ.— Այսինքն՝ գողնալու մենաշնորհը:

ՔԵՐՈՒՅԷ.— Գողութիւնը ամէնուն ալ մենաշնորհն է:

ԱՐՈՒՍ.— Բան մը, որ ամէնուն կողմէ կը գործըլի, կը դադրի մենաշնորհ ըլլալէ:

ԹՈՐՈՍ.— Թող ամէն մարդ անանկ կարծէ, թէ գողնալու մենաշնորհը ի՛րն է, որպէսզի անոր համեմատ գործէ:

ՏԻՐԱՏՈՒՐ.— Մօտերս գործ պիտի ունենա՞նք:

ԹՈՐՈՍ.— Քանի մը առաջարկներ եղան: Ես ծանրէն ծախեցի մեզ: Առարկեցի, թէ գործը յոգնեցուցիչ է, թէ՛ ընկերներս դժգոհ են, ու կ'ըսեն.— «Քիչ մըն ալ թո՛ղ ուրիշները գողութիւն ընեն»: Բայց, ի վերջոյ, խոստացայ համոզել ձեզ, որ բարեհասիք պատրաստուի ճոր կողոպուտի:

ԱՐՈՒՍ.— Ընկեր Թորոս, չէ՞ք ըլլալու արժանի ես:

ՔԵՐՈՒՅԷ.— Արդէն մեր շէֆն է:

ԱՐՈՒՍ.— Սանկ քանի մը հարիւր հոգիի շէֆը:

ՏԻՐԱՏՈՒՐ.— Ըսել կ'ուզես մեծ աւագակախումբի՞ մը շէֆը:

ԱՐՈՒՍ.— Դուն ալ գողէ ու աւագակէ գատ, ուրիշ բան տեսած չունիս:

ԹՈՐՈՍ.— Կը կարծէք, թէ դիւրի՞նք գործ է աւագակապետ ըլլալը: Մեր նախկին հայրիկ Ստալինը աւագակութիւնով սկսած է գործի: Եւ եղաւ կարմիր կայսր: Եթէ աւագակութիւնով սկսած չըլլար, Ռոմանոֆներու գահին չէր կրնար տէր ըլլալ:

ՔԵՐՈՒՅԷ.— Շատ միշտ է:

ՏԻՐԱՏՈՒՐ.— Ուրեմն աւագակներուն կենացը:

ԹՈՐՈՍ.— Խմենք, ընկերներ, գաղափարական աւագակապետներուն յիշատակին, ողջերուն ալ կեանքին: *(Կը խմեն):*

ԱՐՈՒՍ.— Ամէն տեսակ գործի մէջ գաղափարական մը ըլլալու է:

ԹՈՐՈՍ.— Գաղափարը կը մաքրագործէ, կը սրբագործէ ամէն ինչ: Երբ պուրժուաները աւագակու-

թիւն կ'ընեն, խոզանալու համար է, որովհետեւ գաղափարական չունին: Իսկ երբ մեզի պէս պրոլետարներ ընեն գաղափարականով, մարդանալու համար է, մարդկութեան համար է:

(Յանկարծ կը հնչէ յարկաբաժինին զանգակը: Կը ցնցուին չորսն ալ: Իրարու կը նային այրերը՝ հարցական):

ԹՈՐՈՍ.— Ընկերուհի Արուս, բա՛ց դուռը: Եկողին համեմատ, կը հնարեմ սուտ մը: Դու՛ք ալ կը հետեւիք ինձի: *ԿաՖ* մը չընէք...

ԱՐՈՒՍ.— Ես գիտեմ, թէ եկողը ո՛վ է...

(Կը բացուի դուռը. կ'երեւի Մարտիրոս):

ՄԱՐՏԻՐՈՍ.— Բարեւ, ընկերներ: Բայց աս ի՞նչ է. ասանկ պատուական սեղան, իսկ դու՛ք կը նմանիք սգաւորներու:

ԹՈՐՈՍ.— Բարի եկար, ընկեր Մարտիրոս: Նըստէ՛: Մեր լուսեան պատճառը յոգնութիւնն է: Կէսօրէն ի վեր անդադար կ'ուտենք, կը խմենք, կը խօսինք:

ՄԱՐՏԻՐՈՍ (նստելով).— Մարդ ուտելով ու խմելով ալ կը յոգնի, նստելով-հանգչելով ալ կը յոգնի: Ամէն ինչ աշխատանք է, որով՝ յոգնեցուցիչ:

ԹՈՐՈՍ.— Ինչո՞ւ կանուխ չեկար:

ՄԱՐՏԻՐՈՍ.— Արգելի ունեցայ: Բայց հոգիով ձեզի հետ էի:

ԱՐՈՒՍ.— Ընկերուհի Սեւանը չկրցա՞ւ կարգարարութիւն մը ընել, որ ինքն ալ գար: Ես հրաւիրեցի ընկերուհին ալ, բայց ըսաւ, թէ չի կարծեր, որ կարենայ ներկայ ըլլալ: Այդ ալ մոռցայ հազորդել...

(Գաղտնօրէն ու խէթ-խէթ կը նային Արուսին):

ՄԱՐՏԻՐՈՍ.— Կինս խնդրեց, որ իր կողմէ շնորհակալութիւն յայտնեմ: Ներողութիւն ալ կը խնդրէ, չկարենալ գալուն համար:

ԹՈՐՈՍ.— Ընկեր Մարտիրոս, շիտակը շատ ուրախ եմ, որ սա միջոցիս, տիկինդ եւ դուն իրարու մօտեցած էք սիրով:

ՄԱՐՏԻՐՈՍ.— Մարդոցմէ շատերը սկսած են նմանիլ ինքնաշարժ կառփի. երբ իրարու մօտենան, մտերմութենէ աւելի, յառաջ կու գայ բախումը, երբ մա՛նաւանդ մէկը միւսէն առաջ անցնիլ կ'ուզէ: Մարդիկ շատ մօտենալու չեն, իրարու դպելու աստիճան: Մարդու մը եւ կնոջ մը մէջ մա՛նաւանդ միշտ պարպութիւն մը գտնուելու է: Է՛, ո՞ւր է բաժակս...

ԱՐՈՒՍ.— Ահա՛, ընկեր Մարտիրոս:

ՄԱՐՏԻՐՈՍ.— Լեցո՛ւր, տեսնեմ: Բայց աս ի՞նչ է, ընկերներ, գինիին շիշերը նոյն տեսակներն են... հար-

սանիֆի շիշերուն եղբայրներն են աս շիշերն ալ: Տեսա-
ծիս համաձայն, ուտելիքներն ալ նոյնն են:

(Զորսերը իրարու կը նային):

ԹՈՐՈՍ.— Պիւֆէին գնումները ըրած վանառա-
տունէս առի ասոնք ալ, մասնաւոր գեղչով:

ՄԱՐՏԻՐՈՍ.— Այդպէ՞ս է...: Ուրեմն, ընկերներ,
կը յայտարարեմ, որ դուք չորսդ ալ տխմարներ էք:

ԹՈՐՈՍ.— Եւ ինչո՞ւ...

ՄԱՐՏԻՐՈՍ.— Այդքան առատութեան մէջ, փո-
խանակ քանի մը տասնեակ շիշ բնտիր գինի եւ տա-
սը-քսան քիլօ առաջնակարգ ուտելիքներ մէկ կողմ
դնելու, երթալ ու խանութէն գնել, տխմարութեան ամէ-
նէն յետին տեսակն է: Ըսի ու կը կրկնեմ.— դուք չորսդ
ալ տխմարներ էք:

ԹՈՐՈՍ.— Ընկեր Մարտիրոս, կարծածիդ չափ
տխմար չեմք:

ՄԱՐՏԻՐՈՍ.— Ուրեմն՝ անկեղծօրէն ուրախ եմ,
եթէ իրապէս տխմարներ չէք: Բայց այդքանն ալ բաւա-
կան չէ տխմար չըլլալու համար: Ես նորէն կ'ըսեմ, որ
դուք տխմարներ էք:

ՔԵՐՈՒՔ.— Այս անգամ ինչո՞ւ...

ՄԱՐՏԻՐՈՍ.— Ուրիշներ ձեր տեղը եթէ ըլլային,
ո՛չ միայն ուտելիք ու խմելիք մէկ կողմ կը դնէին, հապա
մէջ-մէկ կ'ըսէին շահ ալ կ'ապահովէին:

(Առաջիկայ):

ՏԻՐԱՏՈՒՐ.— Բայց ասիկա գողութիւն չէ՞ր ըլ-
լար...

ՄԱՐՏԻՐՈՍ.— Գողութի՞ւն...: Եթէ ըսածս չըրիք,
ահա ա՛յդ է գողութիւնը: Աւելի նիշդը՝ մարդ երբ չի
կողոպտեր, կողոպտուած է:

ՏԻՐԱՏՈՒՐ.— Ուրեմն գողութիւն չընելն է գո-
ղութիւնը: Մարդ ամէն օր նոր բան մը կը սորվի:

ՄԱՐՏԻՐՈՍ.— Ճիշդ հաշիւ բռնել, մաքուր հաշիւ
ներկայացնելը տխմարաբար կողոպտուիլ է: Եթէ գողեր
չէք, գողերէն շատ վատ արարածներ էք: Հաշիւ՝ կը նշա-
նակէ մէկ կողմին խաբուիլը: Տխմարները կը խաբուին:

ԱՐՈՒՍ.— Ընկեր Թորոսին ըսածք, այս անգամ
ալ ե՛ս կ'ըսեմ.— քու կարծածիդ չափ տխմարներ չեմք:

ՄԱՐՏԻՐՈՍ.— Այդպէ՞ս է... Կրկին ուրախ եմ, ու
կը խմեմ ձեր չորսին կենացը:

(Կը խմեն):

ԹՈՐՈՍ.— Ընկեր Մարտիրոսը իրական ընկեր է,
մա՛րդ է, եփած մարդ:

ՄԱՐՏԻՐՈՍ.— Նոյնիսկ այրած մարդ է: Եւ այրած մարդը ընտրելագոյն ըմպելի մը կ'ուզէ, իր հոգիին այրուցքները սպիացնելու համար: Այս սեղանին վրայ չեմ տեսներ սպիացնող սպեղանի հեղուկը: Ես ձեզի երկու անգամ ըսի, որ տխմարներ էք: Դուք հերքեցիք: Կը հաւատամ հերքումներուն: Հիմա, երրորդ անգամ ըլլալով կ'ըսեմ, թէ տխմարներ էք, եթէ ընելիք բան մըն ալ ունէիք, ու այդ բանը չէք ըրած:

ԹՈՐՈՍ.— Ի՞նչ է տեսնենք ատիկա...

ՄԱՐՏԻՐՈՍ.— Քանի մը շիշ շամփայն մէկ կողմ դրի՞ք...

(Բողորն ալ կը խնդան ձայնաւոր):

ԹՈՐՈՍ — *(Հրեղէն Հպարտութեամբ).*— Քսանչորս շիշ շամփայն: Եւ տակաւին մէկ հատը անգամ բացուած չէ:

ՏԻՐԱՏՈՒՐ.— Ճիշդ յիսունինը շիշ շամփայն աւելցած էր, բայց միւսները ետ տուինք, ու դրամը առինք:

ՄԱՐՏԻՐՈՍ.— Ընտիր, ընտանի ընկերներ, դուք տխմարներ չըլլալէ գատ, հանճարներ ըլլալնիդ հաստատեցիք:

ԹՈՐՈՍ.— Ընկեր Մարտիրոս, անշուշտ մեր մէջ կը մնայ:

ՄԱՐՏԻՐՈՍ.— Շամփանեաները... Հարկաւ մեր մէջ պիտի մնան, քանի որ ուտելուն ու խմելուն ես ալ պիտի ըլլամ մասնակից, որով՝ մեղսակից: Իսկ եթէ ձեր հանճարներ ըլլալն է, որ կը փափաքիս մեր մէջ մնայ, ան ալ գաղտնի կը պահեմ նախանձէս: Կ'ողջունեմ ձեզ, ընկեր հանճարներ...

ԱՐՈՒՍ.— Հանճարապետը ընկեր Թորոսն է:

ՄԱՐՏԻՐՈՍ.— Ըսելու պէտք չկայ: Դեմքէն յայտնի է սոսկալի ու յարգելի աւագակապետ մը ըլլալը: Պարահանդէսին օրը թեւաւոր դելի մը կը նմանէր: ամէն տեղ էր, աչքը ամէնուն վրայ էր, ընկեր Թորոսը հագար ստանաներու սեղանի մը կընայ դեկավարը ըլլալ: Կերուխումագիտութեան մէջ մասնագիտացած, հմտացած ու կատարելագործուած է: Եւ համեստ է:

ԹՈՐՈՍ.— Մենք ո՛չ աս ենք, ոչ ալ ան ենք: Հայաստանաւորներ ենք: Հայաստանը չսիրող հայերն ալ գոնէ մեզի սիրելու են: Ընկերներ, գինիի վերջին բաժակները խմենք մեր փայլուն ապագային համար, հոգ չէ թէ ան Արեւմուտքէն, Ամերիկայէն պիտի գայ: Մեր ապագային, որուն, հաւատացէ՛ք ընկերներ, ես ոտնաձայնը կ'առնեմ:

ՄԱՐՏԻՐՈՍ.— Ինչ հիանալի խոդութիւն:

(Կը խմեն):

ԹՈՐՈՍ.— Ընկերուի Արուս, քանի մը շիշ շամփայն բեր, որպէսզի մեր պատուական ընկերը նախ հայեացքներով համբուրէ շիշերը, ապա ալ շրթունքներով համբուրէ պատուական պարունակութիւնները:

(Արուս տեղէն կը թռչի ու կը մտնէ խոհանոց: Քիչ ետքը, յաղթականօրէն կը դնէ սեղանին վրայ երկու շիշ շամփայն, երկու շիշ եւս, ու մէկ շիշ ալ. մէկ շիշ մարդ գլուխ: Ծափահարութիւն: Քերորէ կը բանայ առաջին շիշը հիւլէական պայթիւնով: Արուս բաժակները փրփրակուտակ կը լեցնէ: Մարտիրոս կ'ելլէ ստեղծ):

ՄԱՐՏԻՐՈՍ (կը խօսի հանդիսաւոր).— Ընկերներ, խոնարհաբար կը խոստովանիմ, որ ունիք հանճար ու նաշակ, եւ ըմբռնած էք կեանքի իմաստը, որ պարզապէս ապրիլն է, այսինքն՝ վայելելը, անշուշտ միշտ գաղափարական մթնոլորտի մէջ, շրջապատուած գաղափարակիցներով: Կը մտաբեր, որ ձեր սեղանը իր սեղանակիցներով կատարելագործուի: Ձեզի կը պակսին երկու ընկերուիներ: Կը յուսամ, որ յաջորդ անգամ լրացուցած կ'ըլլաք ձեր կազմը, որպէսզի խնայելով ըլլայ աւելի ոգեւոր, միշտ գաղափարական մթնոլորտի մէջ: Ես ալ միշտ կ'ըլլամ ներկայ: Այսուհետեւ ամէն անգամ, որ պիւֆէ բանեցնէք, չեմ ըսեր, թէ մատս մէջն է, ո՛չ, այդքան իրաւունք չունիմ, բայց անպատճառ շրթունքս մէջն է, աւելի լաւ բացատրելով՝ ըսել կ'ուզեմ, որ շամփայնի ծարաւս յագեցնէք: Ուրեմն ձեր պիւֆէ բանեցրնելուն յաջորդ Կիրակիները ձեր հիւրն եմ: Այս խնայելու ալ անտարակոյս քանի մը Կիրակի պիտի ըլլայ շարունակելի, յաւիտ գաղափարական մթնոլորտի մէջ:

ԹՈՐՈՍ.— Ընկեր Մարտիրոս, ներողութիւն ընդմիջելուս: Մեր խնայելուներուն միշտ ներկայ պիտի ըլլաս, խտացնելու համար գաղափարական մթնոլորտը: Մեր խնայելուներուն ներկայ պիտի ըլլաս, իբրեւ մեր գանձերուն, մեր գաղափարներուն, մեր գաղտնիքներուն աւագ ասպետը: Համաձայն էք, ընկերներ:

ԲՈՂՈՐԸ.— Այո՛, այո՛, անշուշտ... Սիրով եւ հանոյքով... Մեր գաղտնիքներուն գաղտնապահ ասպետը...

ՄԱՐՏԻՐՈՍ (միշտ հանդիսաւոր, յուզուածի պէս).— Ընկերներ, երկու անգամ ու խորապէս շնորհակալ եմ: Նախ՝ հրաւերին համար, իսկ երկրորդ՝ վերջապէս,

գիս բանի մը ասպետը ընելնուդ համար: Եւ քանի որ ասպետ եմ, ուրեմն ազնուական եմ, եւ քանի որ ազնուական եմ, շամփայն պէտք է ըմպեմ: *Նոպլէս օպլիթ*: Հանճարաւոր ու նաշակաւոր ընկերներ, արդ, թոյլ տուէք, որ բաժակ առաջարկեմ: Խ. Միութեան մէջ կը ջանան ստեղծել *նոր մարդը*: Կուր չունին, որ *նոր մարդը* մարմնաւորուած է արդէն Խ. Միութեան գաղափարական մթնոլորտներուն մէջ: Թէ՛ Խ. Միութեան, թէ՛ անոր մաս կազմող Հայաստանի, մինչեւ անգամ արտասահմանի հայաստանաւերներու յառաջդիմական բանակին մէջ յայտնուած է: Եւ ընկերներ, դո՛ւք էք *նոր մարդը*, *նոր հայր*, սոցիալիստաշէն *նոր անհատը*, որ գիտակից է, գիտէ չշահագործուիլ, չկողոպտուիլ, այլ, բնդհակառակն, անշուշտ գաղափարանուէր գործունէութիւնով: Սոցիալիզմին նպատակն է աշխատաւորները գերծ կացուցանել կեղեքումէ: Մենք՝ Հայերս, դարերով յարատեւօրէն կեղեքուած ենք: Արդ, ծնած են *նոր հայեր*, որոնք կ'առնեն իրենց արդար բաժինը, փոխանակ շահագործըւելու: Այս այսպէս է հիմա՝ թէ՛ հայրենիքին մէջ, թէ՛ մասամբ անկէ դուրս: Ամբողջ հոգիովս կը մաղթեմ, որ մեր սիրելի հայրենիքը, որ չարաչար կողոպտուած է, ոչ թէ կողոպտիչ դառնայ, այլ գոնէ՛ տիրանայ իրմէ կողոպտուած հողերուն՝ թէ՛ ներսէն, թէ՛ դուրսէն: Էն առաջ տիրանայ Արարատին, Անիին, Արտահանին, Կարսին ու Նախիջեւանին ու Ղարաբաղին, եւայլն, եւայլն, եւայլն: Ընկերներ: Ձեր կեանքին, ու Հայաստանի մեծութեան, միացման եւ յաւերժութեան: Դուք *նոր հայեր*դ պիտի ըլլաք իրական թէ՛ Համայնավարները, թէ՛ Հայաստանաւերները, թէ՛ Հնչակեանները, թէ՛ Ռամկավարները, թէ՛ միաժամանակ Դաշնակցականները: Միացեալ, մեծ Հայաստան, միացեալ *նոր հայեր*ով: Դէպի գո՛րծ, գաղափարական մթնոլորտի մէջ: Շա՛տ ապրիք: Եւ ըլլաք մեր կուսակցութիւններուն խառնուրդը եւ խտացումը: Ես վերջացուցի:

(Ներկաները կը շուարին: Բայց վերջապէս, պահ մը զիրար քննելէ ետքը, նախ բուռն կերպով կը ծափահարեն, ապա կ'ըմպեն ցմրուր):

Մարտիրոս մտածեց.

— Այս նառով բռնեցի չորս շանաճուկ:

Մարտիրոս չորս «հանճար»ներուն սխրագործութիւններուն տեղեկացաւ իւրայատուկ հնարքներով գանձնախոստովանեցնելով, բայց ոչ թէ մատնելու կամ բամբասելու համար, այլ արդէն ունեցած կարկառուն

կասկածը հաստատելու եւ անոնց անպարկեշտութեան աստիճանաչափը ստուգելու համար:

Մարտիրոս հանոյ՛ կր զգար իր «րնկեր»ներուն փթէն բռնելով ու ֆաշելով:

Մինչեւ կէս գիշեր շարունակուեցաւ խննոյ՛քը, որուն անունը, Մարտիրոսի կնփահայրութեամբ, եղաւ «Թերթօն խննոյ՛ք», քանի որ շարունակելի էր Կիրակիէ Կիրակի:

Խումբին ցրուելու պահուն, Արուս արբեցած բացագանչեց.

— Խմենք բաժակ մըն ալ կիներուն կեանքին: Ընդհանրապէս մեր Հայաստանասէր րնկերուհիներուն եւ մասնաւորապէս րնկերուհի Սեւանին, կնփամօր կեանքին:

Եւ րմպեցին:

«Հուսկ բանք»ը արտասանեց գաղտնեաց ասպետ Մարտիրոս, քսելով.

— Եղուարդ՝ Սեւանը կնփամայր րբաւ, գայն Եկեղեցի մտցնելու եւ վերստին հայ-ֆրիստոնեայ րնելու համար: Այս յայտնութիւնս մեր մէջ մնայ պիտի քսեմ, սակայն, մեր մէջ կին մը կայ, րնկերուհի Արուսը, որ բոլոր կիներուն պէս անշուշտ թուլբերան է, այսինքն՝ անգաղտնապահ: Ես ալ զինքը կը կարգեմ գաղտնեաց ասպետուհի:

Արուս ժպտերես յարձակեցաւ.

— Առանց կնոջ միս ուտելու, այրերը չեն կրնար ապրիլ:

Մարտիրոս պատասխանեց.

— Այրերը կիներուն միսը կ'ուտեն, առանց գանոնք նահատակելու: Որով՝ միսը նորէն կը բուսնի: Կիները մեր խելքը կ'ուտեն, եւ ուղեղը նորէն չի բուսնիր: Արդի կիները ունին սուր *թալոն*, վազուան կիներն ալ պիտի ունենան կաշի փանթալոն: Վա՛յ գլխուն, վազուան այրերուն...: Բայց դուք ամուսնացէ՛ք: Առանց կնոջ, կեանքը անօրէն դժոխք մըն է: Իսկ կնոջ հետ երբ ըլլաք, կեանքը կազմակերպուած ու կատարելագործուած դրժոխք մը կ'ըլլայ: Ամէն բանի կատարելագործուածը նախընտրելի է, մա՛նաւանդ կազմակերպուած հայաստանասէրներուն համար: Է՛, *ռեալիստ* րնկերներ, ժամանակ է. ես գնացի: Յկիրակի: Անուշ քուն: Անուշ երազներ ալ պիտի քսեմ, բայց սովետական ռեալիզմի դէմ է այդ մաղթանքը:

ԱՐՈՒՍ.— Իսկ ի՞նչ է սովետական ռեալիզմը:

ՄԱՐՏԻՐՈՍ.— Մուր գործերուն, պղտոր գործերուն, գաղտնի գործերուն իրականացումը, փայլուն յաջողութիւնով, գաղափարական մթնոլորտի մէջ: Կ'երեւի դուք սովետական ռեալիզմը կը գործադրէք բնագրաբար, առանց անոր էութիւնը բանականութեամբ ըմբռնած ըլլալու:

ԹՈՐՈՍ.— Լուսաբանէ մեզ, ընկեր Մարտիրոս:

ՄԱՐՏԻՐՈՍ.— Յառաջդիմական գաղափարաբանութեամբ գործող ընկեր մը երբ չըլլայիք բաներն անգամ կ'իրականացնէ, կատարեալ ռեալիստ է: Դուք պիտի գործերը կատարած էք ռեալիստօրէն:

ԱՐՈՒՍ.— Հապա եթէ նոյնքան ռեալիստօրէն մեզ գրող անուանէին...

ՄԱՐՏԻՐՈՍ.— Ես ձեր ո՞ր օրուան ռեալիստ ընկերն եմ: Այն ժամանակ, ե՛ս, գաղտնեաց ասպետս պիտի փոխուէի սպարապետի եւ ձիաւորներու խումբովս պիտի յարձակէի հակայեղափոխականներուն վրայ, գանձնի գնալու դիմակազերծ ընելով, իրենց խայտառակութիւնները հրապարակ քափելով, եւ ետքն ալ մորթազերծ ընելով, ռեալիստօրէն պատժելով...

ԹՈՐՈՍ (ստաբի).— Կեցցէ՛, հազար կեցցէ՛, հարագատ, հաւատարիմ, յաւիտեան ռեալիստ ընկեր Մարտիրոսը: (Կ'երթայ կը համբուրէ): Բաժակ մը եւս ըմպենք, մեր մեծ, գաղտնիքներու եւ գաղափարներու ասպետ սպարապետի ընկեր Մարտիրոսին կենացը... Հուրհրացէ՛ք հուռա՛...

ԲՈՒՐՐԸ.— Հուռա՛... հուռա՛...

ՎԵՐՋԱԲԱՆ

Նոր փեսան ու նոր հարսը իրենց մեղրալուսինը անցուցին Մոնթէ Գարլօ, ուր մնացին երկու շաբաթ, պտոյտներ լեռնային, ծովային ու ծովեզերեայ:

Երբ վերադարձան Փարիզ, որոշեցին քանի մը օրէն մեկնիլ Պէրուք, Եգուարդին ծնողներուն մօտ: Պիտի նամբորդէին ծովու նամբով, իբրեւ երկրորդ մեղրալուսին:

Նորապսակ ամուլին մեկնումին առթիւ, Մամասեանները իրենց տան մէջ սարքեցին հաւաքոյթ մը, ընթրիքէն ետքը, Շաբաթ երեկոյ:

Հրաւիրուած էին մեզի ծանօթ հայաստանաւեր-

ներէն գատ, քանի մը ուրիշներ ալ: Կը բացակայէր միայն Արթուրը, որ նաւաբեկեալ մըն էր սիրոյ սեւ ծովուն մէջ:

Հիւրասիրութիւնը եղաւ նոյն.— սուրն, ծխիկներ, մարսողական ըմպելիներ, շաքարներ, շոքոլաներ, խմորեղէններ, անուշեղէններ ու պտուղներ: Բոլորն ալ պուրժուական:

Մաղթանքները բուռն էին:

Ի վերջոյ, հանդէս եկան արքայական շիշերը շամփայնի:

Մարտիրոս ու չորս հանճարները ժպտեցան, նայելով իրարու:

Գլուխները սկսած էին տափնալ, սրտերուն պէս: Տրամադրութիւնները բարձր էին: Հոգիները կը յորդէին յոյսերով ու լոյսերով: Եւ ամէն ոք կը շողար ժպիտներով: Մինչեւ անգամ կնքամայր Սեւանը կը ժպտէր, նման վիուկի:

Սեւան մեծապէս գոհ մնացած էր Եղուարդէն, որ իր ամուսինն ու զինքը ընտրած էր իբրեւ կնքահայր-կնքամայր, թոյլ չտալով, որ անոնք ծախսեն իրենց գրպանէն:

Արուս կ'աշխատէր հիւրասիրութեամբ, օգնելով տանտիրուհիին ու սպանացի սպասուհիին: Կը ցաւէր, որ այդ պիւֆէական գործունէութենէն կարելի չէր որեւէ բան վասն ի վերուստ ընել: Կը գոհանար պիւֆէին պարունակութիւնները պուֆֆէ ընելով, որքան որ կարելի էր:

Շամփայնով սկսաւ շարքը պաշտօնական կեանացներուն:

Կարգով ու կարգօրէն խօսեցան ներկաները:

Նախ խօսեցաւ կնքամայրը, ապա՝ կնքահայրը, որոնք թագադիր իշխանուհիի եւ թագադիր ասպետի հովեր զգեցած էին:

Խօսեցան խաչագող չորս «հանճար»ներն ալ, որոնք առաւելապէս ծանրացան «ընկեր» Եղուարդին ընելիք բարերարութիւններուն վրայ:

Խօսեցան միւս հիւրերն ալ, կմկմալով կամ կակազելով:

Անոնցմէ ետքը խօսեցաւ Գաթարի, որ աւելի արցունք քափեց, քան թէ խօսէր կամ բան:

Խօսեցաւ նաեւ Գեղամ, որ կնոջմէն նուազ զգայուն չերեւալու համար, յուզում մը կեղծեց:

Տեսակ մը փառատօն էր երեկոյթը, Եղուարդին

ու Անժեյիֆին համար: Նորապսակները ամէնուն կողմէ
 ռճաւորութեան, իտէալացան, կիսաստուածացան: Տե-
 սակ մը անցողական անձի պաշտամունք էր, բարեմադ-
 թութիւններու տեղատարափներով:

Եպրաֆսէն իբրեւ հրեշտակ ներկայացուց Անժե-
 յիֆը, իսկ իբրեւ լուսապսակեալ, այսինքն՝ մեռեալ
 սուրբ ու սրբուհի՝ Գաթարին ու Գեղամը:

Անժեյիֆ, շեշտելով չափազանցութիւնները, շնոր-
 հակալութիւն յայտնեց բոլորին:

Եւ, վերջապէս, խօսելու կարգը եկաւ «րնկեր»
 Եղուարդին, որուն կը սպասէին անհամբեր:

Եղուարդ իր ճառը արձակեց այնպէս՝ ինչպէս
 սիրողաբար ձկնորսութիւն բնողները լարը կ'արձակեն,
 կարթին ծայրը գետեղած խայծ մը: Եղուարդին խայծն
 ալ գովք մըն էր, մէկիկ-մէկիկ որսալու համար խօսող
 ձուկերը, որոնցմէ ոմանք անխայծ անգամ կը փափա-
 ֆէին բռնուիլ Եղուարդէն, ու ջուրէն ելլելով՝ մտնել
 անոր աչքը կամ աչքին լինը:

Եղուարդ կանգնեցաւ: Պահիկ մը փակեց աչքերը,
 ապա, աչքերուն հետ բերանն ալ բացաւ.

— Սիրելիներ, ամէն բանէ առաջ, ես եւս խորին
 շնորհակալութիւններս կը յայտնեմ ձեր այնքան առա-
 տաձեռն բարեմադթութիւններուն համար, ու ես ալ կը
 փափափիմ, որ նոյնքան բարիք տեղայ ձեր եւ ձեր սիրե-
 լիներուն վրայ: Գամ բուն րսելիֆիս: Անկուսակցական
 ըլլալով, մինչեւ Փարիզ գալս, քանի մը ֆաղաֆներու մէջ
 ճանչցայ «հայաստանասէր» կոչուողներ, որոնց հան-
 դէպ, կը խոստովանիմ, չունեցայ ոչ մէկ համակրական
 զգացում: Անոնք իմ վրաս թողուցին տպաւորութիւնը
*ՓանՓարոն Փանաթիք*ներու: Անոնք կը տառապին ու-
 դեղային հիւժախտէ: Բացորոշապէս նկատելի էր, որ
 անոնք սիրոյ սպասաւորներ ըլլալէ աւելի՝ գործակալ-
 ներ են ատելութեան: Իրենք գիրենք կ'անուանեն «յա-
 ռաջդիմական»: Բայց դէպի ո՞ւր կը յառաջդիմեն. պար-
 գապէս դէպի յետադիմութիւն, դէպի կոուազանութիւն,
 դէպի ատելութիւն: Զափազանց նեղմիտ են, բայց այն-
 քան նեղմիտ, որ զանոնք, առանց չափազանցութեան,
 կարելի է անուանել անմիտ: Լեցուած են ֆացախով. կան
 գինիէ դարձածներ, կան ալֆովով պատրաստուածներ,
 կան նոյնիսկ թունաւորներ: Անոնք յամառօրէն զբաղած
 են դաշնակցականներուն միտք ուտելով եւ զանոնք
 անուանելով «հայրենիքի ոխերիմ թշնամի»: Այս խօսքը
 արդէն մեծագոյն ապացոյցն է իրենց տխմարութեան:

Գիտե՞ք որոնց կը նմանցնէի գիրենք.— Ափրիկէի մարդակերներուն, որոնք, երբ ֆաջեր կը սպաննուին, անոնց միսերը կ'ուտեն, ա՛յն համոզումով, որ պիտի ժառանգեն անոնց ֆաջութիւնը: Իրենք ալ կարծէք Դաշնակցականներուն միսը կ'ուտէին, իւրացնելու համար անոնց հայրենասիրութիւնը, առանց խոստովանելու, բայց լաւ գիտնալով, որ իրենցը քիչ է, կա՛մ մակերեսային է եւ կամ ալ կեղծ է. մինչդեռ Դաշնակցականներունը առատ է, նոյնիսկ յորդ է: Ահա թէ ի՛նչ տպաւորութիւններ ունէի «հայաստանասէր» կոչուող յառաջդիմակա՛ն խմբակցութենէն, երբ եկայ Փարիզ: Մտայ ձեր մէջ, ու աստիճան առ աստիճան ծանօթացայ ձեռն շատերուն: Ժամանակ է, որ աղաղակեմ.— Ի՛նչ տարբերութիւն անոնց եւ ձեր միջեւ: Ձեր մէջ մարդ կը շնչէ ալ, կը շարժի ալ: Ձեմ ըսեր, թէ դուք գերծ էք թերութիւններէ, թէ՛ անֆննադատելի էք, թէ՛ հրեշտակներ էք, ո՛չ, այդպիսի արտայայտութիւն մը վիրաւորական պիտի ըլլար ձեր համեստութեան համար: Բայց, սիրելի հայրենակիցներ, ես ձեր մէջ տեսայ որոշ ողջմտութիւն, որոշ լայնախոհութիւն, որոշ հանդուրժողութիւն եւ բաւական զգացում չափի: Ահա թէ ինչու համակրեցայ ձեզի: Եւ ահա թէ ինչու ձեզի կ'առաջարկեմ ծառայել ձեր կոչումին, առնելով առաջին ֆայր, ստեղծելու համար միութիւնը Դաշնակցականին հետ: Եւ այնուհետեւ աչքս նայեցէք: Այսօր կ'ըսեմ, առանց պոռոտախօսութեան: Եւ մտածեցէք, թէ ինչ են Դաշնակցականներուն պահանջները: Մտածեցէք իբրեւ գտարիւն հայ եւ պիտի ըլլաք համաձայն անոնց հետ: Ով որ ողջամիտ է, ո՛վ որ լայնախոհ է, ինծի հետ կը խմէ Դաշնակցական հայրենասէրներուն կենացը... Ո՛վ որ համամիտ է՝ թո՛ղ բարձրացնէ բաժակը...»:

Պահ մը տիրեց անշարժ վարանում: Սկսան գիրար ֆննել նայուածքներով:

Յանկարծ, րնկերուհի Սեւան բարձրացուց բաժակը, եւ վնոապէս յայտարարեց.

— Մենք՝ կիներս, համամիտ ենք, իսկ մեր ընկեր էրիկմարդիկը հնազանդ են ու կը հետեւին մեզի: Հայրենիքէն առաջ սիրենք Հայութիւնը:

Քոյրը ելան ոտքի, բարձրացուցին բաժակները եւ ըմպեցին:

Երբ նստան, Եդուարդ մնաց ոտքի վրայ, եւ ըսաւ.

— Կարելոյ կէտ մը կայ, այդ մասին ալ պէտք է որ խօսիմ: Դուք Հայաստանասէրներ արտասահմանի,

տխմարաբար գտնուեցաք դաւանանական դիրքի ու դերի մէջ, համայնավարներուն Հայաստանի մէջ ամէն մէկ ըրածը անխտիր գովելով, քաջալերելով կամ լռելով: Եթէ դուք, իբրեւ Հայաստանասէրներ ու սովետասէրներ, փոխանակ փառաբանելու ամէն մէկ չարիք, գիտնայիք բողոքել, մեծ չարիքները չէին կրնար հարուածել մեր մտաւորականութիւնը ու ժողովուրդը Հայաստանի: Եթէ դուք բողոքել գիտնայիք, ձեզ մարդու տեղ կը դնէին կամաց-կամաց, ու նկատի կ'առնէին ձեր բողոքը: դուք միշտ մինակ բողոքիք 'Դաշնակցականները, իբրեւ բողոքող: Լաւ գիտցէք, որ Քրեմլինի մարդակերպները եւ անոնց ձրի կամ աժան ծախուածները ձեզ տխմարներու տեղ դրած են, լսելով ձեր փառաբանութիւնները, որոնք աննախընթաց են իբրեւ ստրկամտութիւն: Տարիներ առաջ, Հայաստանէն եկած շատ ծանօթ անձնաւորութիւն մը, խիստ մտերմութեան մը մէջ ըսաւ. — «Ինչե՛ր կարող էին անել արտասահմանի հայ սովետասէրները, եթէ գիտնային բողոքել: Նրանք չափազանց վնասակար եղան իրանց անչափ, յամառ ու զգուելի գովեստներով: Մինչդեռ կարող էին շատ օգտակար լինել տեղին ու արդար նկատողութիւններով: 'Դաշնակցների քննադատութիւնները անհամեմատ օգտակար հանդիսացան...: Ուրեմն, ձեր հայաստանասիրութիւնը հայաստանատեսցուքեան հաւասարեցաւ, ձեր գովելու անսանձ մոլութիւնով: Բազմաթիւ չարիքներու առաջք առնուած կ'ըլլային, եթէ դուք հայ հոգիի մասունք մը ունենայիք ձեր մէջ: Ե՞րբ պիտի հրաժարիք ստրկութենէ, եւ պիտի սորվիք մարդանալ, հայանալ ու բողոքել: Ձերը պիտի ըլլար բարեկամի բողոք, որով՝ ազդեցիկ, եւ անհամար ոնիրներու, չարագործութիւններու առաջք կրնար առնուիլ: Վաղը, եթէ ամբողջ հայ ժողովուրդը (Աստուած մի արասցէ) տարագրեն դէպի Ղազախստան, ու Ձէչէններուն կամ Փէչէնէկներուն յանձնեն մեր հայրենիքը, դուք դարձեալ պիտի գտնէք այդ արարքը իմաստուն ու գովելի: Պիտի չբողոքէք, ձեր ընդվզումը միացուցած չըլլալու համար 'Դաշնակցականներու ընդվզումին: Բայց դուք պիտի դադրիք «Հայաստանասէր» կոչուելէ: Այնուհետեւ ձեզ պիտի անուանեն «Ղազախստանասէր» կամ կարնօրէն՝ «Ղազասէր»: Եւ այս բոլորէն ետքը, ըսեմ նաեւ իմ վերջին խօսքս: Լաւ գիտցէք, սիրելի հայրենակիցներ, որ 'Դաշնակցութիւնը այն միակ կուսակցութիւնն է, որուն երեսը կարելի է թփնել, որովհետեւ...

Բայց խօսքը չվերջացուցած՝ նստաւ ու լռեց:

Սեւան առարկեց.

— Ձեր խօսքը չլրացուցիք:

— Երբ Պէյրուսը հասնիմ, կը խոստանամ նամակով մը ամբողջացնել խօսքս:

— Չմոռնաք ձեր կիսատ խօսքը ամբողջացնել:

— Խոստացայ:

* * *

Երեք շաբաթ ետքը, հասաւ Եդուարդին խոստացած նամակը, ուր, ի մէջ այլոց, գրուած էր.

— «Գալով կիսատ ձգած խօսքիս, ահա կ'ամբողջացնեմ.— Դաշնակցութիւնը այն միակ կուսակցութիւնն է, որուն երեսը կարելի է քֆնել, որովհետեւ երեսունի, քանի որ գլուխ ունի: Իսկ Հայաստանասէրները երես չունին, քանի որ գլուխ չունին»:

Նամակին ներքեւ աւելցուած էր.

— «Շատ սիրելի եւ յարգելի կնքամայրս՝ տիկին Սեւան, եթէ ոչ ոք համամիտ չըլլայ ինձի, վստահ եմ, որ դուք իրաւունք պիտի տաք: Եւ ես ձեզմով կը գոհանամ: Ըսեմ նաեւ, որ խօսքս կարելի էր շարունակել, բայց առայժմ բաւական է այսքանը»:

Ընկերուի Սեւան աղաղակած էր.

— Տասն անգամ իրաւունք ունի:

Եւ անշուշտ կը ստէր:

Վիլմովպը, 1966

ՆՇԱՆ ՊԵՇԻԿԹԱՇԼԵԱՆ

(Շար. 5 եւ վերջ)

Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

ՄԱՆԿՈՒԹԵԱՆ ՔԱՂԱՔ

Մանկութեանդ տակաւ խամրող
պատառիկները կը մնան՝
տեղ մը անձայն,
որոնք երբեմն կը զարթնուն
գրոյցներէն ամէնօրեայ,
նկարներէն սեւ ու ներմակ,
սենեակներէն յիշողութեան:

Ոսկի արտերը ցորեանի
հովերուն հետ հոն կը ծփան:
Մինարէ մը իսլամական
կը բարձրանայ կամուրջին մօտ:
Եւ կամուրջէն անցած ատեն,
ծնողներդ միշտ ցոյց կու տան
արեւակէզ արաբները անապատի
կը զգուշացնեն,
թէ մարդիկն այդ
կրնան յանկարծ առեւանգել,
եթէ գտնեն քեզ առանձին...

Այդպէս, օր մը, քաղաքին մէջ արեւելեան,
փոքր եղբայրդ կորսուեցաւ:
Ան՝ պարզապէս, դուռը բացած, դուրս եկած էր
հօրեղբօրք քով երթալու,
երբ զինք գտանք՝ դեռ կը քալէր
չոր, արեւոտ այդ քաղաքի մէկ փողոցէն
եւ ոչ ոք զինք չէր փախցուցած...

Այնտեղ է որ դուն տեսած ես
եղնիկները սպաննուած՝
որսորդներու որսէն դարձին:
Բաց թելերը արագիլին,
խոհանոցի պատէն կախուած,
մնաց երկար՝ չորցուելու:
Զմբուումը յաջողած չէր.
փետուրները թափեցան վար...

*
*
*

Յուրթի դաշտերը ցորեանի
մնացին հոն... արեւին տակ:
Ազգայնացման փորձարկումներ յաջորդեցին,—
լոգունգներ վառ, խոստմնալի...
Քաղիչները մեքենական
արտերուն մէջ ժանգոտեցան:
Դպրոցներուն՝ պատանիներ,
ֆաղափական ուսուցումի բովէն անցած,
զինուորական տարագ հագին՝
վեհօրէն կը տողանցէին:
Խորունկ պատերուն մէջ գնդաններու,
խուլ ձայներ կային, որոնք դուրս չեկան:

Մանկութեանս պէս, երկիրը ամբողջ,
անմեղութիւնը կորսնցուցած էր —
տեսիլներու մէջ՝ ցնդած ու անսէր
եւ ֆայերու տակ՝ անկոչ ու դաժան...

ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԸ

Քաղաքամէջը՝ մայրաքաղաքի
այրած դէմքն է:
Հրագէտներու սարսափը կարմիր,
գայն կը պաշտպանէ
յիշատակներու յելուզակներէն...

Հոն դեռ կը շրջին
օրերն անցեալիս...
Հրապարակի
ամբոխը նախկին կենցաղը կ'ապրի:
Կը դեգերիմ եւ
սրնարաններուն ներկիլէ ծխող
մարդիկ կը դիտեմ:
Շուշուի մէկ սեւ երգիծախաղին
հանդիսատեսն եմ:
Կը բարձրանամ վեր
աստիճաններէն՝ շէնքերու խախուտ,
որոնց տանիքին հաստատուած՝ փայլուն,
կանաչ ու կարմիր լոյսերուն ներքեւ՝
ֆապարէները կը մտնեմ խնդուն,
ուր ձայնը ուտի
դեռ կը կարկաչէ...

Տեղ-տեղ ֆաղափի անցեալը պեղուած՝
բացուած վերքի պէս ցաւէն կը կոտտայ:
Գերեզմանառման շուկան կար անդին,
տարբե՞ր անունով կը գործէ հիմա...

*
* *

Ահա «Կիլիկիա» սրնարանը, ուր
անապատներէն
կամ ֆաղափներէն աստուածաշնչեան՝
հայեր կը հասնին —
գործ կը փնտրուեն,
հարազատներ, տուն...

Մենք կ'ըսէինք՝
կազմաւորուող նոր Սփիւռքի
այդ շրջանը կը պատկանի
անցեալին: Հոս հայրենիք չէ,
ծննդավայր է սակայն:
Քիչ ետք՝ ահեղ
պտուտահողմը մեզ կը տարտղնէ:

Մեզմէ մէկ ֆանին
կրցան շրջանցել ամէն հանգրուան:
Քաղաքամէջի
անժամանցելի երկրամասին վրայ՝
անվախ կը շրջին,
նոյնիսկ կը թռչին...

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԵՐՊԵՐԵԱՆ

Գ. ԱԲԷԼԵԱՆ

ԱՆՆԱ ՀԱՐՍԸ



Ի ԽՆԴԻՐ ՓՈՐԻՆ

Առաջին ձմեռը, Տէյր Աթիէի մէջ, անցաւ: Անշուշտ, շատ դիւրին է «ան-
ցաւ» ըսելը, երբ ապրողը դուն չես: Իսկ այդ ձմեռը անցընողները միայն իրենք
գիտեն, թէ ինչպէ՞ս անցաւ: Խոռոչներուն մէջ ապաստանած գաղթականնե-
րուն համար անուշի բան էր պաղին, չոր պաղին տոկալ, այն ալ համարեա՛ թէ
առանց անկողնի, առանց հագուստի եւ, մա՛նաւանդ՝ առանց սնունդի:

Իրամ չկար: Իսկ ու նեցողներն ալ բան չէին կրնար գնել: Համատարած
պատերազմ էր. ուտեստեղէն թէ այլ անհրաժեշտութիւններ գտնելն էր բուն
հարցը: Իսկ ու նեցող առեւտրականները, առեւտուրի ամենատարրական
սկզբունքներու հիման վրայ, իրենց ու նեցածը կը պահէին, միշտ յաւելեալ շահ
ապահովելու մտահոգութեամբ: Ուրիշին անօթութիւնը իրենց ի՛նչ: Իրենք
չէին ստեղծած կամ սկսած սա անտէր պատերազմը: Ատոր մեղքը պետութեան
կամ պետութեանց վրին էր: Իսկ իրենք, առեւտուրի մարդիկը, չէին կրնար
թեթեւութեամբ վարուիլ կացութեան հետ: Եթէ պատերազմ էր, ամէն մարդ իր
գերը ունէր կատարելիք, ոմանք պիտի կուռէին ու մեռցնէին կամ մեռցուէին.
սա պատերազմի օրէնքն էր: Ուրիշներ պիտի աւար դիպէին: Ոմանք առիթը
լաւագոյնս պիտի օգտագործէին: Այդ էր հիմնական սկզբունքը: Իրենց ի՞նչ
մեղքն էր, որ պատերազմ էր:

Այդ շատ հիմնական սկզբունքին իբրեւ հետեւանք, համայն ժողո-
վուրդը կը տառապէր սնունդի պակասէն: Տեղացիներն ալ դժուարութեան
մատնուած էին. այլեւս ի՞նչ պէտք էր ակնկալել, եթէ գաղթական էիր:

Հաննոն իր դրամը շուտով սպառեց: Մէկի տեղ տաս կամ քսան վճարել
պէտք էր: Այնքան ատեն, որ դրամ կար, վճարեց: Օր մը քիչ մը արմա՛, ուրիշ
օր մը քիչ մը չոր թուզ— հոգ չէ թէ որդնոտած— ուրիշ օր մը քիչ մը կորեկ կամ
ցորեն: Վաղուան մասին պէտք չէր մտածել. եթէ այսօր ունիս, կ՛ուտես, լա՛ւ.
վաղուան հոգերը վաղուան ձգէ: Աւետարանն ալ այդպէս կը պատգամէր: Եւ
դրամը՝ թէ՛ Ռէնճիլեանին տուած մէճիտները, թէ՛ Օսանին խնայածները եւ թէ
Աննային քով գտնուածը, բոլորն ալ ծախսուեցան: Իսկ դեռ ո՞ւր էր գաղթին
վերջը:

Այդ տարի, գաղթականներուն չար բախտէն, ձմեռը շատ երկնցաւ:
Անապատային շրջանին մէջ թափուած գիւղացիներուն համար դժուար էր
տանիլ սա չոր պաղը: Իսկ մէկ կամ երկու քի տեղ վեց անգամ ձիւնեց այդ տա-
րի: Տեղացիներն ալ կը գարմանային: Եւ ի՛նչ ձիւն:

Հոն, իրենց բայնին մէջ, գաղթականները ընդհանրապէս սիրով կը դիմաորէին ձիւնը, որովհետեւ ասոր օրերը հանգիստի օրեր էին մշակներուն համար. փոքրերուն համար հաճելի մարզանք եւ խաղ էր սպիտակ ձիւնը: Տակաւին ուսպով շինուած համով սառնանուշ, «գարսանպաճ» էր ձիւնը: Իսկ հոս, գաղթավայրին մէջ, անէճք ու գոզ էր անիկա: Այս բոլորը տանիլը հերոսութեան պէս բան մըն էր: Ոմանք շիրցան հերոսութիւն ընել եւ գացին: Հաննոյին ընտանիքը, սակայն, կրցաւ տեսակ մը հերոսութիւն ընել. մահ չունեցաւ: Եւ այդ՝ հերոսութեանց հերոսութիւնն էր:

Օրը կ'անցնէր առաւելաբար փուշ հաւաքելով: Մեծով թէ պզտիկով ընդարձակ դաշտերուն մէջ կը ցրուէին, փուշ հաւաքելու: Եթէ չըլլար փուշը, ի սպառ կը սառէին բոլորն ալ: Որքան երանի կու տային Տէյր Աթիէի ժողովուրդին, որովհետեւ ասոնք ստիպուած չէին փուշ հաւաքելով ջերմութիւն սառնալու: Իրենց տուններուն կամ հիւղերուն մէջ նստած, անոնք աթար կը վառէին: Յաճախ կը ջանային աթար ձեռք բերել, բայց այդ ալ դիւրին գործ չէր. գողութիւն ընել պէտք էր. եւ գողութիւնն ալ դժուարին գործ էր: Ամէն մարդ իր ունեցած ապրանքին վրայ կը գուրգուրար, նոյնիսկ եթէ այդ ապրանքը կոփու չորցած թրիք էր:

Կեանքը մարդերը կը վարժեցնէր նորանոր ապրելակերպերու: Փուշէն դատ, Հաննոն, ընտանեօք հանդերձ, դաշտերը կ'իջնէր բոյսերու արմատ հաւաքելու համար: Ի՞նչ ընել, երբ չկար կարասով ուսպ, կարասով ձէթ, սնտուկով չոր թուզ, չամիչ, ընկոյզ, ձաւար, ամէն մարդ պիտի ստիպուէր դիմելու բարի հողին: Հողը որքան ալ դաժան ու անհիւրնկալ ըլլայ, աշխատող ձեռքին համար դեռ բան մը ունի տայիք: Եթէ երեսին վրայ դալարիք չկայ, ձմրան եղանակին, գոնէ իր ընդերքին մէջ պահած կ'ըլլայ արմատներ: Արմատ ուտելն ալ ձեւ մըն է, կարենալ ապրելու համար: Ի՞նչ փոյթ, եթէ երեք ձեռքերը կը կոշտանային, ու քրտինքը առատօրէն կը հոսէր...: Պիտի ապրիլ...

Ազի-յեղի թէեւ, բայց ձեւով մը ողջ մնացին, ապրեցան: Այդ պէս չեղաւ սակայն սրնդահար Սողոմոնը: Անոր կիներ, ձմեռնամուտին իսկ, հրաժեշտ տուաւ բոլորին, ու կեանքին: Սողոմոն ամբողջ գաղթի ճանապարհին վրայ սրինգը կ'պցուցած չէր շրթներուն: Հիմա, կնոջ մահէն ետք, օրն ի բուն սրինգը բերնին, կու լային միասին: Սողոմոն մէջ սրինգին ձայնը կ'արձագանդէր ու աւելի կը հարստանար, եւ աւելի յուզիչ կը դառնար: Արդէն իսկ ճնշուած խեղճութիւններ բոլորն ալ, օրէ օր աւելի կը նեղուէին. կ'աղաչէին, որ Սողոմոն այլեւս գազրեցնէր իր սիրտ ծակող նուազը...: Եւ ի՞նչ հեղնանք:

Սողոմոն բոլոր հարսանիքներուն եւ ուրախութեանց զարդն էր, աստղն էր: Որքան մարդ պարի հանած էր իր սրինգով. քանի՛-քանի՛ հարսեր հօրենական իրենց տուններէն փեսաներուն առաջնորդած էր: Կնուներ, նշանախօսութեան, տակաւին աշնանամուտին, երբ դիւզացիք բերքերը ամբարած ըլլային եւ քէֆի նստէին, Սողոմոն կը դառնար հերոս: Մարդիկ կ'աղաչէին, որ նուագէր, բայց ան ինքզինք կը ջանար սուղ ծախել: Իսկ հիմա^o, մարդիկ կ'աղաչէին, որ գազրէր նուագելէ եւ սիրտ ծակելէ...

— Եթէ մեր բոյնին մէջ ըլլայինք, այս անցնող աշնան քանի՛-քանի՛ երիտասարդներ պիտի տուն-տեղ ըլլային եւ Սողոմոն վարպետը որքան պիտի նուագէր, ուրախանար եւ ուրախացնէր: Իսկ գաղթի ընթացքին, եւ անոր պատճառով, իր տունն ու տեղը կորսնցնելէ ետք, ահաւաստիկ նաեւ իր կէտք կորսնցուցած Սողոմոնը ազի-արցունք կը թափէր: Իր ձագուկները դեռ այնքան փոքր էին...

Առաջին ձմեռը անցաւ թշուառութեամբ, անօթութեամբ եւ ազի-արցունքով...

Ամէն մարդ գարնան սպասեց: Գարնան ձիւնը ի սպառ պիտի մեկնէր: Իսկ ինչ որ ամենակարեւորն էր, հողը իր ընդերքէն պիտի ժայթքեցնէր ծաղիկ

ու բոյս: Ծաղիկը որո՞ւ պէտք էր: Պէտք էր ուտելի բոյսը: Արմատ եւ տերեւ անհրաժեշտ էին: Մարդիկ պիտի ուտէին: Եւ երբ եկաւ գարունը, հազիւ հողէն դուրս ցցուած խոտեր, դառն թէ ճաշակելի, անյապարար կը փրցուէին:

Թէ՛ սնունդի հարց էր սա եւ թէ հայրենի տան կարօտ:

— Մինաս, Մինաս, այսօր կանկատ գտայ. տե՛ս. սա մեր դիմացի բլուրին կանկատին չի՞ նմանիր: Տե՛ս. ա՛ն սա մէկ հասար...

— Կանկատ, կանկա՛ն, — աչքերը չորս կը բանար դրացի Մինասը, — ա՛խ, տուր մէջ մը հոտուրտամ...

Մինաս կ'առնէր կանկատի փշտ ու ցեխոտ թուփը, կը դիտէր անյագութեամբ, նոյնիսկ շրթունքին կը տանէր, համբուրելու համար...: Կանկատ, կանկա՛ն...

Է՛հ, իրենք ամէն գարնան արտերը տակնու վրայ կ'ընէին կանկատ հաւաքելու համար: Մրցուի կ'ելլէին, թէ ո՞վ առաւելագոյն չափով պիտի հաւաքէր: Հիմա հաճոյքի հարցէն աւելի, կանկատն ու միւս բոյսերը հիմնական կարիքի, ըլլալ-չըլլալու կենսական բանի վերածուած էին:

Աննան, Օսանը, Ճորճիկն ու Ճիմին առաւօտ կանուխ կ'իջնէին «գործի»: Դաժան անապատային հողը, դէ՞ կարճ ժամանակի մը համար, գտնուեցաւ առատաձեռն: Ինչ որ ունէր իր ընդերքին մէջ, դուրս ժայթքեցուց, որպէսզի ժողովուրդը բան ունենար ուտելու: Եւ ժողովուրդը կերաւ, ի՛նչ փոյթ, եթէ երբեք այտերը պիտի առնէին կանանչ գոյն...

Յաճախ իրարու հետ կը վիճէին. — Սա տեղը իմս է. դու ուն քիչ մը անդին գնա՛: — Աստուծոյ ստեղծած հողը ընդարձակ է: — Ի՞նչ եկեր եւ մեր քիթին տակ մտեր էք...

Տեղացիներուն հետ ալ վէճը անպակաս էր: Ասոնք ալ պէտք ունէին սնունդի: Անոնք ալ ուտելիք շատ բան չունէին: Քիչերն էին բախտաւ որ:

— Սա սրիկաներուն նայէ, եկեր են, մեր հող ու տեղին տիրութիւն պիտի ընեն: Ծօ, ձեզ հոս բերողին տո՛ւնը աւերուի...

— Թող աւերուի, աւերուի, — կը համաձայնէր գազթականը:

Այսքանն էր համաձայնութեան եզրը տեղացիին եւ եկուորին միջեւ: Անկէ դուրս ամէն բանի համար վէճ-վիճաբանութիւն կար: Յաճախ կ'ուրիւն ալ անպակաս կ'ըլլար: Ո՞վ պիտի մեղադրէր միւսը...: Բոյսըն ալ ապրելու, ձեռով մը կեանքը քարշ տալու, տենդէն վարակուած էին...

* * *

Երկար չտեսց գարունը: Հողն ալ շուտով սպառեցաւ իր բարիքները սփռել:

— Մեր քով, երկու-երեք ամիս խոտիկ կը հաւաքէինք. սա ի՞նչ բան է. հազիւ աչքերնիս քիչ մը լեցուած՝ արդէն իսկ չորցաւ ամէն բան:

— Հոս ջուր չկայ, ջո՛ւր. մեր մօտ գարնանային անձրեւը մի՛նչեւ Մայիս, նոյնիսկ մի՛նչեւ Յունիս խոնաս կը պահէր հողը. այդ խոնաւութեան եւ ջերմին, բնական է, որ անպակաս ըլլային խոտիկի տեսակները: Է՛հ, ա՛չքդ կուրնա, օսմանցի...

Թէ եւ շուտով դեղնեցաւ վայրի բուսականութիւնը, բայց այս անգամ ուրիշ դուռ մը, աւելի ճիշդը՝ պատուհան մը բացուեցաւ:

Հունձքի ժամանակը վրայ հասաւ:

Տէր Աթիէի դաշտերը որքան ալ ընդարձակ, սակայն շատ բերրի չէին: Քարքարոտ կրային հողը շատ ալ տրամադիր չէր իր ծոցին մէջ սերմը պէտք եղածին պէս պոպուրելու: Յորենի դաշտերը սահմանափակ էին: Յանքն ալ քիչ էր. պէտք չէ մոտնալ, որ այս գիւղին մէջ եւս այրերը քշուած-տարուած էին

բանակ: Աշխատող ձեռքերը քիչ էին: Իսկ բոլոր անոնք, որոնք ցանուած արտունէին, գիշեր թէ ցերեկ պահակութիւն կ'ընէին.

— Սա անիծեալ մուհածիրնե՛րը...

Հունձքէն ետք, մարախի պէս, գաղթականները կը փռուէին դաշտերուն մէջ, հասկաքաղի համար: Արդէն իսկ «մաքրուած» արտին մէջ երկրորդ անգամ հասկաքաղը ի՞նչ արդիւնք կրնար տալ: Բայց հողը պարապ չէր դարձընէր աշխատողները: Եւ վտիտ հասկեր կը կազմուէին: Մեծ թէ փոքր, օրն ի բուն գետին հակած, ասկէ-անկէ ցորենի թէ գարիի վտիտ հասկեր կը ժողվէին:

Հաննոյին ընտանիքը բաւական բան կրցաւ հաւաքել, բայց այդ հացահատիկը քանի՞ օր կամ քանի՞ շաբաթ կրնար կէս լեցուն պահել սամոնքսնե՛րը...

Երեկոյ մը, հեռաւոր անապատէն մարդ մը ներկայացաւ գաղթականներուն.

— Աչքը որքան որ կը տեսնէ, ցորենի արտեր կան. գործը շատ, փա՛ռք Ալլահին, բերքն ալ առատ է: Աշխատողին համար ահագին վարձք կայ: Կ'աշխատիք մինչեւ արեւամուտ մեր հաշուոյն, անկէ ետք դուք ճիւղ կը հաւաքէք: Տոպրակներով ցորեն կրնայ հաւաքել ամէն աղջիկ, ամէն կին: Ձմեռը անօթի չէք մնար: Նոյնիսկ կրնաք ծախել հաւաքուածին մէկ մասը:

— Իսկ ո՞ւր է այդ անապատային «Եղեմ»ը...

— Հոն, շատ հեռու չէ:— Եւ ձեռքի շարժումով մը, եկուորը ցոյց կուտար իր գովերգած «Եղեմ»ին ուղղութիւնը:

Եւ վէճ մըն էր, որ փրթաւ գաղթականներուն մէջ: Ամէն տան մէջ վէճ-վիճաբանութիւն կար: Երթա՞լ թէ չերթալ: Ո՞վ պիտի երթար, ո՞վ պիտի մնար:

Հաննոյին համար մեռնելու չափ դժուար բան էր իր հարսն ու աղջիկը զրկել դէպի անապատ, փոյթ չէ, թէ հոն գոյութիւն ունենար ցորենի դըրախտ:

Շատ չափեցին, շատ ձեւեցին: Վերջի վերջոյ այլ ելք չկար: Նոր ձմեռ մը կար դիմաւ որելիք: Պէտք էր երթալ:

Աննան ինք կ'ուզէր երթալ: Եթէ իր ձագուկներուն մօտ մնար, ինչո՞վ պիտի կերակրէր զանոնք: Պէտք էր սա նոր գոհողութիւնը:

Այլ կիներու հետ, Աննան ու Գարունը ճամբայ ելան, աղի-արցունք թափելով: Տղեկներուն համար ահոնքի բան էր սա: Կը կարծէին, որ մայրիկն ու հօրքուրը անապատ կը տարուէին, Տէր-Չօր կը տարուէին: Համոզելը այնքան դժուար էր:

Օսան կեսուրն ալ անելի մատնուած էր: Առաջարկած էր, որ հարսը մնար եւ ինք երթար: Անապատէն եկած վերակացուն, սակայն, պէտք ունէր երիտասարդ ձեռքերու. ի՞նչ ընէր Օսանը, որ հակառակ իր գօրաւոր կազմը-լածքին, արդէն իսկ տկարանալու նշաններ սկսած էր ցուցաբերել: Մէկ ասուլան գաղթը սկսած էր մաշեցնել ու ծերացնել զինք:

Աննան ու Գարունը գացին, շուտով վերադառնալու խոստումով: Քանի մը սաւաններ միասին առին: Ատոնք պէտք պիտի ըլլային իբրեւ ծածկոց. յետոյ պիտի վերածուէին տոպրակի, ցորենի բարիքը ընտանիքին բերելու համար:

Գացին ըսելը, ինքնին, շատ դիւրին բան է: Բայց ասոնց բաժանումը եղաւ չափազանց դժուար: Խորքին մէջ գաղթավայրէն նոր գաղթ մըն էր սա: Եւ դեռ ինչ որ աւելի դժուար էր, ընտանիքին բաժանումն էր: Յարդ ընտանիքը մնացած էր անբաժան: Անշուշտ, Աննային համար այդպէս ալ չէր: Իր ընտանիքը Աստուած միայն պիտէր, թէ ո՞ւր տարուած էր: Մա՛նաւանդ իր աշագուրդ Կարապետ եղբօր յիշատակը կ'այրէր զինք: Հապա՞ իր ամուսնոյն, Քե-

րորին բաժանումը: Եւ ահաւասիկ պիտի բաժնուէր նաեւ իր ձագուկներէն, կեանքէն եւ սկեսարաբէն: Ո՞ր կը տարուէին ինքն ու Գարուն տալը:

Արտերէն եկած վերակացուն իսկ, որ մինչ այդ համարձակօրէն կարգազրուիլու ննկ կ'ընէր, չկրցաւ իր յուզումը ծածկել: Այնքան սրասիւղեք էր Աննային բաժանումը իր ձորճիկ եւ ձիմի ձագուկներէն:

Գացին:

Այդ օր Հաննոն պիտի ճաթէր: Ձեր բաւեր ո՛չ միայն խոտոչ-տան մէջ, այլեւ՝ դուրսը: Գնաց Գամասկոս-Հոմա խճուղիին եզերքը: Սա իր զրազումի միակ միջոցն էր: Ամէն անգամ, որ կարենար, կ'երթար հոն, կը նստէր քարի մը վրայ ու կը դիտէր խճուղիէն երթեւեկող կառքերն ու ջորիներու կամ ուզտերու կարաւանները: Կ'երթային ու կու գային անոնք: Մարդիկ կ'երթային գլ-պի հիւսիս կամ հարաւ: Այսքան շատ մարդ ինչո՞ւ շարժման մէջ էր, կը մտածէր յաճախ Հաննոն: Յետոյ կ'անզրադառնար, որ հարաւ գացողներուն մեծ մասը զինուորներ էին:

— Ասոնք ծառէ՞ն քաղուած են, Տէր Աստուած. ո՞ր կը տարուին այսպէս: Դուն խնայէ սա երիտասարդներուն. դուն խնայէ իմ Տիրանին ալ...: Ինչո՞ւ այսպէս ստեղծած ես Մարզը, Տէ՛ր. իրարու միս կ'ուտեն, ինչո՞ւ: Ձերար կը սպաննեն, ինչո՞ւ:

Թէեւ ինք կը տխրէր ի տես ճակատ գացող զինուորներուն, բայց զինք բուն յուզողը այլ բան էր, — իր ջորիներուն յիշատակը: Ի՛հ, կար ժամանակ, երբ ինքն ալ կ'երթեւեկէր Քեսապէն Անտիոք, նոյնիսկ հեռաւոր Իսկլնատ-րուն: Մէկ-երկու անգամ հասած էր նոյնիսկ մինչեւ Հալկա, որուն գոց շուկան, իր ճորտութեամբը, չլացուցած էր զինք. օճառի այնքա՛ն դէզեր, կերպասեղէնի այնքա՛ն դէզեր, ու տելիքներո՞ւ դէզեր...: Շատ մարդ տարած-բերած էր ինք: Շատ բաժանումներու ականատես եղած էր, նաեւ շատ մը ուրախալի միացումներու...: Լաւ էր իր արհեստը. ինք սրտանց կը սիրէր գայն: Երանի կու տար բոլոր ջորեպաններուն, որոնք նոյնիսկ եթէ վարձկաններ էին, այդպէս կ'երթեւեկէին: Իսկ ի՞նք, գատապարտուած էր տեսակ մը բանտարկութեան, լայնածաւալ դաշտին մէջ: Ամէն երկու օրը անգամ մը ստիպուած էր ներկայանալու, բոլոր գաղթական ընտանիքներու մեծաւորներուն պէս, ոստիկանատուն, իր ներկայութիւնը հաստատելու համար: Նոյնիսկ եթէ չներկայանան, ան, ոստիկանութիւնը, արթուն պահակ էր, կը հսկէր բոլորին վրայ. վա՛յ Տէյր Աթիւլէն հեռացողին:

— Եթէ ես ալ ջորի մը ունենայի, — յաճախ կը հառաչէր Հաննոն, — ես ալ կ'երթայի Գամասկոս. նոր տեղեր կը տեսնէի, նոր մարդիկ: Գոնէ օրն ի բուն հարազատներուս դիմաց չի մնար այսպէս անզորձ ու անբան. ծօ, թող վարձկան ջորեպան ըլլայի. նոյնիսկ յօժար եմ ձրի ջորեպանութիւն ընելու, միայն թէ երթայի-գայի...

Բայց ո՞վ ջորի կը յանձնէր մուհաճիբ Հաննոյին, որուն մազերը վերջին քանի մը ամիսներուն գրեթէ լրիւ ճերմկած էին: Եթէ ինք երթար, ո՞վ հող պիտի տանէր իր թուններուն, որոնք որբու կներու վերածուած էին...: Աստուած իմ, Աստուած իմ...: Ե՞րբ պիտի դառնանք մեր հող ու տունը, ե՞րբ զաւակներս պիտի մէկտեղուին:

Օսանն ալ իր ողբերգութիւնը կ'ապրէր: Աննան գրեթէ որբու այրի բան մը եղած էր: Առանց այր մարդուն հովանիին, կինը ի՞նչ կ'իյնէ: Հապա ձագուկները, որոնք օրն ի բուն «Աննա մամա» ըսելով կու լային, հող չէ թէ արդէն իսկ պատանիներ զարձած էին: Հակառակ այդ բոլորին, Օսան հող պիտի տանէր իրենց «տան», որ գեո նոյն խոտոչն էր:

* * *

Աննան Լու Գարունը Երկու օր քալելէ ետք հասան խոսաացում

«Եզեմ»: Իրենք առանձին չէին: Տասնեակներով կիներ կային իրենց հետ: Բոլորն ալ հալու մաշ եղած արարածներ. բոլորն ալ համազիւ գացիներ, քեսապցի: Ներքին վախ մը կը կրճէր բոլորը. հապա եթէ այդ արտերէն անդին տարուէին, ուր կը տարածուէր անապատը, սուրիական անապատը եւ ուր կը գտնուէր տիրահոշակ Տէր—Չօրը: Ի՞նչ կար որ, իրենց աշխատանքը վերջանալէ ետք, կը քշուէին անտպատ, իբրև անպէտ գոյք ու կը ջարդուէին: Նոյնիսկ եթէ չջարդուէին, ո՞վ պիտի երաշխաւորէր զիրենք վերակացուներու կամ հնձուորներու ախորժակներուն դէմ: Անատամ ու տգեղ մարդիկ, անապատէն այրած ու սևեցած զէմքերով բոլորն ալ վաթսու ննոց այրեր: Ասոնց զէմ պաշտպանու իլը հերոսութիւն էր: Երիտասարդ գրեթէ մնացած չէր. բոլորն ալ քշուած—տարուած էին գինուորութեան, եւ կամ դարձած էին փախստականներ, անձայրածիր անապատին մէջ...

Տեղ հասնելէն ետք, անմիջապէս լծուեցան գործի: Այդքան ընդարձակ ցորենի արտեր. ատանկ բանի մասին կարելի իսկ չէր երևակայել: Եթէ Քեսապի բոլոր արտերը քով քովի բերուէին ու փակցուէին, այս արտին քառորդին շափ բան չէր ստացուէր: Աստուծոյ գործին խելք հասցնելն ալ դիւրին բան չէր:

Կիները սկսան գործի: Ամէն օր նոյնը. արեւածագին հետ արտ կ'իջնէին, մինչև արեւամար: Կէսօրին կաթսաներով թանապուր կը բերուէր. կ'ուտէին արագ—արագ, աւատ հացով ու անմիջապէս ոտքի կը ցատկէին, գործի լծուելու համար:

Արեւածագէն առաջ եւ արեւմուտքէն ետք, կիները ճոռքազ կ'ընէին, նախապէս հասկաքաղ կատարուած շրջաններուն մէջ: Իրենց ձմեռուան պարէնը պիտի հաւաքէին. գոնէ ցորեն ըլլար «տան» մէջ. ան ալ ձեւով մը կ'ուտէր, եւ ողջ կը պահէր զիրենք:

Վա՛յ գեղեցիկներուն: Ասոնց համար որքան դժուար էր պատիւ պահելը: Երանի՛ տգեղներուն, որոնք իրենց տգեղութեան պարիսպին ապաւինած, աւելի դիւրութեամբ կը վանէին անատամ կրքոտները...

Աննային համար պատու հաս էր իր գեղեցկութիւնը: Միշտ ալ հոգ կը տանէին, ինքն ու Գարունը, որ կարելի եղածին շափ տխրոյժ երևնային: Յեխ կը շինէին եւ իրենց գէմքերը կը ցեխոտէին: Տակաւին կարելի եղածին շափ շատ կը փաթթէին իրենց գէմքերը հնամաշ լաթերով: Այլ կերպ չկար...

Ամբողջ երկու ամիս աշխատեցան ու տառապեցան անոնք: Ամառը արդէն իսկ կիսուած էր, երբ «տուն» դառնալու ժամը հնչեց: Հիմա ուրախ էին, որ պիտի վերադառնային: Իւրաքանչիւրը մէկ տոպրակ ցորեն եւ քանի մը մէծիտ վաստկած էր, ի դիմաց ստրկային ծանր աշխատանքի մը:

Մէկական տոպրակ ցորեն տուն տանելն ալ իր վտանգը ունէր: Օսմանեան պիտութիւնը ինք կը «զնէր» ցորենի եւ գարիի բերքերը, իր բանակը կարենալ ոտքի վրայ պահելու համար: Մէկական տոպրակ ցորեն տուն հասցնելու համար, անհրաժեշտ էր զինուորները կաշառել. մէկ տոպրակի դիմաց՝ մէկ տոպրակ ցորեն եւ քանի մը պարգու տալ...

Տուն երբ հասան Աննան ու Գարունը, «տուն» եղաւ: Փոքրերը չէին հաւատար, որ մայրիկը եւ դարձած էր Գարուն հօրքուրին հետ: Օսան աչքերը կը սրբէր ի տես ուրախութեան արցունքին: Հաննան գրկեց ու համբուրեց հարսն եւ աղջիկը: Մանչուկները փաթթուած էին իրենց մօր ու կը լային:

— Մամա, մամա, ինչո՞ւ այդքան սևեցած էք դուն եւ հօրքուրը:

Աննայն ալ խօսք էր: Անչո՞ւշտ որ անապատին մէջը, ուր ամբողջ երկու ամիս, թէկուզ եւ խոռոչի մը ծածկին կարօտը ապրած էին, գիշեր թէ ցերեկ, նոյնիսկ թուփի մը ստուերը մուրազ կը եղած իրենց, ինչպէս շատ նային:

Բայց հիմա կարելի էր նոր ձմեռը սելի լաւ ձեւով դիմաւորել. երկու տոպրակ ցորեն կար տուն բերուած, շալակով...

Աննայի բացակայութեան, մանչուկները բաւական յառաջդիմած էին: Իսկէնտէրու նէն իրենց համար գնուած երկու գոյլիկներով սկսած էին «աշխատանք»ի... մուրալու:

Սա Հաննոյին եւ Օսանին համար մեռնելու չափ դժուարին բան մըն էր, բայց եւ այնպէս համակերպած էին այդ անարգանքին ալ:

Փոքրերը, այլ փոքրերու մուրալը տեսնելով, իրենք եւս ոտք կոխած էին եւ պահանջած, որ մասնակցէին տղոց աշխատանքին: Փոքրերը կը լսէին իրենց ընկերներէն իրենց կաատարած մանր-մունր հերոսութեանց մասին: Տունէ տուն կը թափառէին եւ ժողովուրդէն բան կը մուրային: Ժողովուրդը ինք եւս դժուարին կացութեան մէջ էր: Դժուար բան էր մուրացկանութիւն ընելը այդքան համատարած թշուառութեան մէջ: Կային ոմանք, որոնք ուղղակի կը վտարէին մուրացիկ լաճերը: Երբեմն փայտ կը դործածէին, ազատուելու համար այդ «ճանճեր»էն, որոնք օրական քանի մը անգամ կը մտնէին նոյն շեմէն ներս:

Ուրիշներ աւելի կարեկից էին. իրենց չունեցածէն իսկ բաժին կը ջանային հանել մուրացիկ թշուառներուն: Այդ ձեւով կը ջանային անպենակունէն ներս որոշ բարեհաճութիւն ապահովել:

— Թող Աստուած ողորմի քեզի, աղա. թող օրերդ երկար ու երջանիկ ըլլան: Զեր գինուոր տղան թող ողջ աւողջ վերադառնայ պատերազմէն. հող բռնէք՝ ոսկի դառնայ. թող Աստուած պահէ հարսդ...

Իսկ ողորմութիւն չտուողին հասցէին պատրաստ էին ուղղելու թէ՛ մանր-մունր անէծքներ եւ թէ՛ հայհոյանքներ:

Երբեմն գոյլիկները կը լեցուէին: Քանի մը հատիկ չամիշ, քանի մը չոր թուղ, ափ մը եփած ճաշ, ափ մը ձաւար, եւ այլն: Կը պատահէր, որ շուտով լեցուէին գոյլիկները, իսկ երբեմն, ամէն բան «թէրս» կ'ընթանար: Դռնէ դուռ, փողոցէ փողոց շրջագայիլը օգուտ չէր ընէր. պարսպ կը մնային գոյլիկները:

Առաջին քանի մը օրը, Հաննոյին եւ Օսանին համար մեռնելու չափ դժուար եղած էր փոքրիկներուն մուրացածներէն բան ուտելը: Ո՛ր հասած էին, ո՛ր օրուան հասած էին, Աստուած: Իրենց արտերը, ծառերը թողած թուրք աւարտուներուն, իրենք կը ստիպուէին մուրալ կամ իրենց մատղաշ ձագուկները մղել մուրացկանութեան: Բայց սնունդի անհրաժեշտութիւնը, վերջի վերջոյ, յաղթանակած էր. կարելի չէր տոկալ պարսպ ստամոքսին պալարումներուն եւ պրկու մներուն...: Պէտք էր ուտել...

Աննային համար նոյնքան անուշի բան էր իր մանչուկներուն մուրացկանութիւնը: Ի՞նչ բուէ էր մուրալ. իրենց գիւղին մէջ այդ պիսի բան չկար: Միայն երբեմն ցիւցիկէն — գնչու — մուրացիկներ կու գային. ասոնց երեւումը թէ՛ հետաքրքրութիւն կը ստեղծէր իրենց մօտ եւ թէ՛ վախ. յատկապէս փոքրերը կը վախցնէին ճինկէնէ մուրացիկներէն, ըսելով, որ ատոնք իրենց լայն փէշերուն մէջ կը փաթթէին երեխաները ու կը տանէին...

Հիմա իր՝ Աննային, նշանաւ որ Անտոնին աղջիկը կամ Քերոբին հարսը դառնար մուրացիկներուն մա՞յր...: Ո՛չ, սա ըմբռնելի բան չէր: Դիմեց իր կողմէ դժուարին գոհողութեան մը: Իր մօտ պահած էր զոյգ մը օղեր, զորս գնած էր Իսկէնտէրունէն: Հաննոյին առաջարկեց, որ Իսկէնտէրունէն գնած ու իր մօր պահած գոյգ մը օղերը ծախէր եւ կամ պահ դնէր մէկու մը քով եւ քանի մը մէճիտ փոխ առնէր: Հաննոն սկիզբը չուզեց կատարել հարսին փափաքը: Սակայն այս վերջինը պնդեց եւ Հաննոն սեղի տուաւ:

Առաւ օղերը եւ յատուկ արտօնութեամբ գնաց մօտակայ Եպրուտ գիւղը: Հոն քուլած էր նշանաւ որ Սերգօ աղան: Հաննոն գնաց Սերգօ աղային մօտ: Կացութեան բացատրութիւնը ինքնին աւելորդ բան մըն էր. ամէն բան մէջտեղն էր: Եւ շտեղծ, որ Աննան բացարձակապէս դէմ էր փոքրերուն մուրալու:

զաղափարին: Սերգո աղան, որ Քեսապի մէջ վաշխառութեամբ կը զբաղէր, հիմա եւս, զաղթականութեան մէջ նոյն աշխատանքը կը շարունակէր: Իր աշխատանքը կարենալ տանելու համար աստօրէն կաշառք կը բաշխէր օսմանեան անկուշտ պաշտօնեաներուն, եւ այդ կաշառքը կը բարդէր իր գոհերուն տոկոսներուն վրայ:

Սերգո աղան, վաշխառուի յատուկ կեղծաւորութեամբ, սպիտակ ձեռքերը շոյելով, ասկէ-անկէ օրինակներ եւ առածներ պատմելով, Հաննոյին փոխ զբամ տուաւ: Եթէ փեց ամիսէն չվերադարձուէր փոխառութիւնը, օղերը կը դառնային իր սեփականութիւնը:

Հաննոն երկու կամ երեք լիբա կ'ակնկալէր, բայց ատոր փոխարէն հազիւ մէկ լիբա կրցաւ փրցնել: Սերգո աղան յորդորեց շյուսահատիւ Աւետարանէն օրինակներ բերաւ, յատկապէս Յոր Երանելիին օրինակը: Իր քամարին մէջէն, զողզողալով, զուրս հանեց մէկ լիբա եւ տուաւ Հաննոյին: Այս վերջինը, փոխան մուրհակի, Սերգո աղային կաշեպատ Աւետարանին վրայ երդում բրաւ եւ մեկնեցաւ...

Թէեւ ցորեն կար, թէեւ մէկ լիբան կար, բայց մանչուկները կը շարունակէին մուրալ: Բոլորը կը մուրային, իրենք շատ կը ձանձրանային անգործ: Ի՞նչ ընէին...

*
* *

Օր մը ձիմին մէկ գիրկ խաղող բերաւ տուն: Գիւղին մէջ այգի չկար: Միայն աղաներէն մէկը քանի մը տունկ որթատունկ ունէր, որուն վրայ աչքի լոյսի պէս կը դուրար: Քանի մը զամբիւղ խաղողին համար պահակ կը կարգէր, ամբողջ ամբան եղանակին:

Ձիմին ճամբուն վրայ կը սլքտար: Գիմացէն կու գար ուսաղիրներով եւ շողշողուն կոճակներով սպայ մը, որ օտար էր: Արգարեւ, օսմանեան բանակին հետ աշխատող գերմանացի սպայ մըն էր այդ: Սպան կանգ առաւ «այգի»ին քով: Նկատեց ձիմին, որ անօթի աչքերով կը դիտէր ողկոյզները: Արգարեւ, բոլոր լաճերը, տեղացի թէ գաղթական, կը սիրէին հաւաքուիլ «այգի»ին շուրջ եւ դոնձ աչքով ու տել խաղողէն: Տեղացիները ուրիշ խաղող չէին տեսած, իսկ շատ քիչերն էին, որ խաղող կերած էին: Գաղթական լաճերը կը յիշէին իրենց տուններուն առջեւ գտնուող սարբինաները, որոնց վրայ խաղողը կը մնար մինչեւ Նոր տարի: Կամ զափնիի եւ այլ ծառերու վրայ մագլցած որթատունկերուն վրայ կախուած ուլիկի մեծութեամբ ողկոյզները կը յիշէին ամէն անգամ, որ անցնէին Տէյր Աթիէի «այգի»ին քովէն:

Սպան կեցաւ ձիմին դիմաց: Գիտեց քիչ մը գոռոզ մագերով մուրացկան լաճը, կարծես թէ իր աչքերը լեցուեցան: Ո՞վ գիտէ, թերեւս հետու հայրենիքին մէջ ինք եւս ունէր մանչուկ մը կամ փոքր եղբայր մը: Թելազբեց ձիմին, որ այգի իջնէր: Մանչուկը չէր հաւատար իրեն բսւածին. սպան ձեռքի եւ ղէմքի նշաններով աղան այգի կը զրկէր: Ձիմին չէր համարձակեր այդ պիտի քայլի մը զիմել, որովհետեւ պահակը հոն էր:

Սպան վերջապէս բունեց տղեկին օձիքէն եւ «այգի»ին դուրը տարաւ գինք, ձեռքով հասկցնելով, որ խաղող քաղէ: Ի՞նչ ընէր ձիմին: Իջաւ եւ մէկերկու ողկոյզ քաղեց: Ա՛խ, երանի կարենար ու տել քանի մը հատիկ միայն այդ խաղողէն:

Գուրս եկաւ այգիէն. սպան առաւ ողկոյզները եւ դրաւ ինքնաշարժին նստարանին վրայ. զարձեւալ զրկեց տղեկը, որ խաղող քաղէր. ձեռքով հասկըցուց, որ շատ քաղէր: Գարձեւայ իջաւ եւ, հակասակ պահակին դժգոհութեան՝ քանի մը ողկոյզ բերաւ: Ի՞նչ կրնար ընել պահակը:

Երբ ձիմին բերաւ նոր ողկոյզները եւ երկարեց սպային, այս վերջինը շոյեց անոր ազտոտ գլուխը, միւս երկու ողկոյզներն ալ դրաւ գիրկը եւ պատուիրեց տուն երթալ...: Տղան չէր հաւատար աչքերուն. գիրկ մը խաղո՛ղ. սպան իր մուրալու գոյլիկն ալ անցուց ճկոյթին եւ պատուիրեց շուտով տուն երթալ: Զիմիին ոտքերը գետնէն չէին գատուեր: Յետոյ՝ սպան կարծես նոր անդրադարձաւ. տղեկը առաւ ինքնաշարժին մէջ եւ տարաւ «Պոռոշաթաղ», ուր գաղթականներուն տուներն էին...

Զիմիին ուրախութիւնը քառապատիկն էր հիմա, թէ՛ գիրկ մը խաղող ունէր եւ թէ ալ ինքնաշարժ նստած էր, նախանձոտ ակնարկներունը տակ իր տարեկիցներուն: Ինքնաշարժէն իջնելէն ետք, երկար ատեն աչքերը մնացեր էին ետին. սպան, առանց ետ դառնալու, ահագին փոշի հանելով, գնաց անդարձ:

Տան մէջ ուրախութեամբ դիմաւ որուեցաւ տղեկը: Մուրալու սկսելէն ի վեր այդքան «մեծագործութիւն» չէր կրցած ընել...

ԳԷՈՐԳ ԱՔԷԼԵԱՆ

(Շար. 10)

ՄԱՐՈՒՇ

**ԱՅՆ ՀԵՌՈՒ ԵՐԿՐԻՆ,
ՈՐ ԿԸ ԿՈԶՈՒԻ ՀԱՅՐ**



Դեմքդ յստակ ես չկրցայ պատկերել,
մշուշապատ եւ աղմատուած մնացիր՝
ինչպէս էսֆիզ անաւարտ
եւ ո՛չ ոք գայն նկարելու ցիւց ըրաւ:
Լսեր էի ու կարդացեր քու մասիդ,
նկարներդ տեսեր էի ամէն կողմ,
բայց քու դեմքիդ՝ տրոփուն ու կենդանի,
ես մնացի անհաղորդ.
Եւ այն ատեն ծնաւ թախիծ մը փոքրիկ,
որ վստահ եմ, քու հողերէդ,
սպիներէդ, խորշումներէդ, ցաւերէդ
իմ արեան մէջ էր անցեր՝
ժառանգութեան թանկ օրէնքով աներեր:

Ես քեզ բարի՛ ներկեցի,
թէ եւ հեռու եւ անձանօթ մեծ հօր պէս,
եւ ցանկացայ՝ ինչպէս թողնիկը պապին,
բայց չհասայ, հեռու, հեռո՛ւ մնացիր:

Ես չկրցայ նոյնիսկ խօսիլ քեզի հետ,
հեռու էիր, յոգնած էիր, սպառած,
ու չճանչցայ՝ ինչպէս պէտք էր ճանչնայի
եւ մնացիմք պապ ու թողնիկ՝
երկու պատ... .

*
* *

Կ'առնեմ ձայնդ. այդ ի՞նչ հեփիաթ կը պատմես,
հին օրերէդ, արեւներէդ կը պատմես,
եւ կը պատմես հողին մասին ու քարին
եւ կը պատմես սիրոյ հօր հեփիաթին...

Չեմ հասկնար.
 ոտքերուս տակ հող չկայ.
 աւազ է լոկ՝ տաք ու այրող, անկեղծան
 եւ մոխիր է, եւ անիւն է, եւ ցաւ է,
 որ աւագէն դէպի սիրտն իմ կը վագէ...

Ոտքերուս ասկ հող չկայ.
 ոտքերէս վար արիւնըս ջուր կը դառնայ,
 ոտքերէս վար հոգիս կ'երթայ աւագին,
 եւ սերմերն իմ, որոնք կրնան ծիլ բառնալ
 հողին վրայ, արդ ժայռերու կոթընած՝
 աւագին մէջ մոխիր ու ցաւ կը դառնան...

Ձայնըդ կ'առնեմ, աչքերս ա'լ քեզի եմ,
 բայց ոտքերն իմ աւագներուն մէջ խրած
 կարծես աւագ կը դառնան.
 եւ կը դառնամ ցեղախումբիս հետ ամբողջ
 վրանները փոթորիկին եւ խորշակին գոհ տուած՝
 խելակորոյս գնչուհիի պէս վշտոտ,
 եւ ցաւիս մէջ՝ խելագար ու մահահոտ:

Փոթորկայոյց անապատին մէջ այսպէս,
 նայուածքիս մէջ կը պղտորի ամէն բան,
 կը դառնամ կոյր եւ հաշմանդամ, եղկելի
 ու չեմ տեսներ ինչ դէմքըդ ծեր ու բարի,
 թէեւ ձայնըդ, որ օրերէդ կը խօսի,
 դեռ ականջիս կը հասնի...

Մարտ 1988

ԵՐԳ ՎԵՐԱԴԱՐՁԻ

«... Եւ իմն էիր դու այնքան,
 Որ քեզ մի օր անփութօրէն մոռացայ»:
 Վ. ԴԱԻԹԵԱՆ

Ներէ՛, սիրելիս,
 ոչ թէ մոռացման,
 այլ իմ քայքայու լոռիքեան համար,
 որ քեզի երկար, սեւ գիշերներ է նուիրեր միայն:

Ներէ՛, սիրելիս,
 ներէ՛, որ կրկին, բիւրերորդ անգամ
 կու գամ ես քեզի,
 կու գամ պարգօրէն, առանց հեռագրի,
 կը թակեմ հոգիդ,
 կը մտնեմ այնտեղ շփացած ու մեղկ,
 կը քրքրեմ դանդաղ մոխիրը յուշիդ
 եւ սիրոյդ առջեւ ասիերն իմ մասձ լուռ կը տաքցնեմ:

Ներէ՛, սիրելիս,
 որ իմ նամբորդի յոգնած սերերըս լքեմ քու սեմիդ,
 ներս բերեմ միայն ուրախութիւնը իմ վերադարձիս:
 Ներէ՛, որ ներս գամ,
 կարօտըդ իմեմ տաք գինիի պէս,
 կրկին գինովնամ քու տառապանքով,
 աչքերըս փակեմ քու երազային սիրոյդ հեքիաթով
 եւ թող քնանամ քու եւ գիշերուան սիրոյ շոյանքով:

Ներէ՛, սիրելիս,
 բիւրերորդ անգամ ներէ՛, արտօնէ,
 որ սիրեմ կրկին.
 ինչպէ՞ս չսիրեմ,
 երբ եղբր ես միշտ ամենայնտին մտքերուս մէջ իսկ,
 փայփայեբ եմ քեզ, ինչպէս երազն իմ՝
 մաքուր, գեղեցիկ.
 ձգտեբ եմ քեզի՝ բայց չհասնելու,
 եւ ցանկացեբ եմ՝ բայց չունենալու համար միմիայն
 եւ մնացեբ ես միշտ իմ հոգիիս գաղտնի ծալքերուն՝
 մաքուր, գեղեցիկ՝
 երազիս նման...

Բայց դուն երազ չես՝ իրա՛ւ ես, կ'ապրի՛ս,
 իմ էութեանըս ծնունդը չես դուն,
 ոչ ալ կարօտի գոյներ երազուն,
 այլ էութիւն մը՝ ամբողջ ու անհուն
 եւ ա՛յնքան նման միւսին, որ ես եմ.
 ինչպէ՞ս չսիրեմ:

Ներէ՛, որ սիրեմ.
 ներէ՛ ու գիտցիր, որ երթամ պիտի բիւրերորդ անգամ,
 երթամ անյայտին ձեռքերս այրելու
 եւ մոլորելու:

Բայց ներէ՛ կրկին իմ վերադարձին...

Մայիս 1987, Փարիզ

ՓԱՐԱՏՈՒՔՍԱԼ

Եւ քեզ սիրելով՝ քեզ կորսնցուցի:

Մերը տարրեր էր՝

ինչպէս ամէն սէր,

անխորտակելի՝

ինչպէս ամէն սէր,

եւ պատուար չկար, պէտք չէր որ ըլլար՝

մեզ կասեցնող

մեր սէրը նոր էր՝

ինչպէս ամէն սէր,

բայց ազնուական՝

ամէն հինի պէս,

եւ խաղ էր, ցաւ էր, արցունք ու հով էր,

անխուսափելի փոթորիկ նաեւ,

հորիզոնին պէս ո՛չ վախճան ունէր

եւ ոչ ալ սկիզբ.

չէինք զգացեր, թէ ե՞րբ էր ծներ,

թերեւս մե՞ր հետ, մեր ծնունդ-ցաւո՞վ,

բայց լայն էր ու խոր,

բայց մեծագոյնն էր,

նաեւ միակն էր՝

ինչպէս ամէն սէր:

Բայց քեզ սիրելով՝ քե՛զ կորսնցուցի:

Ինչպէ՞ս սիրէի.

սիրելու համար քանի՞ ձեւեր կան.

ե՛ւ հեռու էիր, ե՛ւ մօտիկ այնքան...

Ինչպէ՞ս սիրէի:

Ու եկայ քեզի՝ մերկացած բոլոր իմ ամօթներէս,

ու եկայ քեզի՝ շղարշուած սիրոյ մութ խորհուրդներով,

ու եկայ քեզի՝ մոռցած ցաւ ու վիշտ,

մոռցած ժամ ու կեանք...

Եւ եկայ քեզի՝

ինչպէս ալիքը տաք աւազներուն,

ինչպէս անձրեւը՝ հողին կարօտի,

հացին բոյրին պէս՝ ե՛ւ տաք, ե՛ւ անմեղ,

ե՛ւ հողով, ցաւով

ե՛ւ երանութեամբ...

Ինչպէ՞ս սիրէի.

«կար ու չկար»ի հեփաթներուն պէս

կայիր-չկայիր,

Եւ «չկար»ին չափ գեղեցիկ էիր,
«կար»ին պէս տխուր, «կար»ին չափ իրաւ,
Ֆեզ չսիրէի՞... .

«Կար ու չկար»էն նոր յոյզեր ծնան,
նոր ցաւեր ծնան՝ հին հանդերձներով.
դուն կայի՛ր միայն:

Ձէի կրնար գալ,
բայց իմ փոխարէն՝
բառերըս եկան,

բառերըդ գտան,

գրկեցին գիրար

Եւ դարձան համբոյր,
դարձան նամակներ կամ հեռագիրներ,
Եւ կապոյտ երագ, եւ կապոյտ արեւ... .

Մսած մնացի,
որովհետեւ ֆեզ սիրելով հանդերձ՝

կորսնցուցի ես... .

Բայց դեռ կը թուի,
երբեք չենք եղած մենք իրարու գիրկ,
իրարու հետ մերկ,
իրարու հետ երգ:
Մեր մարմիններուն երագը նոյնիսկ
հիմա կը պաղի, կը սառի հեռուն,
կը դառնայ մարմար՝ ցուրտ ու անհաղորդ,
բայց մի՛շտ գեղեցիկ,
բայց մի՛շտ բարբարոս:

Օ՛, հեռացեր ես իմ տաք ծալֆերէս,
դարձեր ես տեսիլք, միրաժ ու փրփուր... .
Երագէդ նոյնիսկ, հիմա սիրելիս,
երակներէս վար փրփուր կը հոսի,
մարմինըս ծալք-ծալք կը ժպտի կարծես
ու կը կանչէ ֆեզ.
մարմինըս ծալք-ծալք կը տաքնայ, կ'եռայ,
կը հասնի միջեւ տեսիլքիդ պայծառ,
կը ֆանդակէ հոն գիծեր, թրթիռներ,
Եւ ֆունքերէդ վար
փրփուրը շիթ-շիթ կը կաթի, կ'իջնէ,
ֆու վզիդ վրայ կրկին կ'երեսան
իմ համբոյրներուս դրոշմները հին,
կը տֆան կարծես,
կ'արիւնին կարծես,
ու կը թուի թէ

ահա կը հասնի ձեռքքու ծոծրակիդ,
 ահա կը ֆակէ խուրճը մագերուդ...
 Միայն կը թուի...
 Իսկ ես կը մսիմ,
 որովհետեւ քեզ սիրելով հանդերձ՝
 կորսնցուցի ես...

Սիրելիք ինչպէ՞ս.
 երբ էութիւնըդ գերած էր լոկ քեզ
 եւ դարձած անգութ ու քիտ բանտապահ.
 քայց կը սիրելիք բանտարկեալի պէս՝
 ոխով ու կիրքով,
 անգօր ասելով
 եւ կապոյտներու կարօտած սրտով:

Կը հաւատայի ես կարօտներուդ,
 չըսած բտներուդ,
 եւ հաւատմաներուդ,
 քեզ կը կանչէ լուռ մոխրացումով
 եւ մոխրացումէն սիրտն իմ կ'արիւնէր շրթներուս վրայ.
 ֆանի՜ անգամներ փափափեր էիր շրթներս համբուրել,
 քայց հա՞մը արեան...

Եւ քեզ սիրելով՝ քեզ կորսնցուցի:

Աշունը եկաւ եւ խառնշտկեց մագերքս թել-թել,
 շոյանքիդ հետքը չկրցաւ ծածկել.
 աշունը այնտեղ ծուարած մնաց,
 քայց շոյանքներէդ գարուններ ծնան
 եւ ո՛ր որ ծնան՝
 անծաղիկի պէս
 մագերս ներմկցան...

Քեզ կորսնցուցի...

Ամէն բան, սակայն, մի՛շտ նոյնը մնաց,
 նոյնիսկ ես ու դուն.
 կեա՞նքն էր ուրեմն,
 որ այդպէս կամաց,
 դաւադիր ու լուռ...
 մեզ լքեց յանկարծ, մեզ լքեց անդարձ...

5 Սեպտեմբեր 1988

ՅԵՏԱԴԱՐՉ ԱԿՆԱՐԿ

«Խեմքի մը օրագիր»ին հայերէն թարգմանութիւնը երկար ատենէ ի վեր կը գտնուէր մեր ձեռագիրներու թղթածրարին մէջ, բայց նոր միայն հնարաւորութիւն եղաւ «Բագին»ի մէջ տեղ բանալ անոր:

Հոս գրականութեան պատմութեան, Կոկոլի գործերէն շատերուն պէս, այս նորավէպն ալ շատ կարգացուած ու մեծ ազմուկ հանած է սուսական շրջանակներուն մէջ: Յիսունական թուականներէն քիչ մը առաջ նոյն ընդունելութեան արժանացաւ նաեւ Ֆրանսայի մէջ երբ Բուսֆուաւ Լոֆման Փրանսերէնի վերածեց զայն:

Բայց «Խեմքի մը օրագիրը» ճշմարիտ երեսոյթի մը հանգամանքը ստացաւ, երբ Սիլվի Լիւնոյի հետ թատերական պատշաճեցումը կատարելէ ետք, Բոժէ Քոճիօ զայն բեմ հանելու անձնաւորեց միակ հերոսը՝ Փոփրէշին, որ խենթի մը կերպարանքով բացայայտեց Կոկոլի օրօք սուս սակաւապիտուութեան մականին տակ թաղաւորող պաշտօնասար անձնաւորութիւններու ու սուսական պաշտօնեաներու փոխարտերութիւնները, կամայականութիւնները մէկուս, տրտուածները միասնելու, ծիծաղելի բարքերը առաջիններուն ու առօրեային տակ ճգնուած անբուժելի սլոբեր-գութիւններն ու սանձարեկ ցնորքները երկրորդ գասուն:

«Խեմքի մը օրագիր»ին համար Փարիզի թատրոններուն անօրէնները նախ դժկամութեամբ եւ քիչ ժամանակի մը համար արամադրեցին իրենց բեմերը, սակայն մեծակատարը այնպիսի՝ մեկնարանութեամբ մը ներկայացաւ, որ թերեւս նոյնիսկ իր միտքէն չէր անցներ հանդիսատեսներուն մօտ գտած շոնդալից ընդունելութիւնը, ա՛յնքան՝ որ թատրոններու անօրէնները այս անգամ իրենք սկսան ծեծել Քոճիօյի գուսը... Ամբողջ տարի մը ու աւելի ժամանակ Քոճիօ շարաթը վեց անգամ բեմ ելաւ այս կենսայայտ խենթին գերոյց յետոյ՝ Բուալիս բեմերուն վրայ, իսկ աւելի ուշ, անգլիերէնի մասնաւոր գտակրու հետեւէլ ետք՝ Անգլիոյ եւ գոյգ Ամերիկաներու մէջ:

«Խեմքի մը օրագիրը» աարբեր երկիրներու սարբեր դերասաններու կողմէ եւս փորձերուցաւ, ընդ որս եւ Պէյրութի մէջ, շուրջ տասնամեակ մը առաջ, Զօհրապ Եապուսեանի բեմադրութեամբ եւ գերակատարութեամբ, բայց մեզի ծանօթ մեկնարանութիւններէն ստացուած տպաւորութեամբ՝ Բոժէ



Բ. ՔՈՃԻՕ

Քոճիօն անկերպանցելի մնաց ու ճիշդ այդ պատճառով, գործին թատերական պատշաճեցումին հետ՝ սրտեցիներ ընթերցողին ներկայացնելու նաեւ «Լ'Աւան-սէն»ի մէկտեղած կարծիքներէն որոշ մասեր, որոնք, ո՛վ գիտէ, կրնան գուցէ ազնիւ փառասիրութիւններ արթնցնել օժտուած երիտասարդներու մտքին...



Խեմքի դերուլ

ԱՅԲԷՆ ՄԻՆՁԵՒ Յ ԹԱՏՐՈՆԸ

Ընդէ Բոճիօ ծնած է 11 Մարտ 1934ին, Լիոն:

Մագուստով խաւացի է: Հայրը՝ աշխատաւոր: 14 տարեկանին ինք եւս կ'աշխատի գործարանի մը մէջ: Կը փափաքի դերասան դառնալ, նիւթական անձուկ պայմաններէն ձերբազատուելու համար:

Նախակրթարանին մէջ կը գրաւէ ուշադրութիւնը իր ուսուցիչին, որ իրեն կը մաղթէ շարունակել ուսումը: Դժբախտաբար, չի կրնար իրականացնել այդ մաղթանքը: Կը ստիպուի ապրուստը հոգալ:

- Արտասանելու ձիրք ցոյց տուած էի, - կը պատմէ ան եւ կը շարունակէ, - ուսուցիչս ինձի կը պատմէր իր Ալիս-կին աշակերտներէն մէկուն մասին, որ դերեր կը խաղար տեղական խումբի մը մէջ: Մինչ այդ, սկսած էի շարժապատկերի սրահներ յաճախել: Կ'երագէի շարժանկարի դերասան դառնալ: Գուցէ մաե թատրոնի: Առաջին ներկայացումը տեսայ «Սելէսթեններու թատրոն»ին մէջ, երբ շուրջ տասնչորս տարեկան էի: Ամերիկեան գործ մըն էր, գոր կ'անձնատրէր Ֆերնան Կրէվի: Այդ երեկուն իմ առջես բացաւ նոր աշխարհ մը, որուն որոշեցի նուիրուիլ անմիջապէս: Իրիկունը, աշխատանքէս ետ, Սերժ Լիժէի հետ կը մասնակցէի արուարձանի մէջ տեղի ունեցող ներկայացումներու: Ներկայացուցիմք լիոնցի երիտասարդ հեղինակի մը նոր թատերգութիւնը եւ Քլիֆոր Օտէի «Կը սպասեն Լեֆթին» անուն գործը: Զայնասփիտի կայանը նոյնպէս առաջարկեց ինձի, որ մասնակցութիւնս բերեմ իրենց հաղորդումներուն:

Ընդէ Փլանչոն, որ այդ շրջանին իր առաջին փորձերը կը կատարէր, կ'առաջարկէ Բոճիոյի իր խումբին միանալ: Բայց անոր գործունէութիւնն ու պայմանները աւելի սիրողի բնոյթ ունէին, մինչ Ընդէ Բոճիօ կը զգար պէտքը ապահովելու իր նիւթականը: Թատրոնի արուեստը որդեգրելու վճռականութեամբ՝ ան կը նախընտրէր Փարիզի մէջ ներկայացումով մը հանդէս գալու վտանգը՝ իր բախտը ամբողջութեամբ փորձաքարի զարնելու համար:

- Հայրս մահացած էր եւ մայրս վստահութիւն ներշնչեց ինձի՝ արուստելով, որ մեկնիմ: Մի մոռնաք, որ տասնհինգուկէս տարեկան էի:



Երեւոյի դերով

Փարիզի մէջ, կը պաշտօնավարէ Եւրոկերութեան մէջ եւ կ'արձանագրուի Ծարլ Տիւլէնի դպրոցը: Կ'ուսումնասիրէ վիպապաշաներէն Լորէնզաժիօ եւ Քաէլիօ: Հոն կը մնայ երեք տարի եւ կը հանդիպի Բեմոն Հերմանթիէի:

- Հերմանթիէի կը պարտիմ ո'չ միայն 1952ին «Հիւմուր թատրոն»ին մէջ Եիլլէրի «Մարի Սթուարթ»ը ներկայացնելու յանձնարարութիւնս, այլեւ զգալու, որ ես ծնած եմ այս արուեստին համար:

Ուրիշ առիթ մըն այլ կը ներկայանայ իրեն: Անտրէ Քայաթէ հետը կը կնքէ պայմանագրութիւն մը՝ իր «Ջրհեղեղէն առաջ» ֆիլմին համար:

- Հոն տեղի ունեցաւ արհեստավարձ դերասանի իմ իրական սկիզբս՝ իբրեւ կոչում, որովհետեւ մինչ այդ ըստիպումս էի ապրուստս հոգալ այլ միջոցներով:

1955ին Բոճիօ կը մասնակցի Երիտասարդ Ընկերութիւններու մրցանքին, դեր ստանձնելով Նորվան Լըպէքի «Սէնի նշանուածները» թատերգութեան մէջ՝ բեմագրութեամբ Բոնբուրի դափնեկիր Բընէ Լաֆորժի. կը հաստատէ իր անհատականութիւնը: Մինչ այդ, իր գործունէութեան մէջ կարեւոր տեղ կը գրաւեն պատկերասփիւռի թատերական հաղորդումները:

- Պատկերասփիտին շնորհիւ յաշողեցայ ստանձնել դերեր, գորս թատրոնը թոյլ չէր տար մեզի՝ առետրական մտահոգութիւններով: Ինձի համար հիմնականը գեղարուեստին ծառայելն է:

1956ին Քոճիօ կը մասնակցի Քոլէժ Օտրիի «Սոլետատ» թատերախաղի ներկայացումին:

1957ին կ'անձնաւորէ «Մարդը՝ որ կը նուիրուի կատակերգութեան» թատերախաղին մէկ դերը, որ կը գրաւէ Ժան Վիլարի ուշադրութիւնը: Կը միանայ «Ազգային ժողովրդական թատրոն»ին:

Չորս տարիներու ընթացքին կը մեկնարանէ յատկապէս Պալգաբի «Ֆրգէօր»ը, Ժիտի «Էօտիփ»ը եւ Իլիըթի «Ոնիթ» մայր տանարին մէջ՝ թատերախաղերը:

- Ինձի համար Վիլարի կարեւորութիւնը այն է, որ իր աշխատանքին նկարագիրով, որակով եւ ուշիմութեամբ մէջս ամրապնդեց ա՛յն, որուն կը հաւատայի, - բեմադրի՛չը: Պէտք է խոստովանիլ, որ միայն դերասանի փորձերը զիս չէին գոհացներ: Բեմադրութիւնը կը փոխանցէր ինձի լիութեան զգացում մը, զոր նախապէս կը կարծէի ունենալ: Վիլարն էր, որ իմ մէջ խրախուսեց բեմադրիչը: Նոյնիսկ մտածած էր ինձի վստահիլ Օֆասէի «Արօր եւ աստղեր»ը թատերախաղին բեմադրութիւնը «Բեմամիէի թատրոն»ին մէջ: Մնաց որ, 1959ին, երբ «Ալիանս Ֆրանսէզ»ի մէջ իրականացուցի իմ առաջին բեմադրութիւնս հանդիսացող Քուրթ Պէպիի «Էպիլուրալի իշխանը» թատերախաղը, դեր ստանձնեցի անոր մէջ՝ դերասան մը նուազ ունենալու մտահոգութեամբ: Բեմադրիչի մտահոգութիւններէ տարուած, պէտք եղածին չափ տրամադիր չէի դերեր ստանձնելու: Կը սիրեմ առաջնորդել դերասանները եւ, առանց զգացնելու անոնց, քայլ առ քայլ տանիլ իրաբանչիւրը դէպի անհատականութեան յայտնութիւն: Խորին մէջ ես կը նախընտրեմ բեմադրութիւնը: Եթէ կարենայի խումբ մը ունենալ, կը կարծեմ, երբեք դերասանութիւն պիտի չընէի:

1960ին Քոճիօ կը լքէ «Ազգային ժողովրդական թատրոն»ը, որպէզի ստանձնէ Համլէթի գերը՝ Քարքանտոնի մէջ:

ԲԵՄԻՆ ՎՐԱՅ ԱՌԱՆՁԻՆ

- Անմիջապէս որ կարդացի «Խենթի մը օրագիրը», փափաքեցայ գայն ներկայացնել ընկերներուս: Երբ ես ու Սիլվի Լիւնոն բնագիրին պատշաճեցումը կատարեցինք, նախաատուած էր, որ զործը պատկերասփիտի միջոցաւ ներկայացուի, բայց իրագործումը ուշացաւ: Գիտցէք, որ «Խենթի մը օրագիր»ին թատերական այս մեկնաբանութիւնը նախ երազած էի իրագործել իբրեւ բեմադրիչ եւ ոչ թէ ինձի համար գեղեցիկ գեր մը ապահովելու մտքով:

Աւելցնեմ, որ դերասանի մը համար փորձառութիւն ձեռք ձգելը շատ ոգեւորիչ է:

Ամբողջ գիշերը պէտք է դիմանալ եւ էականը, կը կարծեմ, անհրաժեշտ է ձեւացնել, թէ գոյութիւն ունի չորրորդ պատմը, որ մեզ կը բաժնէ հանդիսատեսէն: Այս վերջինը պէտք է ունենայ գաղտնիք մը յայտնագործելու զգացումը, այսինքն՝ պէտք է դուրս գայ իր անտարբերութենէն:

Իմ մասին խօսելով, ամէն գիշեր ես պէտք ունիմ լման ժամի մը՝ ինքզինքս տրամադրելի դարձնելու համար: Որովհետեւ - ես հոս կը տեսնեմ Ծարլ Տիւլէնին սիրելի դաս մը - հակառակ բեմադրութեան եւ խաղին ծայրագոյն ճշգրտութեան, անհրաժեշտ է մաս մը թողուլ յանպատրաստից խաղարկութեան: Ըսեմ նաեւ, որ հանդիսատեսը պէտք է անակրկալի գայ, երբ մտածումը կամ նիւթը կը փոխուի կամ երբ լուսթիւն կը տիրէ: Ուրեմն, պէտք է որ ձեռով մը փոխանցեմ այդ յանպատրաստիցին տպաւորութիւնը, ամէն գիշեր բնագիրը վերստեղծելով...

Մա'նաւանդ պէտք չէ ձեւանալու ճրգտում ունենալ...: Ընդհակառակն, պէտք է բացակայիլ գիտնալ՝ ինքզինք յանձնել առօրեայ շարժուձեւերու, օրինակ, կօշիկները հանել, անոնց հետ խաղալ, թէչ խրմել... շատ բանական ձեւով...: Այդ շարժուձեւերուն պէտք չէ վերագրել փոխաբերական կամ այլ նշանակութիւն մը, զոր սովորաբար Ֆրանսայի մէջ կը միտին ընել:

Ս. ԼԻՒՆՈ

ՄԵՌԱԾ ՀՈԳԻՆԵՐ ՄԻ ԸԼԼԱՔ



Կոկոլէն աւելի ոչ ոք հաւատացած է արուեստի առաքելութեան, բառերու ուժին: Ան կ'ըզձար զգայացունց գործ մը երկնել, որ կարենար մարդերը արթնցնել իրենց թմբիրէն: Ստորնութիւնն ու տափակութիւնը տեսնելու հուժկու ձիրքով մը, ան վեր հանեց մարդոց մոլութիւնները, վերածեց զանոնք ծամածրուած ամբողջութիւններու եւ ներկայացուց իբրեւ ձեւազեղծող հայելիներ, յուսալով, որ ցնցումի մը պահուն անոնք կը զգաստանան եւ կը սկսին ապրիլ նոր կեանքով մը:

Իր գործը նոյնպէս մարտահրաւէր մըն է, գրգռիչ արարք մը: Այս բառին յաճախ կը հանդիպինք իր գրչին տակ: «Ես հոն սպրդեցուցեր եմ («Մեռած հոգիներ»ուն մէջ) կարգ մը գրգռիչ տեսարաններ, ա՛յն յոյսով, որ մէկը կը հայիոյէ ինձի եւ, իր գայրոյթին մէջ՝ կը յայտնաբերէ այն մշմարտութիւնը, զոր ինքս որոնւած եմ»: Ճշմարտութիւնը քողարկուած է, մարդիկ մտած են քունի մէջ եւ իրեն՝ Կոկոլին է փստահուած անոնց անըզգայութիւնը ցնցելու առաքելութիւնը, յայտնաբերելու անոնց թաքուն յատկութիւնները: Ան շարը նկարագրած է՝ պարզապէս բարին ընդգծելու համար: Ան չի բաւարարուիր ընկերութեան այլասերումը հաստատելով, թէ՛ մարդիկ շահամոլ են, թույլամորթ եւ կամ մեկուսապաշտ: Ան անձկանօք կը սպասէ զարթօնքի մը ազդանշաններուն. կը խթանէ ու անդադար կը յորդորէ, թէ հաւաքաբար ապրելով՝ առաւել եւս կը զօրանաք: Առանձինն «կողի վրայ պառկած կը մնաք, սպասելով, որ ուրիշները մամբայ բանան»: Առանձնութիւնը գէշ բան է: Պէտք է փնտոել հաւաքաբար ապրելու ձեւեր: Ներկայացումը եւ, յա՛տկապէս՝ թատրոնը, կը ծառայեն մարգարաբաժնէրը իրարու միացնելու այդ նպատակին: Ան նախզգացած է ոուս օփերային ծնունդը, արուեստի ինքնատիպ եւ վաւերական կերպերը, որոնք դեռեւս կը պակսէին Ռուսիոյ մէջ: Կոկոլ իր մեծ բաժինը բերած է հոն եւս:

Իբրեւ փոխանցման շրջանի մը վկան, առանց խոնջէնքի, այլ անձկօրէն Կոկոլ փնտոած է երևոյթներէն անդին գտնուող

իրականութիւնը, փնտռած է ոուս մարգը, ոուս հոգին՝ մայրաքաղաքները թափանցած օտար բարքերուն եւ վարդապետութիւններուն ընդմէջէն. եւ, վերջապէս, կեանքը, թաքնուած՝ այդ տեսակ մը մահուան ետին, զոր մեր մէջ կը ներարկեն սովորութիւնները, ծուլութիւնը, վայելչասիրութիւնը, պաշտօնամոլութիւնը, մէկ խօսքով՝ այն բոլորը, որոնք կ'առանձնացնեն ու կը սառեցնեն ընկերութիւնը, ուր շնչահեղձ կ'ըլլայ խեղճ Փոփրիչինը:

Այս պայքարին մէջ կը հիւծի անոր կեանքը: «Րէվիզոր»ի ներկայացումը եւ «Մեռած հոգիներ»ու առաջին մասին հրատարակութիւնը անոր համար ուղղակի ողբերգութիւններ եղան, որովհետեւ հասարակութիւնը շարդարացուց իր ակնկալութիւնը. մարդոց մէջ չտեսաւ այն բարերար անդրադարձը, զոր կը յուսար արթնցնել: Իւրաքանչիւր ոք կը զուարճանար ծիծաղաշարժ իրադարձութիւններու դիմաց միայն, կը խնդար իր մերձաւորին վրայ, առանց անդրադառնալու ծիծաղաշարժ իր կացութեան: Եւ կամ զինք մեղադրեցին ընկերային կառոյցները քննադատելու մեղքով, մինչ ինք անմիջական եւ անյետաձգելի պարտք կը համարէր բարեփոխելու մարդ էակները:

Կարելի չէ Կոկոլի մասին խօսիլ՝ առանց անդրադառնալու «Մեռած հոգիներ» գործին, որ կը համարուի մարդոց տափակութիւնը նկարագրող պոեմ մը, իրական կեանքի դիւցազնավէպ մը, իր գլուխ-գործոցը, ինչպէս եւ իր տառապանքի աղբիւրը, «իր վանականի խուցը, ուր ան պայքարեցաւ եւ տառապեցաւ մինչեւ այն օրը, երբ զինք դուրս բերին շնչասպառ», ինչպէս կ'ըսէ իր բարեկամը, Անենկով:

«Մեռած հոգիներ» գործին նիւթը հայթայթողը եղաւ Պուչկինը 1835ին, եւ Կոկոլ աշխատեցաւ անոր վրայ տասնեօթր տարի, մինչեւ իր մահը:

Առաջին եւ միակ ամբողջական մասը, որուն մենք ծանօթ ենք, ըստ իր խոստովանութեան, «Պալատին դարպաս»ն էր միայն, որ հասունցած էր իր մտքին մէջ: Չարն էր այդ: Դժոխքը: Հոն հանճարեղ աւելնով մը նկարագրած է ստորնութիւնն ու գոեհկութիւնը: Այդ բաժինը աւարտած է 1841ին: Երկրորդ բաժինը հաւանաբար ներկայացնէր Բարին, Դրախտը: Բայց ան, որ կ'ուզէ նկարագրել Բարին, պէտք է զայն կրած ըլլայ իր հողիին մէջ: Ինքը անձամբ պէտք կը զգայ այլակերպուելու, բարեփոխուելու, եւայլն, եւայլն: Կոկոլ ինքզինքին կը պարտադրէ ճշմարիտ կեանք մը: Մեծ փառասիրութիւններ ունեցող այս մարդը խոնարհաբար կը խնդրէ իր ընկերներէն, որ զինք վերընդունին, ներեն իրեն, սրբազրեն իր թերութիւնները...: Երբեք իր գրածները գոհացում չեն տար իրեն: Ատոր վրայ կ'աւելնայ հիւանդութիւնը, ինքզինք անարժան կը համարէ իր գործին եւ, ի

վերջոյ, մահէն տասը օր առաջ կ'այրէ վերջապէս իր աւարտին հասած խնդրոյ առարկայ երկին երրորդ մասը: Կը մեռնի 4 Մարտ 1852ին, անծանօթ ցաւէ մը եւ ձախողութեան զգացումէն հիւժած, իր բարեկամներուն ձգելով հետեւեալ կտակը. «Մեռած հոգիներ մի ըլլաք»:

Իր բազմակողմանի հանճարը տարբեր ճամբաներ բացած է ուսական իրապաշտութեան մէջ եւ «Խեմքի մը օրագիրը», որ կը ներկայացնէ անպաշտպան եւ խեղճ պաշտօնեայ մը, բացումը կը կատարէ «արհամարհուածներուն ու ընկճուածներուն» դատը պաշտպանող գրականութեան, որ մեծ համեմատութիւններու պիտի հասնի Տոստօեւսկիի, Թոլստոյի, Չեխովի, Կորչիի եւ շատ մը ուրիշներու մօտ: Իրեն յաջորդած բոլոր ուսու գրագէտները կ'ընդունին հիմնադիրի իր հանգամանքն ու մեծութիւնը. նոյնիսկ Տոստօեւսկին խոստովանած է. «Մեմք բոլորս Կոկոլի վերարկուէն դուրս եկած եմք»:

Կոկոլի փեթերսպօլրկեան նորավէպերու շարքը («Խեմքի մը օրագիրը», «Նեւսկիի եռանկարը», «Քիթը», «Դիմանկարը», «Վերարկուն») կը գետեղուի 1831ին լոյս տեսած «Խրեմքի բնակիչներուն հսկում»ին եւ 1842ին լոյս տեսած «Մեռած հոգիներ»ուն միջեւ: Իր բոլոր գործերը յղացուած են 1831–1835ի միջեւ, տարիներ, որոնք իրեն համար եղած են արտակարգօրէն բեղուն: Նոյն ատեն, «Մորնիկ քոնիքրի»ի թղթակից Տիքընզ, ծածկանունով մը, լոնտօնեան կեանքի պատիկ դրուագներ կը հրատարակէր միայն, բայց Պալգաք արդէն հրատարակած էր իր գործին կէսը, մինչեւ իսկ «Շուշաններու հովիտը»: Ջերմութեան եւ լոյսի հանդէպ զգայուն, ուկրանացին կրնայ գինովնալ բնութեան տեսարաններու առջեւ, եւ ուկրանացի Կոկոլը կը հասնի Սենթ-Փեթերսպօլրկ' 1829ին, երբ քսան տարեկան էր: Քաղաքը սիրոյ եւ ատելութեան խառնուրդ զգայնութիւններ կը ներշնչէ իրեն: Անիկա գեղեցիկ է, կերպրնկալօրէն: Ան անձանձիր կը նկարագրէ քաղաքի սպիտակ դիշերներու հեռանկարները, յարափոփոխ երկինքը, արշալոյսներն ու վերջալոյսները: Բայց միաժամանակ ահարկու է վերացական այդ քաղաքը, որ կառուցուած է յատակագիծի վրայ, ճահիճներու մէջ: Անիկա նաեւ մայրաքաղաք է, գործի քաղաք, ուր ընկերութիւնը կազմուած է իրերամերժ խմբաւորումներէ, — ազնուականներ, տարբեր դասակարգի պաշտօնեաներ, վաճառականներ, արհեստաւորներ, որոնք կողք կողքի կ'ապրին, առանց միախառնուելու եւ ուր տժգոյն, բայց եւ տիտղոսաւոր անցորդներ կը յայտնուին փողոցներուն վրայ ու Նեւայէն բարձրացող մառախուղներուն մէջ: Այս միջավայրը անիրական տիեզերք մը կը թուի իրեն, ուր ծնունդ կ'առնեն միայն ուրուային տեսիլներ եւ զգայախաբուցիւններ:

Այս ուրուային ծիրին մէջ, մարդկային կատակերգութիւնը

կը թուի աւելի քան փուճ, եւ վարչութիւնը, որ յաւակնութիւնը ունի լեցնելու մեծաթիւ մարդոց կեանքը, եւ որ կը զբաղեցնէ պաշտօնեաներէ բաղկացող առողջ ժողովուրդ մը, ուրիշ բան չէ, եթէ ոչ պարապ շրջագիծ մը, ուր մարդկային յարաբերութիւնները փոխարինուած են սառն քաղաքավարութեամբ մը ու կեանքին անհրաժեշտ աշխատանքները՝ անհեթեթ պաշտօնեաներով:

Այսպէս ծնունդ կ'առնէ «Խեցնթի մը օրագիրը»:

Սուսափելու համար շատ անձուկ գոյութենէ մը, խեղճ պաշտօնեայ, յետին միջոցներու կարօտ, կը բռնուի պատրանքէ մը: Իր առանձնութեան մէջ գերծ որեւէ խոչընդոտէ, անանձնական աշխարհի մը մէջ չհանդիպելով ոչ ոքի, պատրանքը կը խորանայ եւ կամաց-կամաց կը միաձուլուի իրական կեանքին հետ: Երազի եւ իրականութեան ապահարզանին վիպական թեման է ասիկա, բայց ասիկա նոյն ատեն նուազ վիպական, չափազանց այլակերպած, Կոկոլի դործերուն ամէնէն կոկոլեանն է: Քնարականութիւնը հազիւ թէ տեղ-տեղ կը զգացնէ ինքզինք: «Խեցնթի մը օրագիրը» շատ վճիտ պատկերացում մը կու տայ այս կորսուած տղուն դէպի կործանում ընթացող վերլուծման մասին, ուր Կոկոլ կը հանդիսանայ իր ժամանակին ապշեցուցիչ նախավկան:

ՍԻԼՎԻ ԼԻԻՆՕ

(«Լ'Աւան - սէն», 1962, թիւ 278)

* * * * *

ՆԻԿՈԼԱՅ ՎԱՍԻԼՈՎԻՉ ԿՈԿՈԼ

Պատմուածագիր, վրայագիր եւ թատերագիր Նիկոլայ Վասիլովիչ Կոկոլ ծնած է 20 Մարտ 1809ին, սնանկացած կալուածատիրոջ մը երգիքին տակ:

1830ական թուականներուն հրատարակած Կոկոլի պատմուածքներն ու թատերախաղերը լայն ճանաչում կ'ապահովեն հեղինական եւ ռուսական դրականութեան մէջ կը բանան նոր դպրոց մը, որ հետագային կը կոչուի քննադատական իրապաշտութիւն:

Ազգային ինքնագիտակցութեան ոգին մարմնաւորող Կոկոլի «Դարաւ Պոլլա» վէպին կը յաջորդեն «Ռեիզոր» եւ «Ամուսնութիւն» կատակերգութիւններն ու «Մեռած ձոզիներ» վէպը:

Կեանքի վերջին տարիներուն, հոգեկան ծանր տաղանայներ ապրող դրաղէար կ'այրէ իր «Մեռած ձոզիներ» վէպին երկրորդ հատորը:

Կը մահանայ 21 Փետրուար 1852ին, Մոսկուայի մէջ:



... Որքա՛ն էլ հեղինակը լցուած է ակնածանքով դէպի այն փրկարար օղուտները, որ Փրանսերէն լեզուն բերում է Ռուսաստանին, որքա՛ն լցուած է ակնածանքով դէպի մեր բարձր հասարակութեան դովելի սովորութիւնը, օրուայ բոլոր ժամերին այդ լեզունով բացատրուելը, ի հարկէ դէպի հայրենիքն ունեցած խորը սիրուց, սակայն, այնուամենայնիւ, ո՛չ մի կերպ հեղինակը չի համաձայնում, ի՛նչ օտար լեզուից կ'ուզի լինի, մի Փրագ մտցնել իր սոյն ռուսական պոեմի մէջ («Մեռած հոգիներ»):



Ինչ անիմանալի, դադտնի ուժ է քաշում դէպի քեզ: Ինչո՞ւ է լսում եւ մարդու ականջում զրնդում քո թախծալի, անլուելի բոլոր լայնքով եւ երկայնքով, ծովից ծով ձգուող երգը: Ի՞նչ կայ նրա մէջ, այդ երգի մէջ: Ի՞նչն է կանչում եւ հեկեկում եւ ճմլում մարդու սիրտը: Ինչպիսի հնչիւններ են հիւանդագիրն համբուրում եւ սլանում հողու մէջ ու կուտակում սրտիս մօտ: Ռուսի՛ա, դու ի՞նչ ես ուզում ինձանից, ի՞նչ անիմանալի կապ է թաքնուած մեր միջեւ: Ինչու ես այդպէս նայում ինձ եւ ինչո՞ւ ամէն բան, որ կայ քո մէջ, ինձ վրայ է դարձրել սպասումով լի աչքեր... («Մեռած հոգիներ»):

Ն. ԿՈԿՈՒ

ԽԵՆԹԻ ՄԸ ՕՐԱԳԻՐԸ

Երաժշտութիւն: Մոտոֆ:

(Փողոցին մէջ): Բացած է հովանոցը: Կը կրէ մեծ վերարկու մը, պէժ ու կրկնաօձիֆ: Նոյն գոյնով գլխարկ մը:

Ոչ ոք, վստահ եմ ասոր, ոչ ոք լսեց զանոնք... կասկած չունիմ այդ մասին: Ես միակն եմ... Օ՛հ, լսուած բան չէ ասիկա:

ՏԵՔՈՐ

Համեստ սենեակ մը: Աշնանային գոյներ: Գիրքեր: Կանթեղներ: Պարտէզին կողմը՝ սնտուկ մը: Բակին կողմը՝ մահնակալ մը եւ իբրեւ խոհանոց յարդարուած խորշ մը, խորշին մօտ՝ օնախ մը: Կեդրոնը սեղան մը: Խորքի պատին օրացոյց մը:

Կը մտնէ յանկարծօրէն ու հանդերձակալէն կը կախէ հովանոցը, վերարկուն եւ գլխարկը: Կը կրէ ռուս պաշտօնատարներու Բաղաֆային տարագը: Թափշէ օձիճով սրնագոյն գգեստ ու պէժ ծիլէ:

Կը հաւաքէ սեղանը, կը սրբէ գայն Բուրջի կտորով մը, կը թօթուէ Բուրջի կտորը, կ'երթայ դէպի անկողին, կը հանէ կօշիկները, կը հանէ օրագիրը անկողնին տակէն (Երաժշտութիւն. Յիւր՝ օրագրութիւն), կ'երթայ դէպի սեղան, կը վառէ լամպը, կը դնէ ակնոցը եւ կը սկսի գրել:

Աչսօր... 3 Հոկտեմբերին, տարօրինակ արկածախնդրութիւն մը պատահեցաւ ինծի...: Առտու, անմիջապէս որ արթնցայ՝ կանչեցի Մարուան: Օ՛հ, լսուած բան չէ ասիկա: Մարուան բերաւ ինծի ներկուած կօշիկներս: Ժամը հարցուցի իրեն...: Տասը անց էր: Ածապարեցի հագուիլ: (Վար կը դնէ գրիչը եւ ռաֆի կ'ելլէ: Երաժշտութիւն. Յիւր՝ բաժանմունքի պետը): Կը խոստովանիմ, որ երբեք նախարարութիւն պիտի չերթայի եթէ նոյնիսկ վայրկեանով մը նախատեսած ըլլայի (Կ'առնէ Եռուցիչը, կը դնէ կրակարանին վրայ ու կը բորբոքէ կրակը) մեր բաժանմունքի պետին թթուած դէմքը: Երկար ատենէ մը ի վեր կ'ըսէ ինծի. «Բայց ի վերջոյ, ինչպէ՞ս կ'ըլլայ, որ դուն նման խառնաշփոթութիւն մը կ'ունենաս գլխուց մէջ, հը՞: Օրեր կան, երբ ինքզինքդ կը նեղես այսահարի մը պէս: Աչնպիսի՛ խառնափնթոր գործեր կ'ընես (կօշիկները կը սրբէ), որ նոյնիսկ սատանան պիտի չկրնար անոնց մէջէն ելլել. կը գրես, կ'անդրադառնա՞ս բնաւ: Մանրատառ խորագիր մը...: Ո՛չ թուականը կ'արձանագրես, ոչ ալ աղբիւրը կը չիշատակես: «Աղբի՛ւրը...»: Հըմ. անիծեա՛լ թռչուն: Վստահաբար կը նախանձի ինծի, որովհետեւ կ'աշխատիմ անօրէնի գրասենեակին մէջ եւ ես եմ,

որ կը տաշեմ անոր բոլոր մատիտները...: Օ՛հ, այո՛...: Կարճ. նախարարութիւն պիտի չերթայի, եթէ չոյս չունենայի զանձապահը տեսնելու: Ամսականիս հաշուոյն կ'ուզէի մասնավճար մը առնել այդ ձեր կծծիէն: Ա՛հ, ինչ արարած է նաեւ այս մէկը: Մասնավճար մը ընելէ առաջ, Վերջին Դատաստանը կը կատարէ: **(Կը նստի մահճակալին վրայ):** Տէ՛ր, կը սկսիս աղերսել, չորս կտոր կ'ընես ինքզինքդ ու եթէ նոյնիսկ թշուառութեան մէջ գտնուիս, մէկ կոպեկ իսկ չի տար քեզի այդ անիծեալ ճաղատ սատանան: **(Ուտի կ'ելլէ, կը հանէ մուճակները սեղանին տակէն ու կ'անցընէ ռաֆիճ):** Եւ մտածել, որ սեփական տանը մէջ իր խոհարարուհին կ'ապտակէ զինք: Ատիկա ամէն մարդ գիտէ:

**Կ'անձրեւէ:
Կ'երթայ խոհանոց թէյը պատրաստելու:**

Ոչ մէկ շահ կայ նախարարութեան մը մօտ աշխատելուն մէջ: Ո՛չ մէկ: Բացարձակապէ՛ս շահ չկայ տակէ: Պարագան բոլորովին տարբեր է կառավարութեան, քաղաքային կամ առեւտրական բաժանմունքներուն մէջ: Այդ բաժանմունքներուն պաշտօնատարները մեզմէ նուազ լաւ հաստատուած են, նոյնիսկ այնպիսիներ կան, որոնք անկիւնները կծկտած են պարզապէս մրտտելու համար: **(Կը լեցնէ թէյը զաւաթի ափսէին մէջ):** Անոնք կը հազնին աղտոտ վերարկուներ եւ ունին կերուխումէ չղփացած այնպիսի՝ դիմազիծեր, որ մարդ կը պատրաստուի թքնելու անոնց վրայ: Բայց պէտք է տեսնել վիլլաները, ուր կը բնակին: Հարկ չկայ անոնց յախճապակեայ ոսկեզօծ սկահակներ նուիրելու: Անոնք պիտի պատասխանեն ձեզի. «Ատիկա ա՛ն առաւելն յարմար է անասնարոյժի մը: Բայց զոչք մը արշաւասոյցը ձիեր, կառք մը կամ քամթորէ վերարկու մը ունենալու պարագային, այո՛, կարելի է»: **(Կ'երթայ խոհանոց շաքար բերելու, կը վերադառնայ սեղան ու կը խմէ):** Այնպիսի՛ հոգիեր ունին, ա՛յն աստիճանի ազնիւ, որ իբրեւ իրենց խոստովանահայր կարելի է միայն Աստուած նշանակել: Եւ այնպէս նուրբ է իրենց արտայայտութեան եղանակը. «Հաճեցէք թոյլ տալ իմ գմելիովս տաշիլ ձեր մատիտները»: Ու գեռ այնպիսի՛ լաւ ձեւով մը կը խուզեն բարեխօսը, որուն վրայ այլեւս իր շապիկէն զատ բան չի մնար:

Ճիշդ է, որ մեր մօտ, ընդհակառակն, աշխատանքը առանձին պատուանիշ մը ունի: Գրասենեակներուն ու նրբանցքներուն մէջ այնպիսի՛ մաքրութիւն մը կը տիրէ, որուն նմանը կարելի չէ տեսնել ո՛չ կառավարական տան, ո՛չ քաղաքային եւ ոչ ալ առեւտրական գրասենեակներուն մէջ: Սեղանները շինուած են ափսոսելու եւ բոլոր պետերը «դուք»ով կը խօսին հետոյ...: Այո, կը խոստովանիմ, եթէ աշխատանքին մէջ այս շեշտուած տարբերութիւնը չըլլար, շատոնց ձգած կ'ըլլայի նախարարութիւնը: **(Կը խմէ եւ կը վերջացնէ թէյը):**

**Երաժշտութիւն. Գիւր՝ անձկութիւն: Անձրեւ:
Կը վերսկսի խմբագրել իր օրագրութիւնը:**

Հագած էի հին ու ամէնօրեայ վերարկուս եւ որովհետեւ չորդառատ կ'անձրեւէր, հետս առած էի նաեւ հովանոցս: Փողոցները ամայի էին: Հանդիպեցայ միայն տիկիններու, որոնք ինքզինքնին կը պաշտպանէին իրենց հագուստներուն քանդակներով: Հանդիպեցայ նոյնպէս հովանոցներու տակ ծուարած վաճառականներու եւ կառապաններու: Իբրեւ ազնուական կար միայն ինծի պէս պաշտօնատար մը, որ քարշ կու գար: անմիջապէս որ զինք տեսայ քառուղիին վրայ, հասկցայ խնդիրը. «Հէ՛, հէ՛, բարեկամ, դուն նախարարութիւն չես երթար, կը շտապես այն աղջկան համար, որ հոն կը դեզերի ու դուն կը նայիս անոր սրունքներուն: Ի՛նչ կեղծաւոր ենք մենք՝ պաշտօնատարներս: Կը խոստովանիմ, որ այս մարդին մէջ սեւէ պաշտօնեայէ ետ չենք մնար: **(Ուտի կ'ելլէ. կոճակը՝ հանդիսականներուն: Կ'երթայ բեմին**

խորքը եւ ապա կը վերադառնայ իր սեղանին): Թող գլխարկ կրող կին մը ցոյց տայ միայն իր քիթին ծայրը եւ մենք ուղղակի՝ յարձակման կ'անցնինք:

Ուտի, արոտի ետեւ:

Մինչ այսպէս կը խորհրդածէի, կառք մը կանգ առաւ այն վաճառատան առջեւ, որուն յախճապակիին դիմաց կը սլքտայի: Անմիջապէս ճանչցայ զայն: **(Կ'անցնի Բովնտի կողմը, մահնակալին առջեւ):** «Բայց ասիկա մեր տնօրէնին կառքն է: **(Ետեւ կը նայի):** Անիկա ընկիւք ոչինչ ունի այս վաճառատան մէջ: Անկասկած աղջիկն է եկողը...: Անշո՛ւշտ...: Ինչ պիտի գնէր մեր տնօրէնը այդ ձեւի խանութէ մը»: **(Երաժշտութիւն. ցիւր՝ Սոֆի: Կը կոթնի բակի կողմի պատին):** Պատին կոթնելով ինքզինքս աննշմարելի դարձուցի: Ծառան բացաւ դուռը եւ մեր տնօրէնին աղջիկը, պզտիկ թռչունի մը պէս, ինքզինք վար նետեց կառքէն: Ակնարկ մը նետեց աղջին, ու ակնարկ մը՝ ձախին: Փայլակնային պահու մը նշմարեցի աչքերը, թարթիչները...: Տէ՛ր իմ Աստուած: Կորսուած էի, կորսուած: Ուրկէ՞ թելադրուեցաւ ինծի նման յորդառատ անձրեւի մը դուրս ելլելու մտածումը: **(Կ'առաջանայ դէպի օնախը):** Գնա՛ հաստատէ հիմա, որ կիները այս բոլոր արդուարդներուն կիրքը չունին: Չճանչցաւ զիս, մնաց որ, կրցածիս չափ ճիգ ըրի, ինքզինքս առաւելագոյնս քողարկելու համար, վասնզի վերարկուս շատ աղտոտ էր, եւ որ աւելին է՝ կարուած էր ժամանակավրէպ ոճով մը: **(Կը նայի վերարկուին):** Մարդիկ հիմա կը հագնին մեծ օձիքով վերարկուներ, մինչդեռ իմ վերարկուն երկու պզտիկ օձիք ունի, մէկը միւսին վրայ: Եւ յետոյ՝ կտաւ է... եւ շատ կոշտ: Վերջապէս, գէշ կերպով գունաթափուած:

Իր պզտիկ շունը, որ չչաջողեցաւ վաճառատան գունէն ներս մտնել, կեցած էր փողոցին մէջ: Ես կը ճանչնայի այդ պզտիկ շունը: Կը կոչուի Մէտֆի: **(Կը ծոփ ալնայէ, իբր թէ խօսիլ կ'ուզէր կենդանիին հետ):** Հէ՛, դուն կը կոչուիս Մէտֆի, դուն սիրուն պզտիկ թուխու մըն ես...: «Բարեւ, Մէտֆի»: Բայց ասուասիկ ուրիշ մը: Որո՞ւ մտքէն կ'անցնէր ասիկա: Նայեցայ շուրջս եւ տեսայ երկու ուրիշ տիկիներ, որոնք հովանոցներ բռնած կ'անցնէին: Մէկը պառաւ, միւրը՝ շատ երիտասարդ: Բայց անոնք անցած էին զիս եւ արդէն չիտուն մեթր հեռաւորութեան մը վրայ կը գտնուէին, երբ իմ կողքիս ձայնը կրկին անգամ թնդաց. «Իուն ազնիւ չես, Մէտֆի»: Ի՛նչ սատանայութիւն: Կը տեսնեմ, որ Մէտֆին կը հոտորտայ այն շունը, որ մինչեւ հող հետեւած էր երկու տիկիներուն: **(Կը վերադառնայ Բովնտի բակը):** «Օ՛հ, բայց արդեօք գինով չէի՞»: Օ՛հ, ո՛չ, ո՛չ...: Ինծի կը թուի, թէ ասիկա հագուադէպօրէն կը պատահի ինծի: «Օ՛հ, ո՛չ, Ֆիտէլ, մի՛ հաւատար»: **(Արագօրէն կը դարձնէ գլուխը):** (Տեսայ, իմ աչքերով տեսայ, որ Մէտֆին կ'արտասանէր այս բառերը): Եղայ հոֆ, հոֆ, եղայ հոֆ, հոֆ, հոֆ, շատ հիւանդ: Օ՛հ, այս շունը: Նայեցէք քիչ մը այս շան: Խոստովանիմ, որ յանկարծօրէն ապուշացա՛մ մարդոց պէս անոր խօսիլը լսելով: Բայց խնդիրը քիչ մը խորացնելով՝ պէտք չէ որ զարմանամ:

Կրկին կը նայի իր սեղանին առջեւ:

Արդարեւ, մարդիկ արդէն նշմարած են նման օրինակներու մեծ թիւ մը աշխարհի վրայ: Կը կարծուէր, թէ Անգլիոյ մէջ մարդիկ տեսած են ձուկ մը, որ ըսած էր երկու բառ այնպիսի՝ տարօրինակ լեզուով մը, որ երեք տարիներէ ի վեր ամբողջ աշխարհի գիտնականները հակած են խնդրին վրայ, առանց զիւտ մը ընելու: Ես թերթերուն մէջ կարդացած եմ նաեւ, որ երկու կովեր մտած են խանութի մը մէջ՝ կէս քիւօ թէյ գնելու համար: Բայց շատ աւելի անակնկալի եկայ, երբ Մէտֆին ըսաւ. «Գիտե՛ս, Ֆիտէլ, ես քեզի գրեցի»: Անկասկած այս անպիտան Սանթորը քեզի բերած չէ նամակս: **(Կ'ելլէ ուտի)**

Եւ կ'երթայ դէպի բեմին կեդրոնը): Թող ամսականս ջնջեն, եթէ կեանքիս մէջ լսած ըլլամ, որ շուն մը կրցած է գրել: Բայց բոլորովին ալ անկարելի չէ: Մնաց որ, խնդիրը միայն գրելուն մէջ չի կաշանար: Պէտք է նաեւ ճշգրտորէն գրել: Եւ միայն ազնուական մը կրնայ ճշգրտորէն գրել: **(Կր նստի կրկին, աչքերը տախտակամածին յառած, ա'յն ձեռով, որ իբր թէ շան հետ կը խօսի):** Անշո՛ւշտ: Կան տակաւին վաճառատան ասմիկ դպիրներ, եւ երբեմն նոյնիսկ ստրուկներ, որոնք կրնան ձափոտել սեւով ճերմակի վրայ: Բայց անոնց գրութիւնները շատ յաճախ մեքենական են: Ո՛չ ստորակէտ ունին, ո՛չ վերջակէտ եւ ոչ ալ ոճի մտահոգութիւն:

Ուրեմն զարմացայ: **(Կ'առնէ գրիչը):** Խոստովանիմ, որ ժամանակէ մը ի վեր, ինծի կը թուի լսել եւ տեսնել բաներ, զորս ոչ ոք տեսած կամ լսած է: «Լաւ, ես կ'ուզեմ հետեւիլ այդ քածին եւ գիտնալ, թէ ո՞վ է ան եւ ի՞նչ կը մտածէ»: **(Վերաբաղը կ'ընէ):** Բացի հովանոցս եւ արագացուցի քայլերս՝ երկու տիկիններուն հետեւելու համար: Անոնք բռնեցին Փուա փողոցը եւ մտան քաղքենիներու փողոցը, եւ ապա, կահագործներու փողոցէն անցնելով՝ բռնեցին Քոքուչկինի կամուրջին ուղղութիւնը եւ կանգ առին մեծ տան մը առջեւ:

«Բայց ես կը ճանչնայի այդ տունը: Ինչ չիմար եմ: Ինչպէ՞ս չճանչցայ դայն քիչ առաջ»: Բայց այո, Զվէրկովի տունն է: Օ՛հ, տուն...: Աւելի ճիշդը՝ զօրանոց մըն է անիկա, ուր կ'ապրին ամէն տեսակ մարդիկ՝ խոհարարներ, ճամբորդներ: Եւ իմ պաշտօնակիցներէս ոմանք, որոնք շուներու պէս մէկը միւսին վրայ գիզուած են: Հոն ունիմ նաեւ բարեկամ մը, որ հրաշալիօրէն թրոմփէթ կը նուագէ: Կը բնակի երրորդ յարկը: Տիկինները, ուրեմն, բարձրացան չորրորդ յարկը: «Լաւ է, այսօր հոն կը մնամ եւ միտք կը պահեմ տեղը: **(Կը կեդրոնացայ եւ կը գրէ):** Ու կ'աշխատիմ առիթէն օգտուիլ»: **(Վերստին կը կարդայ):** Կը կրէի իմ հին ու ամէնօրեայ վերարկուս: Յորդառատ անձրեւ կը տեղար...: Կառք մը կանգ առաւ...

Երաժշտութիւն:

4 ՀՈԿՏԵՄԲԵՐ

Կը մտնէ ներս, կը տեղատրէ հովանոցը, կը կախէ թիկնոցը եւ կ'երթայ նստիլ օնախին մօտ: Երաժշտութիւն. Աիւթ՝ Սոֆի:

Իբր թէ իր դասակարգին պատկանող երիտասարդ աղջիկները արտօնուած ըլլային այսքան ուշ դուրս ելլելու...: **(Ժամբ կը հնչէ):** Բայց որքա՛ն չիմար եմ ես, աւելի կանուխ կրնայի գացած ըլլալ հոն: Ոչի՛նչ: **(Ժամացոյցը):** Կ'երթայ ու սեղանին վրայ կը փնտռէ օրագիրը ու կը վերադառնայ նստելու օնախին մօտ: Երաժշտութիւն. Աիւթ՝ օրագիր: Կը կարդայ): Տեսնեմք, այսօր Զորեքչարթի է: Այս առտու, ժամը եօթուկէսին, զացի, ինչպէս ամէն Զորեքչարթի, մեր տնօրէնին գրասենեակը: **(Կը սեղմէ օրագիրը կուրծքին):** Աճապարեցի կանուխ հասնիլ: Տեղաւորուեցայ եւ անոր համար տաշեցի բոլոր մատիւնները:

Երաժշտութիւն. Աիւթ՝ տնօրէնը:

Անկասկած որ մեր տնօրէնը շատ խելացի մարդ մըն է: Բոլոր իր դարակները լեցուն են գիրքերով: Այս ամբողջը անշուշտ ուսում կը նշանակէ, բայց ուսում մը, որ մատչելի չէ իմ դասակարգիս մարդոց: Միշտ ֆրանսերէնով է ան կամ գերմաներէնով: Եւ երբ իրեն կը նայիմ, ի՛նչ լրջութիւն մը կը փայլի աչքերուն մէջ: Երբեք լսած չեմ անոր անօգուտ խօսք մը արտասանելը: Աչնպէս է, որ երբ իրեն թուղթ մը երկարէք, կը հարցնէ.

- Օդը ինչպէ՞ս է:

Ոտֆի կ'ելէ բան մը սպասողի, ակնկալողի երեւոյթով:

- Խոնաւ, ձերդ վսեմութիւն, խոնաւ... ցուրտ եւ խոնաւ:

Ա՛հ, մեր խմորով կազմուած մարդ մը չէ վերջապէս: Անիկա կառավարական մարդ մըն է: **(Կ'առաջանայ դէպի սեմեակին կեդրոնը):** Յամենայնդէպս, կը նկատեմ, որ կը սիրէ զիս: Եթէ ազջիկը ինք եւս կարենար...: Է՛հ: Մտահակութիւն...: Լա՛ւ է, լա՛ւ է...: Աւելի լաւ է որ լռեմ:

Կը տեղատրէ օրագիրը սեղանին վրայ, կ'երթայ բանալու արկղը եւ կ'ուղղուի դէպի փարաւանը, շատ արագ շարժումով մը:

Կարգացի «Հիւսիսի մեղուն»: Ի՛նչ ապուշ են այս ֆրանսացիները: Ի վերջոյ ի՛նչ է իրենց ուզածը: Մամլոյ ազատութի՛ւն: Անկեղծօրէն պիտի ուզէի ձերբակալել տալ զանոնք բոլորը եւ անցընէի գաւազանէ: **(Կը վերադառնայ սեղանին):** Թերթին մէջ կարգացի նաեւ պարահանագէսի մը նկարագրութիւնը, գրուած՝ մեծ շնորհքով, բուրսի կալուածատէրներէն մէկուն կողմէ: **(Կը նշանակէ, թէ քուրսի կալուածատէրները լաւ կը գրեն):**

Ատկէ ետք տեսայ, որ ժամը տասներկուքը կէս անց էր, տասներկուքուկէսէն քիչ մըն ալ աւելի, եւ որ մեր տնօրէնը իր սենեակին... Բայց, ժամը մէկուկէսի ատեններուն այնպիսի՛ միջագէպ մը պատահեցաւ, զոր ո՛չ մէկ գրիչ կրնայ նկարագրել: Դուռը բացուեցաւ, ոտքի ելայ անմիջապէս, թուղթերս ձեռքերուս մէջ բռնած, կարծելով որ ներս մտնողը տնօրէնն էր: Բայց ան էր, աղջիկը **(Երաժշտութիւն. Գիւփ՝ Սոֆի):** Նոյնի՛նքը: Դրախտի՛ սուրբեր, ի՛նչ վայելչութեամբ հագուած էր: Կը կրէր ճերմակ շրջագգեստ մը, ճիշդ այնպէս՝ ինչպէս կարապը կը կրէ իր աղուամազը: Իրական շքեղութիւն մը: Եւ ակնարկը, որ նետեց վրաս: Արեւ մը, Աստուած վկայ, ճշմարիտ արեւ մը:

Պզտիկ բարեւ մը տուաւ ինծի եւ հարցուց.- «Հայրիկս հոս չէ՞»: Ա՛յ, ա՛յ, ա՛յ: Ինչ ձայն: Պզտիկ արտոյտ մը, այնքան ճշմարիտ, որքան ես եմ, պզտիկ արտոյտ մը: **(Յանկարծօրէն ոտֆի կ'ելէ, ետ կու գայ դէպի արկղը, կ'անցնի սեղանին առջեւէն, կանգ կ'առնէ բեմին կեդրոնը, կը ձեռնարկէ):** Օ՛, ո՛չ: Ձերդ վսեմութիւն, զիս մի պատժէք, բայց եթէ ատիկա հաճոյք կը պատճառէ ձեզի, ո՛ն, պատժեցէք զիս ձեր օգոստափառ պզտիկ ձեռքով: Ահաւասիկ ինչ որ պիտի ուզէի ըսել, ինչ որ պէտք է ըսէի, բայց, զրո՛ղը տանի, լեզուս բռնուեցաւ եւ ես պարզապէս սկսայ թոթովիլ. «Ո՛չ, ո՛ն, հէ՛օ, ես, ո՛չ...»:

Միշտ ձերադիր:

Նայեցաւ ինծի եւ աչք մը նետեց զիրքերուն եւ վար ձգեց թաշկինակը: Ծտապեցի, սահեցայ այդ անիծեալ սալայատակին վրայ եւ քիչ մնաց, որ քիթս փրթէր: Բայց անմիջապէս գտայ ինքզինքս եւ վերցուցի թաշկինակը: **(Ոտֆի կ'ելէ):** Սուրբ հրեշտակներ: Ի՛նչ թաշկինակ, ամենանուրբ մետաքսով: Ուրիշ բան չկայ: Առանց սուտի ան պետական մարդ կը հոտէր...

Կը համբուրէ բաշկինակը եւ կ'առաջանայ բովնոսի բակրու կ'երկարէ ձեռքը՝ գայն աղջկան վերադարձնելու ձեռով մը: Երաժշտութիւն. Գիւփ՝ Սոֆի:

Ան շնորհակալութիւն չայտնեց ինծի թեթեւ ժպիտով մը, որ հազիւ կրցաւ բանալ իր քաղցր շրթունքները: Ու մեկնեցաւ:

Հոն մնացի առնուազն մէկ ժամ, առանց շարժելու: Յանկարծ ծառայ մը եկաւ ու ըսաւ ինծի. «Տուն գացէք, Օկզանս Իվանովիչ, նորին վսեմութիւնը մեկնած է արդէն»: **(Կը վերադառնայ դէպի խորքը):** Ծառաներու ներկայութիւնը չեմ կրնար տանիլ: Անոնք միշտ կը փքանան նախասենեակներու մէջ եւ չեն բարեհաճիր նոյնիսկ զլիսու նշան մը ընել ձեզի: Ու դեռ, եթէ եղածը միայն այս ըլլար: **(Կը վերադառնայ դէպի սեղան):** Օր մը, այդ կոպիտներէն մէկը յանդգնեցաւ ծխախոտ հրամցնել ինծի, առանց տեղէն շարժելու: Գուն չե՞ս դիտեր, ապո՛ւշ ստրուկ, որ ես ազնուական ծագումով պաշտօնատար մըն եմ: **(Կ'երթայ նստելու անկողինին վրայ):** Ամէն պարագայի վերցուցի գլխարկս եւ որովհետեւ այս պարոնները երբեք յանձն չեն առներ ձեր վերարկուն ձեզի երկարել՝ ես ինքս անցուցի զայն վրաս ու գացի տուն:

Կը հանէ կօշիկները եւ վերարկուն:

Գրեթէ ամբողջ օրը երկարած մնացի անկողինիս վրայ: Արտագրեցի բանաստեղծական շատ գեղեցիկ տողեր.

Մէկ ժամ հեռու բարեկամուհիէս,
Կը տեւէ կարծես տարի մը ամբողջ,
Եթէ պարտ է ինձ իմ կեանքս ատել,
Մահը անելի քաղցր է, պոռացի:

Վստահաբար Պուշկինն է, որ գրած է այս տողերը: **(Երաժշտութիւն. ճիւղ՝ Սոֆի):** Երեկոյեան, վերարկուիս մէջ ամփոփուած՝ գացի մինչեւ նորին վսեմութեան դռնառաջքը եւ հսկեցի երկար վայրկեաններ: Եթէ դուրս ելլէր կառք բարձրանալու համար, կրնայի անգամ մը եւս նայիլ իրեն...: Բայց չերեցաւ:

Հեծկտալով կ'իյնայ անկողինին վրայ:

6 ՆՈՅՆՄԲԵՐ

Երաժշտութիւն. ճիւղ՝ բաժանմունքին պետր:

Շապիկով Բնացած է մահնակալին վրայ: Կ'ելլէ եւ կ'ուղ-
ղուի դէպի սեղանը:

Բաժանմունքի պե՛տ, բաժանմունքի պե՛տ: Ի՞նչ է բաժանմունքի մը պետր:

Վար կը ձգէ պնակ մը, որ կը կոտրի:

- Բայց ի վերջոյ, արարքներուդ համար հաշիւ կու տա՞ս դուն քեզի:

Կ'անցնի խոհանոցին ետեւը: Կ'աներեւութանայ:

- Ինչպե՞ս: Ինչ որ կ'ընե՞մ: Բայց ես ոչինչ կ'ընեմ:

Կը վերադառնայ՝ անել մը ձեռքին:

- Դեհ, մտածէ՛ քիչ մը: Երեսունէն հեռու չես, չէ՞: **(Երադրած է ու կը հաւաքէ կոտրուած ամանին բեկորները):** Ժամանակն է, որ հաւաքես մտքերդ: Ի վերջոյ ի՞նչ կը կարծես ինքզինքդ: Կը կարծե՞ս, որ անտեղեակ եմ քու բոլոր ստահակութիւններուդ: Ահաւասիկ հիմա ալ սկսած ես տնօրէնին աղջկան շուրջ դառնալ: Բայց անգամ մը նայէ դուն քեզի, մտածէ վայրկեան մը, թէ ո՞վ ես դուն: Զերօ՛ մը, ո՛չ աւելի: Եւ սու մը

չունիս: Վայրկեան մը հայելիին մէջ դիտէ ինքզինքդ: Ու հակառակ այս բոլորին, յաւակնոտութենէ զերծ չես:

Կ'երթայ դէպի հայելին ու կը դիտէ ինքզինք:

Վա՛յ թշուառական. դէմքը առած է դեղագործի մը պատրաստած հեղուկ- ներուն գոյնը: Փանկին վրայ ունի ցցուած քիչ մը մազ, ոլորուած փունջի մը ձեւով, տեսակ մը վարդաջուրէ օծանելիքով օծանելով, զայն կը պահէ բաց օդին մէջ, եւ ինքզինք կը պատկերացնէ այնպիսի՝ ձեւով մը, որ կը կարծէ, թէ միայն իրեն արտօնուած է ատիկա բնէլը: Գիտեմ, քաջ գիտեմ, թէ ինչո՞ւ շարուած է ինծի դէմ: Նախանձոտ է: Որոշապէս զարմացաւ բար- հացակամութեան այն մասնաւոր նշաններէն, որոնք ինծի շնորհուեցան: Բայց ես կը թքնեմ վրան: **(Կը թքնէ եւ կ'աներեւութանայ խոհանոցին ետեւը):** Ի՛նչ աղուոր պաշտօն է պալատի մը խորհրդական ըլլալը: **(Բեմ կու գայ՝ թի մը ձեռքին):** Ան կ'անցընէ ժամացոյցին ոսկիէ շղթայ մը, կ'ապսպրէ երեսուն ուրբի արժող կօշիկներ: Եւ յետո՞ւ... Թող գրողը տանի գինք: **(Կ'երթայ եւ կու գայ, կը շարժակի թիով, կը խօսի հայելիին):** Ինչ կը վերաբերի ինծի, արդեօք ճի՞շդ է, որ հայրս եղած է կոշտ շինական մը, դերձակ կամ հնթապաշտօնեայ: Ես ազնուական եմ եւ կրնամ, ինչո՞ւ չէ, ես ալ պաշտօնի բարձրացում ունենալ: **(Կը դնէ պնակին բեկորները թիին մէջ):** Հագիւ քսանինը տարեկան կամ: Քսանինը, մեր ժամանակաշրջանին, այն տարիքն է, երբ մարդիկ հագիւ կը սկսին իրենց ասպարէզը: Սպասէ բարեկամ: Մենք ես պիտի դառնանք զօրավար եւ նոյնիսկ զօրավարէն աւելի լաւ բան մը, եթէ Աստուած ուզէ: **(Կ'երթայ ձեռքը լուալու):** Մենք պիտի շինենք քու համբաւէդ աւելի լաւ համբաւ մը: Գլխուդ մէջ դրած ես այն գաղափարը, որ քեզմէ զատ աւելի վայելուչ մարդ չկայ: Թող «Րուխի» վաճառատունէն մէկ հագուստ միայն տան ինծի, կապեմ փող- կապ մը քու փողկապիդ պէս եւ պիտի տեսնես, որ այն ատեն ներբաններուս պիտի չհասնիս: **(Վերստին ձեռք կ'առնէ թիւն):** Դրամ չունիմ: Դժբախ- տութիւնը հո՞գ է:

Դուրս կ'ելլէ: Պնակեղէններու ձայն:

8 ՆՈՅՆՄԲԵՐ

Կառքը: Վալսի եղանակով մրմունջ մը կը լսուի Բուլխէն: Կը մտնէ բարձր գլխարկով մը եւ կը կրէ փէլրթիմի ձեւով հաստ ու սեւ վերարկու մը: Պարելու ձեւով Բանի մը Բայլ կը նետէ, կ'երթայ ու կը վառէ խորժի կանթեղը եւ կը նստի անկողինին վրայ: Կը հանէ գրպանէն յայտագիր մը ու կը կարդայ.

«Ֆիլոթէ եւ Միրոսլա», «Սիրամրցորդները կամ չորս փեսացուները եւ հարսնցու մը», *ուս ապուշի մը կողմէ գրուած թատերախաղ մը: Ծառ խնդացի: Կար նաեւ երգախառն թատերախաղ մը, դատական գործակալի մը եւ, ի՛ մասնաւորի, գողէճի մը արձանագրութիւնները կատարող պաշտօնեայի մը վրայ գրուած հաճելի բանաստեղծութիւններով: Իրապէս շատ ազատ բանաստեղծութիւններ էին: Զարմանալի է, որ գրաքննութիւնը արտօնած է զանոնք: Ինչ կը վերաբերի վաճառականներուն, անոնց համար, անկեղծօրէն կ'ըսեն, որ մարդիկ կը խաբեն եւ որ իրենց զաւակները անձնատուր կ'ըլլան անառակութեան եւ կը սպրդին ազնուականներու մէջ: Ծառ զուարճալի հատ-*

ւած մը կայ նաեւ լրագրողներու մասին: Այս վերջիններուն համար կ'ըսեն, որ իրենց մաղձը կը սիրեն թափել ամէնուն վրայ, եւ հեղինակը կը խնդրէ հանրութեան պաշտպանութիւնը: Այսօր գրողները կ'արտագրեն շատ զուար-
ճալի թատերախաղեր:

Ա՛հ, սիրտս...: (Վեր կ'ելլէ եւ կ'իջեցնէ փէլքրիճը գլխուն վրայ): Կիւսթա՛ւ, դիր ձեռքդ հոս եւ տես, թէ ինչպէս կը տրոփէ ան դատարկ տազնապի մը համար...: Ծնշում մը կը զգամ վրան, ցաւ կը զգամ հոն: Ա՛հ, իմ խեղճ սիրտս: Ան պիտի մեռցնէ զիս...: (Վար կ'առնէ փէլքրիճը եւ մէկու մը հետ խօսող մաքրու մը դիրքը կ'առնէ):
- Կը տառապի՞ք, տիկին:

Վերստիճ կը դնէ փէլքրիճը գլխուն վրայ:

- Ի՞նչ կարեւորութիւն ունի ձեզի համար: Մարդիկ ապրին թէ մեռնին՝ ձեզի համար բոլորովին նոյն բանն է:

Նոյն խաղը, ինչ որ կատարուեցաւ կանխող պատասխանի մէջ:

- Երեւոյթներուն պէտք չէ վստահիլ, այնքան խարող են անոնք:
- Ուրեմն դուք գետնառի՞ւծ մըն էք:

Օ՛հ, ես կը սիրեմ թատրոնն երթալ: Անմիջապէս որ գրպանս երեք սու ունենամ (ոտփի կ'ելլէ եւ կ'աճեցնուի փարաւանի մէջ): Կը հանուի, չեմ կրնար ինքզինքս զսպել ու կը վազեմ հոն: Լաւ: Ինծի-պէսներուն՝ պաշտօնատարներուն մէջ, կան կատարեալ խոզեր, որոնք ոտք չեն դներ թատրոնի սեմէն, մինչեւ իսկ եթէ կայարութիւն մը տաս իրենց. կոպիտանէ՛ր: (Կը վերայայտնուի գիշերային հագուստով): Կը հաճին նեղութիւն յանձն առնել հազիւ այն ատեն, երբ ձրի տոմս մը տրուի իրենց: (Կը մըմնջէ): Օ՛հ, այդ գերասանուհին իրապէս սքանչելի կ'երգէր: Մտածեցի այն մասին...: Ա՛հ, ստահակութիւն...: Լաւ է, լաւ է, աւելի լաւ է, որ լռեմ...

Կը մարէ լոյսը եւ կը բնանայ:

9 ՆՈՅՆՄԲԵՐ

Քնացած է: Կ'ելլէ, կ'երթայ դէպի սեղանը, կը նստի հոն ու կը վառէ լամբը: Երաժշտութիւն. ճիւղ՝ օրագիրը: Կառ՛ մը կ'անցնի:

Ժամը ութին գացի նախարարութիւն: Մեր բաժանմունքին պետը իմ ժամանումս նշմարած չըլլալու ձեւը առաւ: Օ՛հ, բայց ատիկա զիս չի հետաքրքրեր: Իմ կարգիս, այնպիսի՛ երեւոյթ մը տուի ես ինծի, որ իբր թէ ոչինչ պատահած է մեր միջեւ: Տեսնենք...: Յետոյ՝ ի՞նչ ըրած եմ որ...: Ա՛հ, այս՛, վերատեսութեան ենթարկեցի եւ ստուգեցի թուղթերը... դասատուիցի թղթածը-րարները... այդքա՛ն: Ապա, ժամը երեքին, դուրս ելայ, տնօրէնին տան առջեւն անցնելու համար, բայց ոչ ոք տեսայ հոն: Կտոր մը բան ուտելէ ետք, երկնցայ-մնացի մահճակալիս վրայ... մինչեւ հիմա:

Կը սկսի գրել: Երաժշտութիւն. ճիւղ՝ Սոֆի: Կնոջական խնդուի:

11 ՆՈՅԵՄԲԵՐ

Կը մատի սեղանին մօտ, իր օրագրին առջեւ, սրճագոյն հագուատով:

Օ՛հ, ինչո՞ւ արդեօք չեմ յաջողիր ըսել տնօրէնին, ինչ որ կ'ուզեմ ըսել...: Հակառակ այս իրողութեան (ՈՒՄԲԻ Կ'ԵԼԼԷ), այսօր եւս, եւ բազմաթիւ անգամներ փորձեցի խօսիլ, բայց լեզուս մերժեց ինձի ամէն ծառայութիւն: Տաք ընէ թէ պաղ, դրապէս ոչինչ կը յաջողիմ արտաբերել: (ՈՒՄԲԻ Է, ԱՓՈՍԻՑ ԵՍԵՆ): Ա՛հ, որքան պիտի ուզէի աւելի մօտէն դիտել այդ պարոններուն կեանքը: Բոլոր այդ երկդիմութիւնները, այդ ծամածոութիւնները, այդ շողոքորթի վարմունքները, իրենց սպրելակերպը, վերջապէս ամէն ինչ, որ կ'ընեն իրենց միջավայրին մէջ...: Ահա թէ ի՛նչ, օ՛հ, այո՛, ահա թէ ինչ կը փափաքէի իմանալ:

Կը մատի: Երաժշտութեամ. Գիթ՝ օրագիր: Կը կարգայ.

Այսօր, 11 Նոյեմբերին, մնացի տնօրէնին գրասենեակը եւ տաշեցի իրեն համար քսաներեք մատիտ: Եւ անոր, ա՛հ, իր աղջկան համար... չորս մատիտ: Մեր տնօրէնը շատ կը սիրէր իր տրամադրութեան տակ ունենալ մեծ թիւով մատիտ: Օ՛հ, վստահարար ան մեծ իմացականութիւն մըն է: Շատ չի խօսիր, բայց ես կը զուշակեմ, որ ամէն ինչ կը կշռէ գլխուն մէջ: Պիտի ուզէի իմանալ, թէ ի՛նչ բանի մասին կը մտածէ յաճախ եւ ինչ կը նիւթուի այդ ուղեղին մէջ:

ՈՒՄԲԻ Կ'ԵԼԼԷ, Կ'ԱՆԳՆԻ ԽՈՒՒՄՆԵՐԻՆ ԵՍԵՆԸ, Կը վերադառնայ խորձով եւ կանգ կ'առնէ սենեակին կեդրոնը: Երաժշտութիւն. Գիթ՝ զարդախուցը:

Պիտի սիրէի ակնարկ մը նետել իր սալոնին մէջ, որուն դուռը երբեմն բաց կ'ըլլայ: Պիտի սիրէի նոյնպէս ակնարկ մը նետել սենեակին մէջ, որ կը գտնուի սալոնին ետեւը: Ա՛հ, ի՛նչ հարուստ կարասիներ, ի՛նչ գեղեցիկ հայելիներ, ի՛նչ նրբին յախճապակիներ: Որքա՞ն պիտի ուզէի վայրկեան մը մտնել հոն, այն անկիւնը, ուր կը բնակի մեր տնօրէնին աղջիկը: Պարզապէս կ'ուզէի թափանցել անոր զարդախուցը: Ինչպէ՞ս արդեօք չարդարուած են այդ բոլոր անօթներն ու սրուակները, այդ ծաղիկները, զորս մարդ կը վախնայ խամրեցնել իր շունչով, այդ անկարգ հագուստները, որոնք աւելի օդի կը նմանին, քան հագուստներու: Պիտի ուզէի ակնարկ մը նետել իր ննջասենեակին մէջ...: Հոն, կ'երեւակայեմ շոռայութիւնը: Այնպիսի՛ դրախտ մը պէտք է եղած ըլլայ անիկա, որուն նմանը կարելի չէ գտնել նոյնիսկ երկիրներուն մէջ: Պիտի ուզէի տեսնել աթոռակը, որուն վրայ, անկողնէն ցատկած պահուն, կը դնէ իր պզտիկ ու մերկ ոտքը...: Տեսնել թեթեւ գուլպայով մը ծածկուած իր պզտիկ ու մերկ ոտքը, ձիւնի պէս ճերմակ...: Ա՛յ, ա՛յ, ա՛յ: Լաւ է, լաւ է...: Աւելի լաւ է, որ լռեմ...

Օ՛հ, բայց... չիշեցի... Նեվսկի հեռապատկերին մէջ, այդ երկու շուններուն միջեւ տեղի ունեցած խօսակցութիւնը, զոր պատահարը իմացայ...: (Կը քայլէ մտնակալի մ առջեւ): Ինչպէ՞ս այդ տարօրինակ գէպը կրցած է մտքես ելլել: Օ՛հ...: Հիմա պէտք է որ ամէն բան գիտնամ: Կ'երթամ ու կը հարցուփորձեմ Մէտփին:

Կը ծոխ:

- Մտիկ ըրէք, Մէտփի՛, կը տեսնէք, որ առանձին ենք երկուքս: Եթէ կ'ուզէք՝ կրնամ նաեւ դուռը պոցել, որպէսզի ոչ ոք կարենայ տեսնել մեզ:

Ա՛հ, դուք գեղեցիկ շնիկ մըն էք, բարի անասնիկ մը...: Օ՛հ, այո՛...: **(Կը ծնրադրէ):** Ըսէք ինծի այն ամէնը, ինչ որ գիտէք ձեր տիրուհիին մասին: Ո՛վ է, ի՞նչ կ'ընէ: Քաղցրարի՞ն է ան, ան... ան...: Ո՛չ: Կ'երգնում ոչ ոքի ոչինչ ըսել անոր մասին, ո՛չ...

Ինչ խորամանկ անասուն: Սեղմեց պոչը երկու սրունքներուն միջև, ինքնիր վրայ աւելի կծկուեցաւ եւ գուռնէն ներս մտաւ, առանց ոչինչ ըսելու: Հէն...

Օ՛հ: **(Ոտքի կ'ելլէ եւ կ'երթայ դէպի սեղանը):** Ժամանակէ մը ի վեր արդէն կը կռահէի, որ շունը շատ աւելի խելացի է, քան մարդը: Համոզում գոյացուցած էի նոյնիսկ, որ ան կրնար խօսիլ, բայց տեսակ մը յամառութիւն կ'արգիլէր իրեն այդ բանը ընելու: Օ՛հ, ասիկա նշմարելի քաղաքականութիւն մըն է. մարդուն ամենաթեթեւ ոտնաձայնը ու ամէն ինչ կը կռահէ, ոչինչ կը խուսափի իրմէ: Այո: **(Կը պահէ օրագիրը):** Ամէն գնով պիտի երթամ Զվէրկովի տունը: Պիտի հարցուփորձեմ Ֆիտէլը, եւ բախտի մէկ պզտիկ օգնութեամբ, ձեռք պիտի անցընեմ բոլոր նամակները, որ Մէտօին գրած է իրեն: Այն ատեն, վստահաբար բան մը պիտի հասկնամ: Խորամանկին՝ խորամանկ-ու-կէս:

Երաժշտութիւն:

12 ՆՈՅՆՄԲԵՐ

Կը մտնէ ներս: Հագած է վերարկուն: Կը հագայ: Կը նստի մահճակալին վրայ: Բանէ մը զգուած բլլալ կը թուի: Ապա՝ կ'երթայ դէպի խոհանոցը եւ դէմքին շուր կը նետէ:

Ես չեմ կրնար հանդուրժել այդ կաղամբի հոտը, որ կ'ելլէ Պուրժուաներու փողոցին բոլոր պզտիկ խանութներէն: **(Կ'երթայ կախելու վերարկուն հանդերձակալէն):** Սալաշատակներէն ու կառքերուն մտած իւրաքանչիւր գուռնէն այնպիսի՝ գարշահոտութիւն մը կ'ելլէր, որ կրցայ ինքզինքս բռնել՝ ամէն մէկ քայլիս հետ քիթս զոցելով: Այդ անպիտան արհեստաւորները արհեստանոցներէն այնպիսի՝ հսկայ քանակութեամբ մուր ու ծուխ դուրս կու տան, որ անկարելի է պատիլ այդ անիծեալ թաղին մէջ:

Կ'երթայ դէպի սեղանը եւ բանկոնին տակէն կը հանէ նամակները:

Անիծեալ շուն...: Արիւն հանելու աստիճան կճեց գիս: Այսուհանդերձ, ձեռք ձգեցի նամակները: Էականը այդ է: **(Կը վառէ կանթեղը, կը փորձէ կարդալ նամակները):** Վաղը, պէտք է վաղուան սպասեմ կարդալու համար այդ նամակները...: Ո՛չ, չեմ կրնար սպասել...

Երաժշտութիւն. ճիւղ՝ օրագիր: Կը նստի եւ վերստին ձեռք կ'առնէ օրագիրը:

Կէսօրէ ետք, ժամը երկուքին ելայ տունէն Ֆիտէլը գանձելու եւ զայն հարցուփորձելու մտադրութեամբ:

Երբ հասայ Զվէրկովի տան չորրորդ չարկը՝ զանգը տուի: Երիտասարդ աղջիկ մը բացաւ դուռը: Տգեղ չէր եւ գէմքին ունէր շէկ բիծեր: Անմիջապէս ճանչցայ զինք: Այն աղջիկն էր, որ անցեալ օր, պառաւի մը հետ կ'անցնէր մակազիմի մը առջեւէն: Թեթեւօրէն կարմրեցաւ եւ ես նոյն վայրկեանին կռահեցի իր մտածումը. «Դուն, պզտիկ խորամանկ, գուն նշանած մը ունենալու տենչը ունիս»:

- Ի՞նչ կը փափաքէիք,- հարցուց ինծի:

- Պէտք է անպայմանօրէն խօսիմ ձեր շան հետ:

Որքա՛ն ապուշ էր այդ աղջիկը: Անմիջապէս հասկցայ, որ ապուշ էր: Այդ պահուն, շունը հաջելէն վազեց: Ուզեցի բռնել գայն, բայց այդ անարգ անասունը գրեթէ իր կլափին մէջ առաւ քիթս: Հակառակ այդ բոլորին, տեսայ իր դամբիւղը անկիւնի մը մէջ: Հէ՛, ահաւասիկ ինչ որ պէտք էր ինծի: Մօտեցայ անոր, դարձուցի չարգը եւ ծայրագոյն գոհունակութեամբ մը մէջէն հանեցի տրցակ մը թուղթ: **(Կամաց-կամաց ոտքի կ'ելլէ)**: Այդ աղտոտ քածը, տեսնելով ասիկա, բուժքէս խածաւ զիս, ապա՝ երբ զգաց, թէ առած եմ նամակները, սկսաւ կաղկանձել եւ շողոմել զիս: **(Զանազան շարժումներ կ'ընէ, իբր թէ փնտռելով շունէ մը խոյս տալու կերպերը)**: Ա՛հ, ո՛չ, սիրելիս, ո՛չ...: Չանոնք պիտի չվերադարձնեմ քեզի...: Մնաս բարով,- ըսի եւ արագ մը հեռացայ:

Կարծեմ թէ մանկամարդ աղջիկը զիս խենթի տեղ դրաւ, որովհետեւ չափազանց վախցած կը թուէր: Տուն հասայ եւ նոյն վայրկեանին ուզեցի գործի անցնիլ եւ վերահասու ըլլալ նամակներուն բովանդակութեան: Բայց Մարուան մասնաւոր դիտումով մը սկսաւ տախտակամածը լուայ: Այդ ապուշ ֆիլլանտուհիները միշտ անպատեհ վայրկեանի մը կ'աչցուին մաքրութեան գաղափարէն: **(Կը թփնէ)**: Ուստի՛ դուրս ելայ պտոյտ մը ընելու եւ միաժամանակ խոկալու համար այդ դէպքին վրայ: Ա՛հ, այս անգամ, վերջապէս, սիրելի տնօրէնս **(կը վերադառնայ դէպի սեղան)**, պիտի իմանամ ձեր բոլոր արարքները, ձեր բոլոր մտածումները, բոլոր շարժառիթները: **(Կը մարէ կանթեղը)**: Վերջապէս պիտի պարզեմ այդ բոլորը: Այս նամակներն են, որ պիտի հայթայթեն անոնց բանալին: **(Կ'երթայ դէպի մահճակալը եւ կը սկսի հանուիլ)**: Շուները խելացի արարածներ են, եւ լաւատեղեակ՝ քաղաքական բոլոր անցուղարձերուն: **(Փարաւանի ետին)**: Կասկած չկայ, թէ ամէն ինչ պիտի գտնեմ այս նամակներուն մէջ: Նկարագիրը եւ ամենաչընչին արարքները այդ մարդուն: **(Կը վերայայտնուի՝ հագուստը հանած)**: Անոնց մէջ պիտի գտնուի նաեւ պզտիկ պատրանք մը անոր մասին, որ...: Լա՛ւ է, լա՛ւ է...: Աւելի լաւ է, որ լռեմ...

Կը պառկի:

13 ՆՈՅՆՄԲԵՐ

Փողոցէն՝ աղմուկներ. ժամացոյց մը...: Աբաղաղի մը կանչը: Քնացած է: Կ'արթննայ, վրան կ'առնէ սենեկազգեստը, կ'երթայ իջեցնելու վարագոյրները: Ապա կը դնէ ետուցիչը օճախին վրայ, կը բորբոքէ կրակը, կ'առնէ նամակները բարձին տակէն եւ կը նստի սեղանին առջեւ:

Դէ լաւ: Տեսնե՛ք: Այս նամակը արտագրուած է բաւականին ընթեռնելի կերպով: Այսուհանդերձ, չեմ գիտեր շնային ինչ բան մը կայ ձեռագրի նկարագրին մէջ: Կարգանք.

«Սիրելի Ֆիտէլ.

«Տակաւին չեմ կրցած ինքզինս հաշտեցնել քեզի տրուած այդ հասարակ անուցին հետ: Կարծես թէ չէիմ կրնար աւելի բարեհունց անուն մը տալ քեզի: Ֆիտէ՛լ, Ռո՛գ, ինչ սովորական ու զոհեիկ անուններ: Բայց ձգեմք ատիկա: Շատ գոհ եմ, որ որոշեցիմք գրել իրարու»:

Այս նամակը գրուած է կատարեալ ճշգրտութեամբ: Նոյնիսկ չեղտադրութիւնները գործադրուած են իրենց տեղին: Բայց...: Մեր բաժանմունքին պետք այդքան լաւ չի կրնար գրել, որքան ալ մեր գլուխը ցաւցնէ այն համալսարանին անունով, ուր ըրած է իր ուսումը: Նայինք շարունակութեան.

«Ինձի կը թուի, թէ մտածումներդ, զգացումներդ եւ տպատրուրութիւններդ ուրիշի մը հետ կարենալ բաժնելը մէկն է այս աշխարհի մեծագոյն

երջանկութիւններէն»:

Հրմ. այս խորհրդածութիւնը շորթուած է գերմաներէնէ թարգմանուած գործէ մը...: Հեղինակին անունը խուսափած է մաքէս:

«Ասիկա կ'ըսեմ անձնական փորձառութեամբ, թէ եւ մեր տան դարպասէն անդին աշխարհը բնաւ չեմ ճանչնար: Կեանքս կը թափախի առատութեան մէջ: Տիրուիս, գործը Սոֆի կը կոչէ, խեցի պէս կը սիրէ զիս»:

Ա՛՛՛, ա՛՛՛. լա՛՛ւ է, լա՛՛ւ է, աւելի լաւ է, որ լռեմ:

«Հայրը, ինք ես կը շոյէ զիս շատ յաճախ: Քրէմով թէյ կը խմեմ ու սուրճ:

«Ահ, սիրելիս: Պէտք է ըսեմ, որ ոչ մէկ հաճոյք կը գտնեմ այդ հսկայ եւ կրծուած ոսկորներուն մէջ, գորս խոհանոցին անկիւնը կը լակէ մեր Սանթորը: Կան միայն երէկներուն ոսկորները, որոնք համեղ են, մաճառանդ այն ատեն, երբ ոչ ոք ծծած է անոնց ծուծը: Շատ կը սիրեմ, որ բազմազան սոսեր իրարու խառնեն, բայց առանց բուսական խոտերու: Շուններուն հացի գնդիկներ տալու սովորութենէն աւելի գէշ բան ես չեմ ճանչնար: Ոմն պարոն, սեղանին առջեւ նստած եւ որուն ձեռքերը թաթխուած են ամէն տեսակ աղտոտութիւններու մէջ, նոյն ձեռքերով հացի փշրանքներ կը ճմլէ, կը կանչէ քեզ եւ կը թխմէ գնդիկը կոկորդիլո մէջ: Եւ որովհետեւ մերժելը անհաղափարութիւն կը համարուի, ուստի՝ կ'ուտես, թէ եւ զգուսնով, բայց եւ այնպէս կ'ուտես...»:

Ստանան գիտէ, թէ ինչ ըսել կ'ուզէ այս խօսքերով: Ի՛նչ անհեթեթութիւն: Իբր թէ աւելի հետաքրքրական նիւթեր գոյութիւն չունենային: Նայինք յաջորդ էջին: Թերեւս հոն գտնենք աւելի կարեւոր բան մը, ամէն պարագայի աւելի մտացի, քան այս բոլոր անհեթեթութիւնները:

«Ինձի համար հաճոյք է քեզ տեղեակ պահել բոլոր այն դէպքերուն, որոնք տեղի կ'ունենան մեր մօտ: Քանի մը մանրամասնութիւններ արդէն տուած եմ քեզի այն գլխաւոր անձնատրութեան մասին, գործ Սոֆին փափա կը կոչէ: Տարօրինակ մարդ մըն է ան»:

Ա՛՛՛, վերջապէս: Այո՛, գիտեմ, անոնք ամէն նիւթի մասին քաղաքական տեսակետներ ունին: Տեսնենք փափային վերաբերող մասը.

«...Շատ տարօրինակ մարդ մը: Գրեթէ լուակեաց: (Ա՛՛՛, ասիկա այո՛, նշմարած եմ): Հագուադէպօրէն կը բանայ բերանը, բայց ուր օրէ ի վեր, առանց դադարի՝ ինքն իրեն կը կրկնէ. «Արդեօք գայն պիտի տա՞ն ինձի, այո, կամ ոչ»: Կ'առնէ թերթ մը թուղթ, անոր վրայ կ'ըլլէ ուրիշ մը եւ կ'ըսէ. «Արդեօք գայն ինձի պիտի տա՞ն»: Օր մը, նոյնիսկ (Կ'երթայ դէպի օճախը) իմ կողմս դարձաւ (Կ'առնէ թէյամանը) եւ հարցուց. «Ի՞նչ կը մտածես այդ մասին, Մէտօի, արդեօք պիտի տա՞ն գայն ինձի, այո կամ ոչ»: Բնաւ բան չհասկցայ ըսածէն: Հոտուրտացի կօշիկները եւ հեռացայ: Ապա, սիրելիս, շաբաթ մը ետք (Կը վերադառնայ սեղան՝ թէյամանով եւ թասով մը) փափան տուն եկաւ շատ գուարթ տրամադրութեամբ: Ամբողջ օրը պաշտօնական զգեստներ հագած պարոններ (Կը նստի) եկան զինք շնորհատրելու: Ճաշի ընթացքին, աւելի քան երբեք ուրախ էր եւ իր սրամիտ մանրապատումները անհատում էին: Ճաշէն ետք, զիս բարձրացուց մինչեւ վիզը եւ ըսաւ. «Նայէ Մէտօի, ի՞նչ է ասիկա»: Տեսայ ժապաւէն մը: (Թէյ կը լեցնէ): Հոտուրտացի, բայց անոր մէջ ոչ մէկ բոյր գտայ: Վերջապէս, լեզուի հարուած մը տուի անոր, առանց երեւնալու...: Քիչ մը աղի համ ունէր...»:

Հրմ. ինձի կը թուի թէ այս շունը շատ ծայրայեղ է եւ արժանի խաբարանի: (Կը խմէ): Պարզ է, որ մեր մարդը շատ փառասէր է: Պէտք է ուշադրութեամբ նկատի առնել այդ պարագան:

Կը խմէ:

«Մնաս բարով, սիրելիս: Ես փախայ... Ես այլն: Վաղը պիտի աւարտեմ նամակս...»:

Ա՛Տ, տեսնենք ինչ կ'ընէ Սոֆին: Է՛Տ, ստահակութիւն...: Լաւ է, լաւ է...: Հետեւինք.

«Տիրուհիս՝ Սոֆին, ջղային վիճակի մը մէջ էր: Կը պատրաստուէր պարահանդէս երթալ եւ ես կը հրնուէի իր բացակայութենէն օգտուելով քեզի կարենալ գրելու մտածումին հաշուոյն: Իմ Սոֆին բուն կերպով կը փափաքէր պարահանդէս երթալ, հակառակ անոր, որ արդուզարդ տուած ատեն շատ կը ջղայնանայ: Ես, սիրելիս, անձնապէս ոչ մէկ հանոյք կը գտնեմ պարահանդէս երթալուն մէջ: Սոֆին կը վերադառնայ ատուան ծամը վեցի ատեններուն, եւ ես իր խեղճ ու տժգունած դէմքէն կը գուշակեմ, որ այնտեղ ուտելիք ոչինչ տուած են իրեն: Խեղճ աղջիկ: Խոստովանիմ, որ ես այդպէս երբեք պիտի չկարենայի ապրիլ: Եթէ ինձի չտային ստով պատրաստուած այդ թռչունները, կամ վառեակի ներմակ միս, դժուար է ըսել, թէ ինչ կը պատահէր ինձի: Լաւ է նոյնպէս պաղ ապուրը: Բայց ստեպղինները, շողգամները կամ կանկառները... իրապէս ատիկա երբեք լաւ չէ...»:

Ծայրայեղօրէն անհասար սճ: Կը հասկցուի անմիջապէս, որ գրողը մարդ մը չէ: Կը սկսի շատ ուշ, հէ... չեմ գիտեր... եւ կը վերջանայ շնային եզանակով...: Ինչ եւ իցէ...: Կարդանք տոմս մը եւս. Հա՛, այս մէկուն նոյնիսկ թուականը նշուած չէ.

«Ա՛հ, սիրելիս, գարնան մօտեցումը ինչպէս կը գգացնէ ինքզինք: Սիրտս այնպէս կը տրոփէ, որ կարծես բանի մը կը սպասէ: Ականջներուս մէջ ձայն մը անընդհատ կը բզբզայ: Երբեմն, վայրկեաններ շարունակ, թաթերս օդին մէջ տնկած՝ մտիկ կ'ընեմ դուռներուն ետեւէն: Գաղտնի պիտի չպահեմ քեզմէ այն, որ բազմաթիւ սիրահարներ ունիմ: Վարագոյրներու ետին պահուրտած՝ յանախ կը նայիմ անոնց: Ա՛հ, սիրելիս, չես կրնար պատկերացնել անոնցմէ տգեղութիւնը: Մէջերնին մէկը կայ, որ կացինով կոփուած է: Պէտք է գարհուրելիօրէն ապուշ ըլլայ: Փողոցին մէջ կը պտտի գերակայութեան հով մը տալով ինքզինքն եւ ինքզինք կ'երեսակայէ կարետր անձնատրութիւն մը: Կը կարծէ, թէ մարդիկ աչքեր ունին միայն իրեն նայելու համար: Բայց բնաւ այդպէս չէ: Ես երբեք ուշադրութիւն չեմ դարձներ իրեն եւ այնպիսի՝ դիրք մը կ'առնեմ, որ իբր թէ բնաւ չեմ նշմարեր իր գոյութիւնը: Կայ տակաւին այն գարհուրելի գամփոր, որ կանգ կ'առնէ պատուհանիս առջեւ: Եթէ ետեւի երկու ոտներուն վրայ ծառանար - ինչ որ յայտնապէս անկարող է ընել կոպիտը - իր բարձրութեամբ կ'անցնէր իմ Սոֆիիս հօր հասակը, որ արդէն բարձրահասակ կը հաշուելուի եւ ունի պատկառելի գիրութիւն մը: Այս անոնոնին յայտնապէս նմանը չունեցող լիրբ մըն է: Մոլտացի մէկ կամ երկու անգամ անոր ետեւէն, բայց ատիկա իր վերջին մտահոգութիւնը կը կազմէ: Նոյնիսկ չի գիշիր յօնֆերը շարժել: Պարզապէս լեզուն դուրս կը ձգէ, կը կախէ ականջները եւ աչքերը պատուհանիս սեւեռած կը նայի...: Կատարեալ գիւղացի մը: Բայց ի հարկէ լաւ գիտես, սիրելիս, որ սիրտս բոլոր դարպասումներուն հանդէպ անտարբեր չի կրնար մնալ: Ընդհակառակն: Ա՛հ, եթէ անգամ մը տեսած ըլլայիր այն երիտասարդ ասպետը, որ կը ցատկէր մօտակայ ցանկապատէն ու կը խուժէր մեր շրջափակէն ներս: Անոր անունը Թրէգոր է... Ա՛հ, սիրելիս, կ'երեսակայե՛ս այն գեղեցիկ դէմքը, որ ունի...»:

Ուրի կ'ելէ:

Ա՛Տ, գրողը տանի բոլորը: Ի՛նչ աղտոտութիւն: Ինչպէ՞ս կարելի է նամակ մը լեցնել նման անմտութիւններով: Ա՛Տ, թող մարդ մը բերեն ինձի, շուներ չեմ ուզեր, կ'ուզեմ տեսնել մարդ մը, կը պահանջեմ սնունդ մը, որով հոգիս լիանար ու հաճոյանար, մինչդեռ կայ միայն անմտութեանց այս խառնակոյ-

աը... (Կը վերադառնայ դէպի սեղան): Ու գարշելիութիւնը: (Վերըստին ձեռք կ'առնէ նամակը, թէյ կը լեցնէ եւ կը նստի): Բայց գարշենք էջը: Թերեւս աւելի հետաքրքրական բան մը գտնենք.

«Սոֆին սեղանին առջեւ նստած ասեղնագործութեամբ զբաղած էր: Ես կը նայէի պատուհանէն, որովհետեւ կը սիրեմ անցորդները դիտել: Այդ պահուն, յանկարծ ծառայ մը ներս մտաւ եւ յայտարարեց Թէփովի ժամանումը: «Ներս առ», պոռաց Սոֆին եւ նետուեցաւ վրաս, զիս համբուրելու համար: «Ա՛հ, Մէտծի, Մէտծի, եթէ միայն գիտնայիր: Թուխ է ան, կու գայ արժունական շրջանակէն, եւ ունի սեւ ու կրակի պէս հրացայտ աչքեր»: Այս բառերը արտասանելէ ետք, Սոֆին մտաւ իր յարկաբաժինը: Վայրկեան մը անց՝ ներս մտաւ սեւ կիսամօրուսով երիտասարդ ազնուական մը: Մօտեցաւ հայելիին, յարդարեց մագերը եւ սեճեակին շրջանը ըրաւ: Պզտիկ մոլտուք մը դուրս տուի ու կծկուեցայ իմ անկիւնս: Քիչ ետք, եկաւ Սոֆին եւ զուարթօրէն մատոյց իր մեծարանքը: Ես խաղաղօրէն կը շարունակէի պատուհանէն դուրս նայիլ, իբր թէ ոչինչ տեղի ունեցած չըլլար: Բայց գլուխս թեթեօրէն ծոցի եւ նիզըրի հասկնալ իրենց խօսակցութիւնը: Ա՛հ, սիրելիս, ի՛նչ ապուշութիւններ դուրս կու տային: Կը պատմէին, որ կին մը, պարահանդէսի մը ընթացքին, այսպիսի դէմք մը յարդարած էր, փոխանակ այն միւսին պէս ընելու: Կամ՝ արագիլի նմանող ուն Պոպով, որ քիչ կը մնար գետին տապալէր: Որ՝ Լիտիա անունով տիկին մը ինքզինք կապոյտ աչքերով կ'երեսակայէր, մինչդեռ աչքերը կանաչ էին, եւայլն, եւայլն: Օ՛, ո՛չ, ըսի ինքնիրենս, կարելի չէ Թրեգորը բաղդատել այս ազնուականին հետ: Աստուած իմ, ի՛նչ տարբերութիւն: Նախ՝ այս պարունը ունի կիսամօրուսով շրջապատուած լայն ու բացարձակօրէն տափակ դէմք մը: Կարծես սեւ վզնոցի մը մէջ փաթուած ըլլար, մինչդեռ Թրեգորը ունի նուրբ դիմագիծեր եւ ճերմակ բիծ մը՝ ճակատին նիշոյ մէջտեղը: Ինչ կը վերաբերի հասակին, կարելի չէ բաղդատել զայն այս ազնուականին հետ: Թրեգորին աչքերը, վարմունքները, քալումովը ամբողջութեամբ ուրիշ են: Օ՛, ի՛նչ տարբերութիւն: Չեմ գիտեր, սիրելիս, թէ Սոֆին ինչ կը գտնէ Թէփովի մէջ: Ինչո՞ւ այդքան փարած է անոր...»:

Ինծի կը թուի, թէ հոս եւս կազացող բան մը կայ... վստահաբար. անկարելի է, որ Թէփով յաջողած ըլլայ այս կէտին մէջ հմայել գայն: Նայինք աւելի անդին.

«Եթէ այս արժունի ազնուականը շնորհիք գտնէր իր աչքերուն առջեւ, չեմ գիտեր ինչու նոյնը պիտի չպատահէր այն պաշտօնատարին, որ կ'աշխատի հօրը գրասենեակին մէջ: Ա՛հ, սիրելիս, եթէ տեսնէիր այդ վիժուկը...»:

Բայց ո՞վ կրնայ ըլլալ ան:

«Շատ անհեթեթ մականուն մը ունի: Ամբողջ օրը նստած մնաց եւ տաշեց մատիտները: Մագերը կը նմանին շորցած խոտի: Փափան գայն կը գործածէ իր յանձնառութիւններուն համար...»:

Կը թուէր, թէ ինծի կ'ակնարկէր այդ աղտոտ շունը: Ուրկէ՞ր գիտէ, թէ իմ մագերս կը նմանին շորցած խոտի:

«Սոֆին խնդուքը չի կրնար զսպել, երբ անոր նայի»:

Ատիկա ճիշդ չէ: (Ոտքի կ'ելլէ, կը նետէ նամակը գետին եւ կը կոխկրտէ գայն): Միտ է ատիկա: Աղտոտ ստախօս: Գարշելի՛ լեզու: Իբր թէ ես չեմ գիտեր, թէ ատիկա նախանձի հետեւանք է: (Կը դառնայ նամակին շուրջ): Իբր թէ չեմ գիտեր, թէ հարուածը ուրկէ կու գայ: Մեր բաժանմունքի պետին խորամանկութիւններն են ատոնք: Այս մարդը երգում ըրած է ինծի հանդէպ անհաշտ ատելութիւն մը ունենալ եւ իւրաքանչիւր քայլին զիս խեղդելու կատաղութիւն մը կ'ապրի: Հաս մը եւս կարգանք այդ նամակներէն (Կու գայ դէպի սեղանը, ուրիշ նամակ մը կ'առնէ եւ կը մօտեցայ մահճակալին, պարտէզին կողմը): Թերեւս հասկնանք այս ամէնուն եզրափակիչ բառը.

«Իմ սիրելի Ֆիտելյա, ներէ ինձի այսօրան երկար ատեն նամակ չգրելու համար: Ապրեցայ կատարեալ գինովութեան մը մէջ: Գրող մը իրատունք ունէր, երբ կ'ըսէր, թէ սէրը երկրորդ կեանք մըն է: Եւ յետոյ, մեծ փոփոխութիւններ տեղի ունեցան մեր տան մէջ: Արքունի ազնուականը ամէն օր կու գայ մեզ տեսնելու: Սոֆիին խենթի պէս կը սիրէ գինք: Փափան շատ ուրախ է: Լսեցի նոյնիսկ մեր Կրէկուարին ըսուածը, որ միշտ ինքնիրենը կը խօսի տախտակամածը ալած ատեն, ըստ որում՝ ամուսնութիւնը տեղի պիտի ունենայ շուտով, որովհետեւ փափան բացայայտօրէն կ'ուզէ Սոֆիին ամուսնացած տեսնել զօրավարի մը, արքունի ազնուականի մը կամ քոյրուհի մը հետ...»:

Դանդաղօրէն կը նստի մահնակալին վրայ:

Անէ՛ծք: Աւելին չեմ կրնար կարդալ...: Իրենց հետաքրքրութեան առարկան միշտ արքունի ազնուական մըն է կամ զօրավար մը: Ինչ որ լաւ բան կայ աշխարհի մէջ, միշտ կը վիճակուի ազնուականներուն կամ զօրավարներուն: Մենք կ'ապրինք համեստ կեցութեամբ, կը կարծենք գտած ենք հրճանկութիւն մը, բայց արքունի ազնուական մը կամ զօրավար մը յանկարծ երեւան կու գայ եւ զայն կը խլէ ձեզմէ, ձեր քիթին տակ: Յանուն շան մը: (Ոտքի կ'ելլէ եւ կու լայ): Եթէ կը փափաքէի զօրավար ըլլալ, ասիկա իր ձեռքը խնդրելու համար չէր...: Ո՛չ: Կ'ուզէի զօրավար ըլլալ՝ զանոնք շուրջս խրոնըւած տեսնելու համար պարզապէս: (Կ'երթայ դէպի սեղան): Ապա՝ տեսնելու համար խորամանկութիւններու եւ պալատական երկդիմութիւններու անոնց անձնատուութիւնը, եւ ապա՝ ըսելու համար իրենց. «Ես կը թքնեմ ձեր երկուքին վրայ»: Պարզապէս այս նպատակին համար...: Վա՛յ թշուառական: Որքա՛ն ջղաջնացուցիչ է ասիկա:

Կու լայ, կը պատռէ նամակները, կ'առնէ թէյամանը եւ կ'երթայ դնելու գայն խոհանոցը: Երածշտութիւն:

Մ Ի Զ Ն Ա Ր Ա Ր

Ջայնագրուած եւ միջնաբարէն Ետք կրկնուած:

«Իմ սիրելի Ֆիտելյա, ներէ ինձի այսօրան երկար ատեն նամակ չգրելու համար: Ապրեցայ կատարեալ գինովութեան մը մէջ: Գրող մը իրատունք ունէր, երբ կ'ըսէր, թէ սէրը երկրորդ կեանք մըն է: Եւ յետոյ, մեծ փոփոխութիւններ տեղի ունեցան մեր տան մէջ: Արքունի ազնուականը ամէն օր կու գայ մեզ տեսնելու: Սոֆիին խենթի պէս կը սիրէ գինք: Փափան շատ ուրախ է: Լսեցի նոյնիսկ մեր Կրէկուարին ըսուածը, որ միշտ ինքնիրենը կը խօսի տախտակամածը ալած ատեն, ըստ որում՝ ամուսնութիւնը տեղի պիտի ունենայ շուտով, որովհետեւ փափան բացայայտօրէն կ'ուզէ Սոֆիին ամուսնացած տեսնել զօրավարի մը, արքունի ազնուականի մը կամ քոյրուհի մը հետ...»:

Դանդաղօրէն կը նստի մահնակալին վրայ:

Անէ՛ծք: Աւելին չեմ կրնար կարդալ...: Իրենց հետաքրքրութեան առարկան միշտ արքունի ազնուական մըն է կամ զօրավար մը: Ինչ որ լաւ բան կայ աշխարհի մէջ, միշտ կը վիճակուի ազնուականներուն կամ զօրավարներուն: Մենք կ'ապրինք համեստ կեցութեամբ, կը կարծենք գտած ենք հրճանկութիւն մը, բայց արքունի ազնուական մը կամ զօրավար մը յանկարծ երեւան կու

գայ եւ գայն կը խլէ ձեզմէ, ձեր քիթին տակ: Յանուն շան մը: **(Ուոֆի կ'ելլէ եւ կու լայ):** Եթէ կը փափաքէի զօրավար ըլլալ, ատիկա իր ձեռքը խնդրելու համար չէր...»: Ո՛չ: Կ'ուզէի զօրավար ըլլալ՝ զանոնք շուրջս խրոնրած տեսնելու համար պարզապէս: **(Կ'երթայ դէպի սեղան):** Ապա՝ տեսնելու համար խորամանկութիւններու եւ պալատական երկգիծութիւններու անոնց անձնատուութիւնը, եւ ապա՝ ըսելու համար իրենց. «Ես կը թքնեմ ձեր երկուքին վրայ»: Պարզապէս այս նպատակին համար...: Վա՛յ թշուառական: Որքա՛ն ջղայնացուցիչ է ատիկա:

Կու լայ, կը պատսէ նամակները, կ'առնէ թէյամանը եւ կ'երթայ դնելու գայն խոհանոցը: Երաժշտութիւն:

3 ԴԵԿՏԵՄԲԵՐ

Երաժշտութիւն:

Հագած է սեճեկագգեստը եւ նստած՝ արթնակի մը վրայ, օճախին մօտ:

Ո՛չ, ո՛չ, կարելի չէ ատիկա, կարելի չէ: Խելքի պտուկելիք բան չէ: Այս ամուսնութիւնը տեղի պիտի չունենայ...: Արքունի ազնուական է եղեր. չեսո՞ւ: **(Ուոֆի կ'ելլէ):** Ատիկա պարզապէս տարբերիչ հանգամանք մըն է, տեսանելի բան մը չէ, զոր կարելի ըլլայ նկատի առնել: Արքունի ազնուական ըլլալը պատճառ մը չէ, որ երրորդ աչք մը ունենայ ճակտին մէջտեղ: Իր քիթը, որքան ես գիտեմ, ոսկիէ չէ շինուած: **(Կը վերադառնայ դէպի արթնակը):** Կը նմանի իմ քիթիս կամ ուրիշ մէկուն քիթին, եւ որ իրեն կը ծառայէ քթախոտ քաշելու եւ ոչ թէ ուտելու, փոնգալու կամ հազալու: **(Կը նստի արթնակին վրայ, հանդիսականներուն դիմաց):** Արդէն բազմաթիւ անգամներ փորձած եմ գտնել կամայական այս տարբերութիւններուն պատճառը...: Պատուակալ խորհրդական...: Այո՛: Ինչո՞ւ ես ինքս ըլլամ պատուակալ խորհրդական եւ ըլլամ յանուն ի՛նչ բանի: Զի՛ր կրնար ըլլալ, որ ես ծնունդով կոմս մըն եմ, կամ զօրավար մը եւ պարզօրէն ունիմ, այսպէս, պատուակալ խորհրդականի մը երեսոյթը: Բայց այո՛...: Թերեւս ես կ'անգիտանամ ինքնութիւնս...: Պատմութեան մէջ օրինակներ չեն պակսիր: Հասարակ մարդ մը, առանց խօսելու ազնուականի մը մասին, միջին դասուն պատկանող անձ մը եւ կամ նոյնիսկ գիւղացի մը, այո՛, գիւղացի մը կը ստուգէ յանկարծ, որ ինք մեծ իշխան մըն է կամ պարոն մը: Եթէ գիւղացի մը կրնայ յանկարծ դառնալ աչքառու անձնատուութիւն մը, երեսակայեցէք այլեւս ինչ համեմատութիւններու պիտի հասնէին կարելիութիւնները, երբ խնդիրը վերաբերէր ազնուականի մը: **(Ուոֆի կ'ելլէ եւ կ'երթայ դէպի մահնակալը: Կոնակը հանդիսականներուն):** Յանկարծ, օրինակի համար, կը մտնեմ նախարարատուն, զօրավարի տարագոյ: Ուսադիր մը աջ ուսիս, ուրիշ մը՝ ձախիս, եւ երկնակապոյտ ժապաւէն մը՝ կուրծքիս: Ինչ շեշտով **(կու գայ դէպի բեմին առաջամասը)** պիտի երգէ այն ատեն տիկինս: Եւ ի՛նչ պիտի ըսէ փափան, մեր տնօրէնը: Հըմ...: Օ՛հ, մեծ փառասէր մըն է ան: Մասոն մը, անկասկած: Հակառակ անոր, որ ինք կը ձեւացնէ ըլլալ այս կամ այն: Մէկէն գուշակեցի, որ մասոն էր ինք: **(Կը դառնայ սեղանին շուրջ):** Երբ ձեռքը մէկու մը կ'երկարէ՝ առաջ կը տանի միայն երկու մատները: Զե՛մ կրնար արգեօք նոյն վայրկեանին անուանուիլ զօրավար-կառավարիչ, կամ վերակացու, կամ, ամէն պարագայի **(Կ'երթայ ու կը նստի արթնակին վրայ)** տեսնել, որ կարելոր պաշտօն մը վստահաւոր է ինծի: Պիտի ուզէի գիտնալ, թէ ինչո՞ւ զրազիր մըն եմ, ինչո՞ւ անպայման զրազիր մը:

5 ԴԵԿՏԵՄԲԵՐ

Հագած է սեճեկագգեստը եւ նստած մահճակալին վրայ: Կը կարդայ օրագիրը, կը հանէ ակնոցները: Լուարձակաւած թուականը կը սկսի օրացոյցէն դուրս գալ:

Խելացնոր բաներ տեղի կ'ունենան Սպանիոյ մէջ: Շատ լաւ չեմ հասկնար խնդիրը...: Թերթերը կը գրեն, որ գահը թափուր է: Բարձրաստիճան անձնաւորութիւններ դժուարութիւններ ունին գահաժառանգ մը ընտրելու: Կը թրւի, թէ խռովութիւններ առաջացած են...: Շատ տարօրինակ կը թուի ինծի այս պատմութիւնը: Ինչպէ՞ս կրնայ գահը թափուր ըլլալ: Արտաոտոց բան է ասիկա: (Կը վերադառնայ օրագրին): Կ'ըսեն, թէ ոմն Տոննա պէտք է բարձրանայ դահուն վրայ: (Վեր կ'ելլէ եւ կը դնէ օրագիրը մահճակալին վրայ): Ա՛հ, ո՛չ, Տոննա մը չի կրնար գահ բարձրանալ: Բացարձակապէ՛ս ոչ: (Նրթեկելով)՝ գահուն վրայ անհրաժեշտ է թագաւոր մը: Բայց կ'ըսեն, թէ թագաւոր չկայ: Անկարելի՛ է: Երկիր մը չի կրնար առանց թագաւորի գոյութիւն ունենալ: Գոյութիւն ունի անպայման թագաւոր մը, ատիկա որոշ է, բայց կ'անգիտանան անոր տեղը: Թերեւս նոյնիսկ հոն է թագաւորը, բայց ընտանեկան պատճառներով կամ դրացի երկիրներէն, ինչպէս օրինակ, Ֆրանսայէն եկած վախր, կը ստիպեն իրեն, որ թաքնուած մնայ: (Կը նեմէ սեճեկին մէջ, բաւական ջղագրգիռ): Կամ թերեւս կան ուրիշ պատճառներ եւս...: Օրինակի համար...: Ես չեմ գիտեր, բայց...

Կառք մը կ'անցնի:

8 ԴԵԿՏԵՄԲԵՐ

Հագած է սեճեկագգեստը եւ պագած գետնին վրայ, մահճակալին առջեւ, եւ թերթերը կը պատռէ: Թուականը լայնօրէն դուրս կը յորդի օրացոյցէն:

Վերջապէս որոշած էի վերադառնալ նախարարութիւն, բայց այլազան նկատումներ ետ կեցուցին զիս: Սպանիոյ դէպքերը մտքէս բնաւ չեն ելլեր: Ինչպէ՞ս կրնայ ըլլալ, որ Տոննա մը թագուհի դառնայ: Ո՛չ, կարելի չէ՛ ատիկա: Առաջին հերթին Անգլիան պիտի հակառակի ատոր: Այո՛, այո՛, Անգլիան պիտի հակառակի ատոր: Յետոյ պէտք է ի մտի ունենալ եւրոպական միւս երկիրներուն քաղաքական այժմու կացութիւնը: Աւստրիոյ կաշարը պիտի չընդունի, չի կրնար ընդունիլ, մեր կաշարէն զատ ոչ ոք կրնայ ընդունիլ, մեր ցարէն, որ... որ...: Օ՛հ, խոստովանիմ, որ այդ դէպքերը տակնուվրայ կ'ընեն, կը չոզնեցնեն զիս: Բացարձակապէս ոչինչ կրնամ ընել: Մարուան դիտել տուաւ ինծի, որ շատ մտացիր էի: Արդարեւ, թէյս առնելէ ետք, ի հարկէ ցրուածութեան հետեւանքով՝ ասիկէն տախտակամածին վրայ նետեցի: (Ոտքի կ'ելլէ): Մարուան, այդ պահուն, խնդալէն ճաթեցաւ: (Կ'աւլէ մահճակալին մէր մասերը): Ծաշէն ետք, գացի պատեղու լեռներուն ստորտը: (Կը կոթնեցնէ աւելլ մահճակալին): Չկրցայ ասկէ որեւէ դաս քաղել: Այն ատեն տուն եկայ եւ մնացեալ ժամերուն երկարեցայ մահճակալիս վրայ, խորհրդածելու համար Սպանիոյ դէպքերուն մասին:

Երածշտուփուն. նիւթ՝ թագաւոր:

2000 ԹՈՒԱԿԱՆԻՆ, ԱՊՐԻԼ 43ԻՆ

**Նստած է իր արձողին վրայ, հանդիսականներուն դիմաց:
Հագած է արճագոյն գգեստը: Այդ օրէն սկսեալ, լուսարձակ-
ած թուականը կը գրաւ խորքի ամբողջ պատը:**

Այսօր մեծ հանդիսատուութեամբ օր մըն է: Սպանիան ունի թագաւոր մը: Գտան թագաւոր մը: Ու այդ թագաւորը ես եմ: Այսօր միայն հասկցայ ատիկա: Կարծես յանկարծօրէն լոյսով ողողուեցայ: Ինչպէ՞ս, բայց ինչպէ՞ս կրնայի մտածել, ինչպէ՞ս կրնայի երեւակայել, որ հասարակ գրադիր մըն էի: Ե՛ս: Ինչպէ՞ս այս արտառոց, չիմար մտածումը կրցաւ թափանցել ուղեղիս մէջ: Երջանիկ եմ, որ տակաւին ոչ ոք չէ խորհած զիս արգելափակել հոգեբուժարանի մը մէջ: Հիմա ամէն ինչ յայտնի է ինծի, ամէն ինչ պայծառ է հիմա: Առաջ... առաջ չէի հասկնար: Սոսկալին այդ էր արգէն: Աչքիս առջեւ ամէն ինչ տեսակ մը մառախուղի մէջ էր: Այս բոլորը առաջ կու գան անկէ, որ մարդիկ կը պատկերացնեն, թէ ուղեղը գանկին մէջ կը գտնուի: Բնա՛ւ: Կասպից ծովէն փչող հով մը բերած է գայն: Անմիջապէս յայտնեցի Մարուս- չին, թէ ով էի ես: Ի՞նչ չիմար է: (Ուրքի կ'ելլէ): Երբ իմացաւ, որ դիմացը Սպանիոյ թագաւորը կը գտնուէր (ուրքի՛ արձողակին մօտ)՝ ձեռքերը իրարու զարկաւ եւ քիչ մնաց, որ վախէն մեռնէր: Ծիչդ է, որ ան երբեք տեսած չէր Սպանիոյ թագաւորը: Այդ պատճառով փորձեցի հանդարտեցնել զինք եւ, մեղմօրէն խօսելով, լաւագոյնս բրի՛ւ պահովելու համար իրեն իմ արքայական բարեացակամութիւնս: Ըսի, որ կօշիկներս երբեմն վատ ներկելուն կամ կրակարանը մարած ըլլալուն համար բնաւ ոխ չէի պահեր իրեն հանդէպ: Այդ մարդերը տղէտներ են: Կարելի չէ, կարելի չէ բարձր նիւթերու մասին խօսիլ անոնց հետ: Մարուսն վախցաւ (կը նստի) անոր համար, որ համոզուած էր, թէ Սպանիոյ բոլոր թագաւորները կը նմանէին Ֆիլիպի Չրդին: Բայց ես անոր բացատրեցի, թէ հասարակաց ոչինչ կար իմ եւ Ֆիլիպին միջեւ:

Ժամացոյց:

Զգացի նախարարութիւն: Գրո՛ղը տանի գիրենք: (Կր հաւաքէ թերթերը եւ դուրս կ'ելլէ բակին կողմէն): Ո՛չ, պարոններ, ո՛չ, այլեւս զիս հոն պիտի չտեսնէք: Ես չեմ ուզեր շարունակել արտագրել ձեր աղտոտ թուղթերը:

86ՐԴ ՕՐ, ՄԱՐԹՈՊՐԻ,

ՑԵՐԵԿՈՒԱՆ ԵՒ ԳԻՇԵՐՈՒԱՆ ՄԻՋԵՒ

**Երաժշտութիւն. ճիւղ՝ օրագիր: Նստած է սեղանին առջեւ
ու հագած արճագոյն գգեստը:**

Այսօր (կը կարդայ օրագրէն) մեր բաժանմունքին պետը զրկած էր բարապանը՝ զիս պաշտօնատուն կանչելու համար, որովհետեւ երեք շաբաթ կար, որ գործի չէի երթար:

Գացի նախարարութիւն... ինդալու համար: Մեր բաժանմունքին պետը կը խորհէր, որ յարգանք պիտի մատուցանէի իրեն, ներողութիւն հայցէի, հըմ, բայց նայեցայ իրեն անտարբեր ձեւով, ոչ շատ բարկացած, ոչ շատ բարեացակամ, եւ նստեցայ տեղս այնպիսի անփութութեամբ, որ իբր թէ շուրջս մարդ չկար: Դիտեցի վարչական այդ ամբողջ աղտեղութիւնը եւ մտածեցի. «Եթէ պիտանայիք ո՛վ նստած է ձեր միջեւ, ի՞նչ տեղի պիտի ունենար արդեօք»:

Օ՛հ, Տէր Աստուած, ով գիտէ ի՞նչ թոհուրոհ պիտի առաջացնէր ատիկա: Բաժանմունքին պետք, ինք ես, պիտի խոնարհէր առջեւս, մինչեւ գոտին, ինչպէս կը խոնարհի տնօրէնին առջեւ: Եւ բոլոր միւսները պիտի զողային յայնժամ, պիտի վախնային, որ իրենց յանդիմանութիւններուն եւ կեղեքումներուն համար ես վրէժխնդիր պիտի ըլլայի...: Օ՛հ, առջեւ թուղթեր տեղաւորած են, որպէսզի անոնցմէ ամփոփ տեղեկութիւն կազմեմ: Բայց ես նոյնիսկ մասներուս ծայրովը չհպեցայ անոնց:

Քանի մը վայրկեան ետք, ըսուեցաւ, որ տնօրէնը կու գայ: Ամէն մարդ ջղազրդիւ վիճակի մը մասնուեցաւ: Հրմ: Շատ մը պաշտօնեաներ սկսան վազել, կարելի արագութեամբ անոր ներկայանալու համար: Ես տեղէս չջարժեցայ: Երբ մեր գրասենեակը մտաւ, ամէն ոք հագուստը կոճկեց: Ես այնպէս ձեւացուցի, որ իբր թէ ոչինչ պատահած էր: Տնօրէն...: Ի՞նչ է տնօրէն մը: Ինչո՞ւ անոր առջեւ հագուստս պիտի կոճկեմ: Ինչո՞ւ ոտքի պիտի ելլեմ: Երբե՛ք: Ինչի՞ս տնօրէնն է ան: Խցան մը պարզապէս, ոչ տնօրէն մը: Հասարակ խցան մը, պարզ խցան մը, ճիշդ անոնց պէս, որ կը ծառայեն շիշերը խցել: Ուրիշ ոչինչ:

Թուղթեր ներկայացուցին ինծի, որպէսզի ստորագրեմ: Օ՛հ, ի՞նչ ծիծաղելի էր ատիկա: Կ'երեւակայէին, թէ թերթին տակը պիտի գրէի. Գրասենեակի պէտ՝ Փոփրիչչին: Հո՛գա: Հոն՝ ուր մեր բաժանմունքին տնօրէնը կը ստորագրէր՝ տեսանելիօրէն ձափուտեցի՝ Ֆերտինանտ Տրո: Ինչ պատկառելի լուծիւն մը տիրեց այդ պահուն: Բայց ես պզտիկ ժեսթ մը ըրի միայն: «Ո՛չ, ո՛չ, պարոններ, հնազանդութեան ո՛չ մէկ վկայութիւն, խնդրեմ», ըսի եւ ձգեցի գրասենեակը, երթալու համար շտակ տնօրէնին տունը: Տնօրէնը հոն չէր, անշուշտ, քանի որ...: Ծառան ուզեց արգիլել մուտքս: Բայց երբ յայտնեցի ինքնութիւնս անոր, ձեռքերը վար ինկան: Անմիջապէս մտայ արգուզարդի սենեակը:

Երաժշտութիւն. Արիփ՝ Սոֆի:

Նստած էր հայելիին դիմաց: Ոտքի ցատկեց եւ քայլ մը ետ գնաց: Ո՛չ...: Ինչո՞ւ...: Բայց չըսի իրեն, որ ես Սպանիոյ թագաւորն էի: Միայն ըսի, որ չեմ կրնար երեւակայել երջանկութիւնը, որ կը սպասէ քեզի, եւ որ մենք պիտի միանայինք, հակառակ մեր թշնամիներուն մեքենայութեանց: Աւելին չուզեցի ըսել ու հեռացայ:

Օ՛հ, ի՞նչ խորամանկ արարած է կինը: Միայն հիմա է, որ կը հասկնամ, թէ ինչ է կինը: Յարգ ոչ ոք գիտէր, թէ որու սիրահարած է ան: Անոր սիրոյ առարկան ճանչցող մարդերէն առաջինը ես եմ: Կինը սիրահարուած է ստաւանային: Այո՞, կատակ չեմ ըներ: Բնագէտնե՛րը: **(Կը նայի ձեռքերուն):** Բնագէտները կը գրեն աստուածային քանակութեամբ անհեթեթութիւններ, թէ այսպէս է կինը, այս է ու այդ է...: Բայց կինը միայն ստաւանային սիրահարուած է: **(Ոտքի կ'ելլէ):** Նայեցէք, կը տեսնէ՞ք այն մէկը, որ կ'ուզէ հեռագրատակը երկրորդ չարկի օթեակէն: Կը կարծէք, թէ չքանչանով զարգարուած այս մեծափոր անձնաւորութեա՞ն կը նայի: Կը սխալիք: Ան ստաւանային կը նայի, մեծափոր անձնաւորութեան ետին պահուրտած ստաւանային: Տեսէք, հիմա կը քողածածկուի անոր հագուստներուն մէջ եւ մատով նշան կ'ընէ օթեակի կնոջ: Տիկինը պիտի ամուսնանայ հետը, պիտի ամուսնանայ հե՛տը:

Սեղանին մօտ:

Եւ բոլոր այդ մարդերը, որ կը տեսնէք հոն, բարձր դասու ընտանիքներու բոլոր այդ հայրերը, բոլոր այդ մարդերը, որոնք բոլոր ուզութիւններով կը

պտուտքին եւ կը փութան իրենք զիրենք հայրենասէր ցոյց տալ, եւայն, եւայն, իրականութեան մէջ անոնք բոլորը կ'ուզեն ունենալ միմիայն ազարակներ, ազարակներ եւ ուրիշ ոչինչ: Անոնք դրամի համար պիտի ծախէին իրենց մայրը, իրենց հայրը, նոյնի՛սկ զԱստուած: Փառամոլներ, Յուդանէ՛ր: (Կը կորցնի արոտի յեմարանի): Եւ այդ անասման փառատենչութիւնը առաջ կու գայ անկէ, որ իրենց լեզուներուն տակ ունին փամփշաիկ մը, որ կը պարունակէ գնդասեղի գլխուն մեծութեամբ ճճի մը: Եւ այս ամէնքը գործն է Փուաներու փողոցին մէջ գտնուող սափրիչի մը: Ի՞նչ էր անունը, ի՞նչ էր, օ՛հ, մոռցայ անունը, բայց հաւաստի աղբիւրէ մարդիկ իմացած են, որ այդ բոլորին ետին կեցող մղիչ ուժը Թուրքիոյ Սուլթանն է, որ կը վճարէ սափրիչին՝ տարածելու համար մուհամեդականութիւնը ամբողջ աշխարհի վրայ: Կ'ըսեն, որ Ֆրանսայի մէջ, ժողովուրդին մեծ մասը արդէն ընդունած է Մուհամեդի հաւատքը:

Կը նստի արոտակից վրայ, կոնակը հանդիսականներուն: Երածշտութիւն:

ԱՅԴ ՕՐԸ ԱՌԱՆՑ ԹՈՒԱԿԱՆԻ ԷՐ

Նստած է արոտակից վրայ, օճախից մօտ:

Փաղտնօրէն պտտեցայ Նէվսիի պողոտային վրայ: Նորին վեհափառութիւն կայսրը կառքով անցաւ: Ամէն ոք հանեց իր գլխարկը: Նոյնը ըրի եւ ես: Զուգեցի ցոյց տալ, որ ես Սպանիոյ թագաւորն էի: Ո՛չ...: Անյարմար դատեցի ինքնութիւնս յաշտնել հող, այդ բոլոր մարդոց դիմաց: Որովհետեւ, ամէնէն առաջ պէտք է ինքզինքս արքունիք ներկայացնեմ...: Զիս ես կը կեցնէ նաեւ ա՛յն, որ չունիմ տակաւին Սպանիոյ ազգային տարազը: Եթէ կարենայի առնրակն պատմուճա՛ն մը ճարել: (Ոտքի կ'ելլէ): Մտածեցի հատ մը ապսպրել զերձակի մը, բայց ասոնք ճշմարիտ աւանակներ են: Աւելի՛ն. երեսի վրայ կը ձգեն իրենց աշխատանքը եւ իրենք կը նետուին չարաշահութեանց մէջ, եւ աւելի յաճախ՝ փողոցները չափշփելով կը զբաղին: (Կ'երթայ սնտուկէն առնելու համար իր փէլքրից վերարկուն, գայն բննելու մտքով): Ի՞մ լաւագոյն օրերուս միայն երկու անգամ հազած եմ այս վերարկուն...: Բայց այո...: Բայց որպէսզի... (Կ'երթայ գիշերային սեղանից վրայ փնտռելու գործի տուփ մը եւ անկէ կը հանէ մկրատ մը) այս սրիկաները չփճացնեն գայն, անձամբ պիտի պատրաստեմ...: (Աղմուկ տան մէջ: Կ'երթայ բանալիով գոցելու դուռը): Այսպէս ոչ ոք պիտի տեսնէ զիս:

Երածշտութիւն:

ՄՈՌՑԱՅ ԹՈՒԱԿԱՆԸ, ԶԿԱՅ ՆՈՅՆՊԷՍ

ԱՄԻՍԸ, ՍԱՏԱՆԱՆ ԳԻՏԷ ԹԷ ԻՆՉՈՒ

Պատմուճանը կախուած է փարաւանէն: ԻճՔ կանգնած է մէկ կողմը, կոնակը հանդիսականներուն:

Պատմուճանս աւարտած է...: Այսուհանդերձ, արքունիք ներկայանալու ուրուում չկայացուցի: Սպանիացէն գալիք պատգամաւորութիւնը տակաւին չէ հասած: Ու առանց պատգամաւորներու պատշաճ չէ որեւէ քայլ առնել: Ատիկա պիտի պակսեցնէր իմ արժանաւորութեանս ամբողջ ծանրութիւնը: Կը սպասեմ

իրենց մէկ վայրկեանէն ծիւր:

**Ուոֆի Կ'Ելլէ, Կ'առնէ պատմունանը եւ կը դնէ ուտերուն:
ժամացոյց: Երաժշտութիւն: Ռուսական ժողովրդական երգ:**

Իմ սղոցներովս ծայրէ ծայր կտրատեցի զայն, որովհետեւ ձեւը բոլորովին տարբեր պէտք է ըլլայ: Մարուան ճիշ մը արձակեց, երբ հագայ զայն:

ԱՌԱՋԻՆ ՕՐ

Ուոֆի՝ պատուեանքն մօտ: Հագած է սրնագոյն հագուստը ու պատմունանը ստած է ուտերուն:

Պատգամաւորներու գանդաղութիւնը մեծապէս կը զարմացնէ զիս: Ի՞նչ են արդեօք անոնց չապաղման պատճառները: Ֆրանսա՞ն արդեօք: Այո՞, ատիկա միակ ազգն է, որ նուազ արամգրուած է Սպանիոյ հանդէպ:

Երաժշտութիւն: Նիւթ՝ շղագրգոութիւն: Կ'երթայ փնտռելու իր պէժ վերարկուն ու գլխարկը եւ յանկարծօրէն դուրս կ'ելլէ: Փողոցին մէջ: Փողոցային աղմուկ: Զայներ:

Ի՞նչ ապուշութիւն: Կարծես թէ Սպանիոյ թագաւորը պարտաւոր է գոհճիկ վաճառականի մը պէս նամակներ գրել: Նամակատուն զացի հարցնելու համար, թէ Սպանիոյ պատգամաւորութիւնը հասա՞ծ է, թէ ոչ: Բայց նամակատան տնօրէնը, որ կատարեալ ապուշ մըն է, այդ մասին ոչ մէկ տեղեկութիւն ունէր. «Ոչ, - ըսաւ, - սպանական պատգամաւորութիւն չհասաւ հոս, բայց եթէ կը փափաքիս նամակներ գրել՝ կ'ընդունինք»: Թող երթայ ու ինքզինք կախել տայ: Ի՞նչ նամակ, ի՞նչ բան: Անհեթեթ առաջարկ: Դեղագործներն են, որ նամակներ կը գրեն: Կարծես թէ Սպանիոյ թագաւորը պարտաւոր է նամակ գրել, ինչպէս սովոր է ընել գոհճիկ վաճառական մը...

**Երաժշտութիւն. տեֆորներու փոփոխութիւն:
Վարագոյր:**

ՄԱՏՐԻՏ, 30 ՖԷՎՐԻԼԻՆ

**Ճերմակ խցիկ մը, բացարձակապէս մերկ: Մահճակալ:
Միգաման: Աթոռակ մը: Կը մտնէ ներս: Հագած է սրնագոյն հագուստը եւ պատմունանը առած է ուտերուն:**

Ահաւասիկ. վերջապէ՛ս Սպանիա կը գտնուիմ: Ատիկա այնքան արագ կատարուեցաւ, որ հազիւ ժամանակ ունեցայ ինքզինքս ճանչնալու: (Աղմուկ խենթանոցի հեռուներէն: Բացազանչութիւններ: Երիտասարդ բժիշկներու խնդով): Այս առտու, սպանական պատուիրակները վերջապէս ներկայացան ինձի եւ ամէնքս մէկ բարձրացանք կառք մը: Տարօրինակ է: Այնքան երկար սպասելէ հոք իրենց, ինչո՞ւ այս չանկարծական աճապարանքը: Այնքան արագ ընթացանք, որ կէս ժամէն հասանք Սպանիոյ սահմանը: Օ՛հ, կէս ժամ: Ատիկա երբեք կարելի չի թուիր: Ա՛հ, ճիշդ է, թէ Եւրոպայի բոլոր կողմերը երկաթուղիներ կան եւ ապա նաւերը նոյնքան արագընթաց են: (Կը նստի աթոռակին վրայ): Այո՞, կարելի է...: Ահաւասիկ ապացոյց մը:

Որքա՞ն հետաքրքրական երկիր է Սպանիան: Երբ առաջին սենեակէն ներս

մտանք՝ անհիշուած գլուխով մարդոց բազմութիւն մը տեսայ: Մտածեցի, թէ անոնք մեծամեծներ կամ զինուորականներ պէտք է ըլլան, որովհետեւ անոնք են, որ կ'ածիլեն իրենց գլուխները: Ինչ որ ամէնէն աւելի արտառոց թուեցաւ ինծի, արքունի դիւանապետին վարմունքն էր: Թեւէս բռնեց ու հրեց զիս խուցի մը մէջ եւ ըսաւ. «Հոս կեցիր եւ եթէ դուրս տաս, որ ինքզ Զերտինանտ թագաւորն ես՝ հոգի'դ կը հանեմ»: (Ոսթի կ'ելլէ եւ քայլ մը կը յառաջանայ): Բայց գիտնալով, որ ատիկա փորձ մըն է, մերժեցի ենթարկուիլ եւ պոռացի. «Ես Զերտինանտ Յրդ թագաւորն եմ եւ դուք ատիկա լաւ գիտէք»: Ասոր վրայ դիւանապետը կռնակիս գաւազանի երկու հարուած իջեցուց այնպիսի՝ անզթութեամբ, որ քիչ մնաց ճշայի: Բայց իշխեցի ես ինծի, չիշխելով, որ ատիկա, արժանաւոր պաշտօնի մը կոչուելու ատեն՝ կիրարկուած ասպետական ծիսակատարութիւն մըն է: Բայց ըլլալիք բան չէ ատիկա: Նոյնիսկ այս օրերուն Սպանիոյ մէջ տակաւին կը պահեն ասպետական սովորութիւնները:

Կ'երթայ նստելու մահճակալին վրայ: Ապա՝ կ'ելլէ եւ կ'երթայ դէպի արձակը:

Առանձին մնալով՝ որոշեցի ատեն մը նուիրուիլ պետութեան գործերուն: Գտայ, որ Չինաստանն ու Սպանիան նոյն երկիրը կը կազմեն: (Կը դառնայ եւ խօսքը երեւակայական խօսակիցի մը կ'ուղղէ): Տգիտութեան պատճառով է միայն, որ մարդիկ զանոնք կը նկատեն երկու տարբեր երկիրներ: Այդ մասին կասկածող ոեւէ անձի խորհուրդ կու տամ, որ թուղթի մը վրայ գրէ «Սպանիա» բառը: Ե լա՛ւ: Այդ պարագային անձամբ պիտի տեսնէ, թէ ատկէ կ'առաջանայ «Չինաստան»ը: Բայց զիս խորապէս յուզեց ուրիշ դէպք մը, որ վաղը պէտք է հրապարակ ելլէ: (Կ'երթայ դէպի մահճակալը, ծուկի կը նստի գետին եւ կը հագնի կօշիկները): Վաղը ժամը եօթը 18 անց տեղի պիտի ունենայ շատ տարօրինակ երեւոյթ մը: Երկիրը պիտի նստի լուսին վրայ: Ուէլլինթընը, անգլիացի նշանաւոր քիմիագէտը, նոյնինքն Ուէլլինթընը կը խօսի այդ մասին: Խոստովանիմ, որ մեծ մտահոգութեան մը մատնուեցայ, երբ մտածեցի լուսինն տարօրինակ փափկութեան եւ դիւրաբեկութեան մասին: (Երաժշտութիւն): Ամէն մարդ գիտէ, որ լուսինը սովորաբար կը կազմուի Համպուրի մէջ, եւ կը կազմուի զարշիլի եղանակով մը: Կը զարմանամ, որ Անգլիան հարկ եղած ուշադրութիւնը չ'ընծայեր այդ գործին: Կադ տակառագործ մըն է, որ կը յօրինէ լուսինը: (Երաժշտութիւն՝ մահճակալին մէկ անկիւնը): Բացայայտ է, որ այդ ապուշը զաղափար չունի, թէ ինչէ պէտք է կազմուած ըլլայ լուսինը: Ո՛չ, լուսին կազմել չի գիտեր ան: Ան կը գործածէ կուտրոնի մէջ թաթխուած պարան մը եւ հինգ զգալ ձիթախիղ, տարածելով այնպիսի՝ զարշահոտութիւն մը երկրի վրայ, որ կը պարտաւորուի քիթդ գոցել: Ահա թէ ինչու լուսինը այնպիսի փափուկ գունտ մըն է, ուր մարդիկ չեն կրնար ապրիլ: Ներկայիս ան բնակուած է միայն քիթերով: Ահաւասիկ թէ ինչու մենք չենք տեսներ մեր քիթերը: Անոնք ամէնքը հոն կը գտնուին:

Երբ մտածեցի (ոսթի կ'ելլէ), որ երկիրը ճշող նիւթ է եւ մեր քիթերուն վրայ նստելով կրնայ փոշիի վերածել զանոնք, այնպիսի՝ անձկութենէ մը բռնուեցայ, որ հագայ գուլպաներս եւ կօշիկներս ու աճապարանքով գացի խորհրդարան՝ ոստիկանութեան հրահանգ տալու, որ արգիլեն երկրին նստիլ լուսին վրայ: Ածիլուած գլուխով մեծամեծները, զորս տեսայ խորհրդարանին մէջ, շատ խելացի մարդեր են եւ երբ ըսի. «Պարոններ, ազատագրեմք լուսինը, որովհետեւ երկիրը կը պատրաստուի անոր վրայ բարձրանալ» (Կ'ելլէ մահճակալին վրայ), անոնք վայրկեանապէս աճապարեցին գործադրել իմ վեհապետական կամքս, եւ անոնցմէ շատերը մազլցեցան պատերը՝ բռնելու համար լուսինը: Բայց այդ պահուն ներս մտաւ Մեծ Դիւանապետը: Մեծամեծները ցրուեցան անմիջապէս որ տեսան զայն: Թագաւոր ըլլալով՝ ես առանձին

մնացի հոն: Այն ատեն, զիւանապետը, ի մեծ զարմանք ինծի՝ գաւազանի հարուած մը տուաւ կռնակիս եւ ուժի գործադրութեամբ առաջնորդեց զիս իմ սենեակը: Օ՛հ, Սպանիոյ մէջ որքա՛ն մեծ է ժողովրդական սովորութիւններու ուժը:

Երաժշտութիւն:

ՅՈՒՆՈՒԱՐ, ՆՈՅՆ ՏԱՐԻՆ,

ՈՐ ՅԱԶՈՐԴԵՑ ՓԵՏՐՈՒԱՐԻՆ

**Կորնած է խորքի պատիւ, կռնակը՝ հանդիսակամե-
րուն: Գլուխը խուզուած է եւ կը կրէ խենթերու յատուկ
ներմակ զգեստը:**

Օ՛հ, ո՛չ, տակաւին չկրցայ որոշապէս հասկնալ, թէ ինչ տեսակ երկիր է Սպանիան: Ժողովրդական սովորութիւններն ու պալատին բարոյական օրէնքները բոլորովին տարօրինակ բնոյթ մը ունին հոն: Չեմ հասկնար, յայտնապէս ոչինչ կը հասկնամ Սպանիայէն: Այսօր մագերս խուզեցին, հակառակ անոր, որ ամբողջ ուժովս պոռացի, որ վանական չեմ ուզեր ըլլալ: Ատոր վրայ սկսան պաղ ջուր թափել գլխուս եւ ամէն ինչ մթնցաւ շուրջս: Երբեք մտածած չէի նման դժոխքի մը մասին: Եթէ քիչ մըն ալ շարունակէին՝ պիտի կատղէի, եւ արդէն հագիւ կրցայ զսպել ինքզինքս: Ինչո՞ւ: **(Կր մօտեցնայ արողակիւմ, կը դառնայ անոր շուրջը եւ կը նստի վրան):** Բայց ինչո՞ւ կ'ըլլան այս բոլորը: Ի՞նչ է իմաստը տարօրինակ այս սովորութեան, այս ապուշ ու նոցնքան անհեթեթ սովորութեան: Անըմբռնելի կը մնայ ինծի նոցնպէս թագաւորներուն անպատասխանատուութիւնը, որոնք չեն ջնջած այդ սովորութիւնները:

Ըստ կարգ մը հաւանականութիւններու, կ'ենթադրեմ, որ ինկած եմ Հաւատաքննութեան ձեռքերուն մէջ: Թ'երեւս այն մարդը, զոր իբրեւ զիւանապետ ճանչցայ, իրականութեան մէջ ինքը Մեծ Հաւատաքննիչն է: Բայց ես բնաւ չեմ հասկնար, թէ ինչպէ՞ս կարելի է թագաւոր մը հաւատաքննութեան ենթարկել: Ինչպէ՞ս կարելի է նման գործ մը: Ատիկա պէտք է Ֆրանսայի գործը ըլլայ, մա՛նաւանդ Փոլիսիաքին: Այդ Փոլիսիաքը կատարեալ գազան մըն է: Կարծես երգում ըրած է զիս մինչեւ մահ չարչարել: Ծարունակ կը հալածէ զիս: Կ'ուզէ փճացնել զիս, ինչպէս ըրաւ իմ ազնիւ զարմիկիս՝ Ծարլին: Բայց գիտեմ, բարեկամ, որ անգլիացին է քեզ զրդողը: Անգլիացիները մեծ քաղաքագէտներ են: Անոնք կը սիրեն ամէնուրեք մխրճել իրենց քիթը: **(Ոտքի կ'ելլէ):** Ամէն մարդ գիտէ, որ երբ Անգլիան քթախոտ քաշէ, Ֆրանսան կը փոնկտայ:

25ԻՆ

**Փռուած է գետիմ ու ձեռքերը տարածած մահճակալիմ
վրայ: Մեծ դժուարութեամբ կը նստի անկողնիմի:**

Ա՛խ, այդ անիծեալ գաւազանը: Սարսափելի ցաւ կը պատճառէ մարդու: Ա՛յ: Քիչ առաջ, Մեծ Հաւատաքննիչը մտաւ սենեակս, բայց, ոտնաձայնը իմանալով՝ անկողնիս տակ պահուցեցայ: Չկրցաւ տեսնել զիս ու սկսաւ կանչել. «Փոփրիչչի՛ն»: Ձայն չհանեցի: «Օքսէն Իվանո՛վ, քարտուղար, պարո՛ն»: Նորէն չպատասխանեցի: «Ֆերտինանտ Յրդ»: - «Ոջ, եղբայր, դուն ուշադրութիւն պիտի չընծայես ինծի: Մենք քեզ կը ճանչնանք: Նորէն պաղ ջուր պիտի լեցնես գլխուս»: Ի՛ վերջոյ, տեսաւ զիս ու գաւազանի

հարուածներով հանեց մահճակալին տակէն: Օ՛հ, այդ գաւազանը...: Սոսկալի է:

Բայց իմ վերջին յայտնութիւնը մոռցնել տուաւ այս բոլորը: (Կը փռուի մահճակալին տակ): Գտայ, որ իւրաքանչիւր աքաղաղ ունի իր Սպանիան եւ թէ Սպանիան կը գտնուի իր փետուրներուն տակ: Մեծ Հաւատաքննիչը մեկնեցաւ շատ զաշրայցած, սպառնալով ինծի այս կամ այն պատիժներով: Ի հարկէ, ամբողջովին անգիտացայ իր անգոր կատաղութիւնը, որովհետեւ զիտեմ, որ կը վարուի մեքենայի մը պէս, ճիշդ անզլիական գործիքի մը պէս:

Ուռնաձայներ, որ կը մօտենան: Այն վայրկեանին, որ բանալին կը դառնայ կղպանքին մէջ, կ'անապարէ մտնել մահճակալին տակ: Երաժշտութիւն:

Երկարած է մահճակալին վրայ: Մերք ընդ մերք կը փորձէ վեր կենալ, բայց կրկին կ'իյնայ բարձին վրայ:

Աստուած իմ: Դիմանալու ուժ չունիմ այլեւ: Ո՛չ: Ի՛նչ դաժանութեամբ կը վարուին հետս: Պաղ ջուր կը թափեն զլիսուս: Զիս մտիկ չեն ըներ, չեն նայիր ինծի: Ի՛նչ ըրած եմ իրենց: Շարունակ կը շարչարեն զիս...: Ինչո՞ւ: Ի՛նչ կ'ուզեն ինձմէ, իմ դժբախտ անձէս: Ի՛նչ կրնամ տալ իրենց: Ոչինչ ունիմ:

Նստելու նիգ մը կ'ընէ ու կը յաջողի:

Հասած եմ վերջը ու այլեւ չեմ կրնար տանիլ իրենց շարչարանքները: Գլուխս կ'այրի եւ ամէն ինչ կը դառնայ աչքերուս առջեւ: (Կ'առնէ բարձր բազուկներուն մէջ): Աստուած իմ, ազատէ զիս: Հեռացուր զիս այս տեղէն: Տուր ինծի մրրիկի արագութեամբ ձիաքարչ կառք մը: Կառավար, ել թամբին ու հնչեցուր զանգը: Երիվարեն'ք, սուրացէք դէպի ամպերը եւ զիս տարէք հեռու այս աշխարհէն: Հեռու, աւելի՛ հեռու, հո՛ն, ուր այլեւ ոչինչ կը տեսնուի: Ոչի՛նչ: Հո՞ն՝ երկինքը պիտի պտտքի աչքերուս առջեւ, պզտիկ աստղ մը պիտի փայլփլի խորութիւններու մէջ, անտառ մը, իր մութ ծառերով ու լուսնի ընկերակցութեամբ պիտի սուրայ, գորշ մառախուղ մը պիտի տարածուի ոտքերուս տակ, կիթառ մը պիտի հնչէ մառախուղին մէջ. մէկ կողմին՝ ծովը եւ, միւս կողմին՝ Իտալիան: Աւելի հեռուն (Բիչ մը վեր կը բարձրանայ) կը նշմարուին նոյնիսկ ռուսական խրճիթները: Թերեւս հեռուն երեւցող այդ կապուտ կէտը իմ տունս է: Պատուհանին մօտ նստող արգեօք մայրս չէ՛: (Կ'ելլէ եւ ծուկի կու գայ բեմին կեդրոնը): Մա՛յր, ազատէ քու դժբախտ գաւակը: Թափէ կաթիլ մը արցունք անոր ցաւագին զլիսուն վրայ: Տե՛ս, մարդիկ ինչպէս կը շարչարեն զինք: Սեղմէ կուրծքիդ քու խեղճ որբդ: Ան տեղ չունի աշխարհի վրայ: Մարդիկ կը հալածեն գայն: Մա՛յր, մա՛յր, գթա՛ քու պզտիկ ու հիւանդ ազուդ...: Ի դէպ, զիտէ՞ք, որ Ալճերիոյ պէջը վէրք մը ունի՝ ճիշդ քիթին տակը:

Զղային ու երկարատեւ խնդուի:
Երաժշտութիւն: Նիւթ՝ օրագիրը, մինչ վարագոյրը կամաց-կամաց կը գոցուի:

Վ Ե Ր Զ

ՄԱՄՈՒԼԻ ԱՐՁԱԳԱՆԳՆԵՐԷՆ* * * * * * * * * * * * * * * * * *

ԽԵՆԹԻ ՄԸ ՕՐԱԳԻՐԸ

Դերասանի արուեստի տեսակէտէն, Բոժէ Քոնիոյի խաղարկութեամբ, «Խենթի մը օրագիրը» մեծ յաջողութիւն մըն է: Ոչ ոք չսխալեցաւ, եւ մամուլը ամէնէն առաջ իր շեշտը դրաւ այս պատշաճեցման բացառիկ շահեկանութեան վրայ. անո՛ր համար մանաւանդ, որ այդ գործը թատերախաղ մը ըլլալու չէր սահմանուած: Քոնիոյի առաջին արժանիքը կը կայանար Կոկոլի ձգտումը ամբողջութեամբ իրեն կենթարկելու կարողութեան, ինչպէս նաեւ նորավպիկ կշռոյթին նկատմամբ իր հաւատարմութեան եւ այն խոր անձնատրուութեան անձկութեան մէջ, զոր հեղինակը կը կոահէ թափանցող ակնարկով մը, նաե՛ւ մեծ առարկայականութեամբ, որ կը ծառայէ արտայայտելու իր սեփական անձկութիւնը:

Սիլվի Լիւնօ, որ գործակցած է Բոժէ Քոնիոյի «Խենթի մը օրագիր»ին թատերական պատշաճեցման մէջ, կը գրէ. «Երագի եւ իրականութեան ապահարգանին վիպական թեման է ասիկա, բայց ասիկա նոյն ատեն նուազ վիպական, չափազանց այլակերպած, Կոկոլի գործերուն ամէնէն կոկոլեանն է»:

Քոնիոյի հրաշքը, զոր ամէն ոք տեսաւ, կը կայանայ յա՛տկապէս անոր մէջ, որ ան կրցաւ չուզում առաջացնել, ճշգրտօրէն իւրացնելով այս մերկ պատմութիւնը:

«Լ'Աւան-սէն», թիւ 278

ԱՌԱՆՁԻՆ ՄԱՐԴՈՒ ՄԸ ՅԱՂԹԱՆԱԿԸ

Կոկոլը փրկուած է: Սիլվի Լիւնոյի եւ Բոժէ Քոնիոյի յաջող պատշաճեցումը, Ֆրանսուա Փերրոյի բեմադրութիւնը, դարձեալ Քոնիոյի գործակցութեամբ, մասամբ բաժին ունին այս հրաշքին մէջ: Երեկոն իր ամբողջութեամբ կը գտնուէր դերասանի մը ձեռքերուն մէջ: Եւ այդ դերասանը չէր դաւանանք իր սիրած գործին:

Փիեռ Մարքապրի

(«Փարի փրես»)

ԽԵՆԹԻ ՄԸ ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹԻՒՆ ՄԸ

Ծիծաղաշարժ կամ հոգեյոյզ մանրամասնութիւններուն ճշգրտութեան ուժով, Փոփրիշչիցի խոստովանութիւնները կը պարտադրեն իրենց խելացնոր տրամաբանութիւնը: Իրեն հետ մենք կ'ըմբռնենք եւ կը զգանք անանուն գրասենեակի մը կեղեքումները, իրեն հետ կը բաժնենք «մեծերուն» հանդէպ իր ապրած նողկանքը, սիրահարի իր անյոյս թախծները: Աւելի՛ն. իրեն պէս հաւատք կ'ընծայենք շուներու ուղղած նամակներուն, որոնց մէջ ան կը նկարագրէ բարեկեցիկ մարդիկը՝ ախորականի սրտանմիկ միամտութեամբ: Ի վերջոյ կը հասկնանք զինք, երբ կը հակադրէ վայրագ իրականութիւնը՝ սպանացի անձանօթ բազաւոր մը ըլլալու իր երագին հետ:

Որքան անելի իւրացնենք իր տեսակէտը, իր թելադրած ճշմարտութիւնը առաւել եւս կը հիմնատրուի, կը խեղաթուրէ, յետոյ բոլորովին կ'անտես, իրական աշխարհի տոնալները: Անող անհաւանականութիւնը իր ցնորական միտքարութիւններուն սկիզբի մեր անմիջական համակրանքը կը փոխէ արտաքին գութի: Իր անիծեալ առանձնութիւնը դատապարտելով, նահանջի այս մտահոգիչ շարժումը հասարակութեան մօտ կը ստեղծէ թատերական ուժեղ վիճակ մը, արդարացնելով պատմութիւն պատշաճեցումը:

Պիտի ըսուի անկասկած, որ դերասանի այս վարժութիւնը միայն թատրոնին յատուկ չէ: Ճիշդ է, որ ան մեծ մասամբ կը հրաժարի արարները կազմող տոնալներու մեծամասնութեանէն. այսինքն՝ դերասանի եւ անոր անձնատրած տիպարին միաձուլումէն, ապա նաեւ նոյն տիպարին եւ հանդիսատեսին նոյնացումէն:

Բայց Պերնար Շոյի նամակներէն ֆաղուած «Սիրելի ստախօսը» այլ բան չէր, ոչ ալ տարբեր բան էր հիանալի մենախօսութիւնը Պեֆէթի «Վերջին ժապաւէն»ին: Թատերական սեռի ներքին աշխարհին մէջ Բոժէ Քոնիօ կ'իրագործէ գեղեցիկ յաջողութիւն մը, որ ճշմարիտ փայլ մը կ'ընծայէ իր անձին:

Պերթրան Փուարօ Տելվեշ

(«Լը Մոնս»)

ՃՇՄԱՐԻՏ ԱՇԽԱՐՀ ՄԸ

Մեր մօտ այդպիսի բան չէ պատահած. բեմին վրայ միայն մէկ անձ եւ մարդիկ սկիզբէն իսկ գիտեն, որ ամբողջ երեկոն այդպէս ըլլայ: Խոստովանիմ, որ մեծապէս կը կասկածէի, հակառակ այն խոր համոզումին, զոր կը տածէի Բոժէ Քոճիոյի հանդէպ: Իր այլ գերերուն կողքին, չեմ մոռցած Համլէթը, զոր ան յաջողեցաւ մարմնաւորել երեք տարի առաջ, Քարքասոնի մէջ: Եւ ապա, կամաց-կամաց գերասանը անյայտացաւ, իր տեղը տալու համար ճշմարիտ անձնաւորութեան մը, որ զիս խորապէս չուզեց, պարտադրեց ինքզինք ինծի ոչ թէ որովհետեւ բարձր մակարդակով փորձեր կ'ընէր - որուն անձամբ կարեւորութիւն չեմ ընծայեր - այլ անոր համար, որ կը ստեղծէր ճշմարիտ աշխարհ մը:

Քլոտ Օլիվիէ

(«Լէ Լեթրը ֆրանսէզ»)

ՄԱՀՄԱՆԱՓԱԿ ԻՄԱՅԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Բոժէ Քոճիօ այս արկածախնդրութեան իրաբանչիւր պահը կ'արտայայտէ անսահմանափակ իմացականութեամբ, որովհետեւ այդ իսկ է իրականութիւնը: Փափկանկատ եւ արտակարգօրէն բծախնդիր, յստակ եւ անկասկած մանրակրկիտ աշխատանքով է, որ ան կը յաջողի երկու ժամերու ընթացքին մեզ վկան դարձնել խեղճ մը հոգիին, առանց վայրկեան մը իսկ հանդիսատեսը ձանձրացնելու: Եւ այս խաղարկութիւնը յաճախ սարսափելի է: Որովհետեւ երբեմն կայծակնային արագութեամբ Փոփրիշչին կը կասկածի, թէ իրմէ բան մը կը խուսափի: Եւ ասիկա սահմոկեցուցիչ անձկութիւն մըն է: Թերեւս վախ, զրեթէ օգնութեան ճիշ մը: Խուսափուկ րոպէներ, որոնց Բոժէ Քոճիոյի խաղարկութիւնը կ'ընծայէ ամենի ուժ մը: Յրանստա Փերրէ օժանդակեց Բոժէ Քոճիոյին այս գործին բեմականացման համար, որուն թատերական պատշաճեցումը կը պատկանի Սիլվի Լիւնոյի, ռուս գրականութեան գլուխ-գործոցներուն թարգմանչուիին:

Փագ Լըմարշան

(«Լը ֆիկարօ լիթերէր»)

ՆՈՅՆԻՆՔՆ ՓՈՓՐԻՇՉԻՆ

Արտակարգ ներկայացում մը: Թեքնիքի տեսակէտէն՝ կատարեալ նուաճում մը: Բեմահարթակին վրայ առանձինն՝ Բոժէ Քոճիօ հանդիսատեսը շնչասպառ կը պահէ ամբողջ երկու ժամ, իր արտայայտութեանց այլազանութեամբ, չուզումի ուժովութեամբ եւ ճշմարիտ խաղարկութեամբ: Բայց ինչ որ այս ներկայացումին իւրաչափուկ արժէք մը կ'ընծայէ, ա'յն է, որ նուազ համախոհ ըլլալով հանդերձ բեմի համար չչղացուած գործերու թատերական պատշաճեցումին, ստիպուած ենք խոնարհիլ Բոժէ Քոճիոյի այս ձեռնարկին առջեւ: Անձնաւորութիւնը, որ կ'ապրի մեր աչքերուն դիմաց «Մաթիւրէն թատրոն»ի բեմին վրայ, նոյնինքն Օքսանս Իվանովիչ Փոփրիշչինն է...: Երբեք այսքան ժուժկալութեամբ չէ ներկայացուած (եւ այդ պատճառով իսկ զգլխիչ) հոգիի մը մէջ թափանցած մթութիւններուն ներխուժումը:

Անտրէ Ալթեր

(«Թեմուանեաժ ֆրիթիէն»)

ԵՐԱԺՇՏՈՒԹԵԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ

Առաւել կամ նուազ օժտեալներ զուլթիւն ունին: Եւ Բոժէ Քոճիոն վստահաբար մէկն է անոնցմէ, որոնք գիտեն մեծ ուժղնութեամբ հանրութեան փոխանցել անձնաւորութեան մը ներքին տառապանքները: Բայց այս արժանիքը ոչինչ պիտի նշանակէր, եթէ ուժեղ չղացում մը առաջնորդած չըլլար այս մեկնաբանութիւնը: Բնագիրին ընտրութիւնը, ինչպէս նաեւ երաժշտութիւնը կը պատկանի Ժորժ Տըլլըրիւի (որ փոխ կ'առնէ ինչ որ արտաստովոր է երաժշտական որոշակի բանամթերքէն), առաւել՝ տեքորն ու բեմադրութիւնը: Այս բոլորին մէջ յաւելեալ ու կարեւոր բաժին ունի Բոժէ Քոճիօ: Ասոր համար է, որ պէտք է գովեստ կարգալ անոր:

Ճ.Մ.Տիւմուլէն

(«Լիպերասիոն»)

Ժ. ԱԹԹԱՐԵԱՆ

ՅԱԿՈՒԲ ԿԱՐԱՊԵՆՑԻ “ԱՆԿԱՏԱՐ” ՆԱՏՈՐԸ

Նիւ Եորքի «Ասկետառ» հրատարակչական տունէն լոյս ընծայուած, 250 էջ մաքուր թուղթի վրայ, գրաշարական պզտիկ սխալներով, սակայն շատ մաքուր տրպագրութեամբ, լաթակազմ, ներկայանալի, սիրուն գործ մըն է Յակոբ Կարապենցի «Անկատար» խորագրուած հատորը: Գրագէտին լոյս ընծայած հատորներուն հօթներորդը: Լեզուն արեւելահայերէնն է, բնականաբար: Եւ այս բնականաբարը կ'առնչուի հեղինակին պարսկահայ ըլլալու հանգամանքին... բնականաբար: Առոյգ, կայտառ ու ժուժկալ, ամէն պաճուճանքէ ու արուեստական դարձուածքներէ ձերբազատուած լեզու մը: Երբեմն չոր ըլլալու աստիճան:

Եթէ աչք մը նետելու ըլլաք «հեղինակին գործերը» ցուցակագրող գիրքին վերջին էջին, պիտի նկատէք շուտով, որ քիչ մը աւելի քան տասնհինգ տարիներու ընթացքին, աւելի ճշգրիտ ըլլալու համար՝ 1970ին լոյս ընծայուած իր առաջին հատորէն մինչև 1987ի այս «Անկատար» խորագրուած վերջինը, Կարապենց հօթը պատկառելի հատորներու հեղինակ դարձած է: Թուարանական պարզ հաշիւով մը, երկու տարին մէկ հատոր:

Պիտի ընդունիլ, որ այս կարգապահ հետեւողականութիւնը, գրական արտադրողականութեան այս ռիթմը, ինքնին առանձին արժանիք մը բացայայտող, բացառիկ, ֆենոմենալ երեւոյթ է սփիւփահայ մեր գրական իրականութեան համար: Տրուած ըլլալով, որ կեանքի մը ամբողջ տեսողութեան երկու կամ առաւելագոյն երեք հատորներու հեղինակութիւնը բացառիկ արդաստուրութեան յատկանիշ մը նկատուած է մինչև այժմ, վաստակաւոր գրագէտի համբաւ ու

տիտղոս ապահովելով ենթակային սփիւփահայ գրականութեան անդաստանին մէջ, ուր ընդհանուր առմամբ տիլէթանթիքովն է — գրասիրութիւն, գեղարուեստասիրութիւն — եթէ կարելի է այսպէս թարգմանել պարպոյ ժամերու գրադմունքներով իր նախասիրութիւններուն գոհացում տալու կամ ձեւով մը ինքզինք մխիթարելու այդ իրավիճակը: Տիլէթանթիքովն է Սփիւփի մեր գրական մշակները յատկանշող հիմնական գիծը: Այսինքն՝ մարդիկ իրենց ապրուստը ապահովող հիմնական գործի մը, զբաղումի մը կողքին ու անկէ աւելցած, շատ յաճախ փոխառնուած ժամանակի մը մէջ կը զբաղին նաև իրենց սիրած, իրենց հաճոյք ու հոգեկան գոհացում պատճառող մէկ ուրիշ գործով: Այս պարագային՝ գրականութեամբ: ԸՍփիւփի մեր պայմաններուն նուազագոյն ծանօթութիւն նոյնիսկ ունեցող մէկը պիտի չվարանէր վկայելու, որ ոչ մէկ գրող, ոչ մէկ գրագէտ չի կրնար չաւակնիլ իր գրական ստեղծագործութիւններով ապրուստ, կեցութիւն ապահովել ինքզինքին, նոյնիսկ եթէ Հոմերոս մը, Վիրգիլիոս մըն է...

Կարելի է հիմա երեւակայել, թէ իր ու ընտանիքին ապրուստը հոգացող զբաղումի մը ամբողջական ժամանակ տրամադրելէ ետք, ի գին ծանրագոյն ի՞նչ զոհողութեան ու ինչպիսի՜ խիստ կարգապահութեան, տիւսիլիլիսի մը շնորհիւ Կարապենց չաճողած է տիլէթանթիքովն այդ իրավիճակէն ձերբազատուելով վրոֆէսիոնալ գրագէտի չափանիշներուն հասնիլ: Ըսել ուզածս այն է, որ բառին իսկական առումով բազմավաստակ ու վաւերական գրագէտի տիտղոս արդարացնող գրող մըն է Կարապենց: Կրկնապատիկ, բազմապատիկ տարողութեամբ արժանիք մը ասիկա, երբ նկատի ունենանք այդ դառն իրողութիւնը, որ Սփիւփի տխուր մեր

պայժամանները ոչ մէկ հնարաւորութիւն կ'ընծային բոլոր Կարապենցներուն՝ իրենց գրական վաստակով ապրուստ, կեցութիւն ապահովելու...: Այդ պայժամանները նոյնիսկ զիրք մը լոյս ընծայելու հնարաւորութիւն չեն տար հայ գրողներուն:

«Անկատար եւ այլ պատմուածքներ» խորագիրը կը կրէ Կարապենցի այս վերջին հատորը: Այս խորագիրը վերցուած է հատորը բաղկացնող տասնհինգ պատմուածքներուն «Անկատար» վերնագրուած մէկէն: Ծղրիտ ըլլալու համար՝ տասներորդ պատմուածքէն:

Ինչո՞ւ այսքան նշանակալից այս խորագիրը:

Արդեօք անոր համար, որ կեանքի մէջ ոչինչ կայ լման, ոչինչ կատարեալ, ոչինչ տեւական: Անոր համար, որ ամէն ինչ իրաւ է եւ ամէն ինչ սուտ ու խաբուսիկ յանկարծ եւ որովհետեւ ամէնէն ազնիւ, ամէնէն հաստատ, վստահելի կարծուած մըտածումները, զգացումները, ամէնէն ապահով թուացող իրողութիւններն անգամ ու ամէնէն ազնիւ սէրերը նոյնիսկ տեսնես յանկարծ լեղի, կծու դիմագիծ մը կը յայտնաբերեն, տեսնես յանկարծ ցնորք ու անո՞ւրջ կը դառնան...: Թէ անոր համար, որ գրագէտը՝ ի՛նք իր գործը ամբողջական ու կատարեալ չի գտներ եւ աշխարհ մը գիր, աշխարհ մը այդպէս խօսք թուղթին յանձնելէ յետոյ, ովկիանոսին պէս, որ կաթիլ մը, վերջին կաթիլ մը ջուրի յաւիտենապէս ծարաւ կը մնայ, գրագէտը ինք եւս վերջին կաթիլ մը բառի, դեռ վերջին կաթիլ մը խօսքի պապակ կը զգայ: Հատորին եւ նոյնինքն «Անկատար» վերնագրով այդ պատմուածքին ընթերցումը աւարտելէ հտք, ընթերցողը կը տատամսի տակաւին այդ երկու եզրակացութիւններուն միջեւ: Ե՛ւ մէկը, ե՛ւ միւսը շատ հաւանաբար:

Կ'ըսէի վերը, որ տասնհինգ պատմուածքներէ կը բաղկանայ հատորը: Կը թուեմ զանոնք դասաւորման իրենց կարգով: «Հայկական շուրջպար», «Մեր նախնիների ստուերները», «Երբ ասում եմք այն ինչ չեմք ասում եւ չեմք կարողանում ասել», «Մօրս անաւարտ օրագիրը», «Տիկին Յասմիկ», «Կամուրջը», «Տիվերթիմենթի», «Մի սիրոյ պատմութիւն», «Աեւ ու սպի-

տակ», «Արեւադարձ», «Նիւ Եորք - Նիւ Եորք», «Քաղցրադառն», «Անկատար», «Սենեակ թիւ 842» եւ «Հոգեհանգիստ»:

Ըսելու եմ անմիջապէս, ընդհանրական խորհրդածութիւններու այս շրջագիծին մէջ, թէ բացառելով չիշուած խորագիրներէն երկուքը կամ երեքը, կը դժուարանամ մնացեալներուն պատմուածք որակումը տալ: Որովհետեւ, եթէ պատմուածք ըսուածը մինչեւ օրս ի գօրու եզող հասկացողութեան համաձայն, արձակով արտայայտուող գրական ստեղծագործութեան այն ձեւն է, ուր որոշ դերակատարներ, որոշ ժամանակի ընթացքին տրամաբանական յաջորդականութեամբ զարգացող ու իրարու շաղկապուող դէպքերու, դիպուածներու ու զործողութեանց օժանդակութեամբ մարդկային հոգեվիճակ մը կամ հոգեվիճակներ պատկերացնել կը ջանան, պիտի ըսել անյապաղ, որ Կարապենցի այս հատորին պատմուածքները հեռու են այդ հասկացողութեան շրջագիծէն: Պատմուածքի ձեւին տակ ներկայացուած Կարապենցի գրութիւնները ո՛չ ժամանակ կը յարգեն, ո՛չ դէպքերու յաջորդականութիւն, ոչ ալ կայուն, մնացուն գերակատարութիւն: Ես պիտի դիւրաւ արձակ բանաստեղծութիւն որակումը տայի Կարապենցի այս գործին: Բանաստեղծութիւն՝ որ երբեմն ալ, էջերու տարածքին, առակագրութեան, հեքիաթագրութեան ու ինչ գիտնաս տակաւին մենագրութեան, ինքնակենսագրութեան, առասպելագրութեան տարազներով կը ներկայանայ:

Յամենայնգէպս, պատմուածք, բանաստեղծութիւն թէ ուրիշ ինչագրութիւն, Կարապենցի այս հատորը կարդացող ամէնէն խստապահանջ ընթերցողն անգամ չի կրնար չանդրադառնալ, որ բառի, խօսքի, ըսելակերպի վարպետի մը հետ է իր գործը: Գրելու, արտայայտուելու այնքան մը հմտութիւն, այնքան մը վարժութիւն ու համարձակութիւն յաջողած է ձեռք ձգել մարդը, այնքան մը զտած, բիւրեղացուցած է գրելու իր ոճը, որ այլեւս ձեռքազատած է ինքզինք ամէն ձեւի հասկացողութիւններէ ու պարտաւորութիւններէ, նոյնիսկ ընթերցողին հաճելի երեւնալու փորձութիւններէն...: Ա՛յնքան՝ որ կրնայ այլեւս մեթաֆորներով, փարապոններով, այլաբանական տարազներով արտայայտուիլ: Բառ մը ըսել ամբողջ միտք մը, մտածում մը դրսեւորելու

Համար: Վարպետ, հանճարեղ նկարիչին պէս, որ երկու զիծով կամ վրձինի հատու, կտրուկ երկու հարուածով նկար մը ամբողջ կ'ուրուագծէ: Եւ կամ վիրթուոզ արուեստագէտին նման, որուն համար ջութակները, ջութակներուն թիւերը այլեւս զաղտնիք մը չունին եւ որ զիտէ անոնց հետ խաղալ, ինքզինք անոնց պարտադրել առանց որեւէ ձայնանիշի եւ ձայնատետրի օգնութեան: Կարապենց ա'լ բառերուն հետ խաղալու, անոնց բոլորին իր քմահաճ ինքնատուլութիւնները պարտադրելու արուեստին տիրապետած է:

Ըսինք արդէն, որ այս հատորին մէջ պատմուածք անունը կրող գրութիւնները, քանի մը բացառութիւններով, պատմուածք կոչուելու զրական այդ սեռը կազմաւորող շինանիւթերով չեն կառուցուած: Այդ շինանիւթերէն մէկը եթէ պատմուածքի նիւթն է, միւսը անպայման պիտի կառուցը ըլլայ, այսինքն՝ տրամաբանական յաջորդականութեամբ իրարու շաղախուած դէպքերը, զիպուածները, իրագործութիւնները: Այդպէս, օրինակ, էջի մը սկիզբը եթէ տեղ մը, եթէ քաղաք մը կամ երկիր մը առաջնորդուած ես, կը սպասես, կ'ակնկալես, որ այդ տեղերը բան մը պատահի, մինչեւ այդտեղ եկած ըլլալդ արդարացնող իրագործութիւններ տեղի ունենան, սակայն Կարապենցի հետ էջին կէսը հազիւ թէ հասած, կամ էջին վերջը կը տեսնես յանկարծ, որ այդ ամբողջը բան մը ըսել չէր, բան մը ըսելու պատրուակ էր միայն...: Կը նմանիս մէկու մը, որ ճամբայ ելած էր որոշ տեղ մը երթալու համար, բայց մէկ ալ յանկարծ, ճամբու կէսերուն կ'անդրադառնայ, որ գացած-հասած է մեկնակէտին հետ ոչ իսկ մէկ կապ ունեցող անյայտ, անծանօթ վայրեր: Երբեմն նոյնիսկ... հեքիաթային, անջրպետային, մշուշապատ ոլորաներ: Երեւակայեցէք պատկերասփիւռի գործիքին զիմաց ոիմոք-բոնթրոլ մը ձեռքին նստած անհամբեր մէկը, որ անդադար, իւրաքանչիւր ակնթարթի նոր Բանալ մը, յայտագիր մը կը փոխէ...: Պիտի այստեղ աւելցնել անմիջապէս, որ այդ ամբողջը, հեքիաթային, անջրպետային ու մշուշներու այդ հեւ ի հեւ ճամբորդութիւնը, Կարապենցի ճամբորդական գրասենեակի առաջնորդութեամբ կը յաջողի հաճոյքի մը, վայելքի մը վերածուիլ...

Արդարեւ, ի՞նչ փոյթ կառուց, ի՞նչ փոյթ

շարունակականութիւն, յաջորդականութիւն ու մասամբ նորին: Այդ ամէնը ի՞նչ փոյթ, երբ Կարապենց ծանօթ է «Ճշգրիտ, հարազատ, ամենահարազատ» բառը գտնելու ու այդ բառին զօրութեամբ զինք կարգացող իրեն կապելու ամենանուրբ գաղտնիքին: Այդ չէ՞ արդէն իրաւ, անխարդախ արուեստագէտը միւս բոլորէն, միւս խաժամուժէն զանազանուելու կոչուած, հասարակէն, սովորականէն վեր ճախրելու սահմանուած նախապայման պայմանը: Այդ ո՞ր դերասանն է, որ կը յաջողի ինքզինք բեմին պարտադրել, ստանձնած դերը, ստանձնած իր տիպարը ո՛չ միայն մարմնաւորել հարազատօրէն, այլեւ վերստեղծել, վերակենդանացնել բոլորովին նոր հարազատութեամբ, եթէ երբեք չ'անտեսեր, նոյնիսկ եթէ չ'արհամարհեր հանդիսատես ամբօխը...: Այդ ո՞ր գրագէտն է, երանելի ո՞ր մէկ հանճարը, որ կը յաւակնի արժէք ունեցող երկու տող դուրս տալ, եթէ երբեք մատիտ կը շարժէ ընթերցողին հաւանութիւնը, հաճոյքը միայն նկատի առած... Եթէ երբեք կը գրէ այնպէս՝ որ իբրեւ թէ գլխուն կանգնած մարդիկ կան...

*
* *

Գիրքը կը բացուի «Հայկական շուրջպար» խորագիրը կրող գրութեամբ, զոր կարելի է վերեւ յիշուած պատմուածքային ինքնատուլութիւններուն մէկ շատ յատկանշական նմոյշ ներկայացնել եւ իբրեւ այդպիսին վերլուծումի ենթարկել: Գրութիւնը կը սկսի այսպէս.

«Երեւան, Նոյեմբեր: Հաւաքուել էինք Չարեցի Կամարի տակ: Արարատն էինք որոնում... Ես ուզել էի Արարատը տեսնել: Ինձ տարել էին Արարատը տեսնելու: Բայց Արարատը չկար: Սկսեց ձիւնել...»:

Ուրեմն այդպէս, Նոյեմբերի մէկ ամպոտ, մառախլապատ օր Հայաստան է հեղինակը ու քանի մը երիտասարդ հայաստանցիներու կողմէ տարուած է Արարատը տեսնելը հրեւարատը դարձնող յարմարագոյն տեղ մը: Բայց Արարատը, ինչպէս շատ յաճախ, ծածկուած է մշուշով ու չի տեսնուիր...: Կարելի է միայն զայն տեսնել «Տոգու աչքերով», ինչպէս կը հաւաստիացնէ ներկաներէն մին: Այստեղ է ուրեմն, այս

«սպիտակ համայնապատկերի» դիմաց, որ տեղի կ'ունենայ պատմուածքին խորագիրը կարծէք արդարացնելու կոչուած դէպքը, դիպուածը: Այդտեղ տեղի կ'ունենայ հայկական շուրջպար, զոր հեղինակը կը նկարագրէ իրեն յատուկ ոճաբանութեան շատ առինքնող, շատ ազդեցիկ բառերով: «Հայաստանի հայորդիներուն տարերային այդ պարը որպէս պահանջ մարմնի ու հոգու...»:

Այդպէս, այդ պարը, Արարատի ձինածածկ, սպիտակ այդ փէշերուն...: Բայց մէկ ալ յանկարծ, տեսնես արդէն Մասիս, Արարատ ու անոնց դիմաց աշխարհը ամբողջ գողի, սարսուռի մասնող հայորդիներու այդ կատաղի շուրջպարը ձգուած են մէկդի ու յանկարծ այդպէս իրենք իրենց վրայ օթումաթիփ կերպով դարձող ու մէկ ակնթարթի մէջ բոլորովին նոր տեսարան, բոլորովին նոր ու տարբեր բեմադրութիւն պարզող արդիական բեմերուն նման, ընթերցողը գրուած է նախորդին հետ նուազագոյն առնչութիւն մը իսկ չունեցող ներկայացման մը դիմաց: Արդէն հիմա ընթերցողը հրաւիրուած է զբաղելու փիլիսոփայական տեսութիւններով: Հրաւիրուած է խորհրդածելու մարդկային ողբերգութիւնէն ծնունդ առնող իրաւ, իսկական տառապանքը այդ միւս կեղծէն, կեանքի, մահուան ու տակաւին ամէն ինչի վախէն, սարսափէն առաջ եկող միւս կարծեցեալ, կեղծ տառապանքէն զանազանելու մասնաշատկութեանց մասին: Էջ մը անգին, անակնկալ, անսպասելի այդ նոյն շրջադարձութեամբ տեղափոխուած ենք Թաւրիզ (Պարսկաստան), հեղինակին ծննդավայրը եւ լեռնացած կարօտի մը տրտում շեշտերով մանուկ տարիքի ու պատանութեան քաղցր յուշեր կը վերակոչենք: Երկու էջի վրայ երկարող թաւրիզեան այդ յուշագրութեան կը յաջորդէ, նոյն այդ ինքնուրոյն սրբնթացութեամբ, գրականութիւն ընելու, գրելու արուեստին մասին թելադրութեան պէս, դասընթացքի պէս բան մը, ուր կարգ մը յանձնարարութեանց շարքին կը տեղեկանանք նաեւ հեղինակին գրելակերպի գաղտնիքներուն: «Որքան սեղմ այնքան լաւ... Ինձ մեղադրում եմ նուազագրութեան մէջ, սակայն այլ կերպ չգիտեմ... նուազը շատ է, իսկ շատը՝ անհանդուրժելի, - կ'ըսէ այդտեղ Կարապէնց, հաստատելու համար կարծէք սեղմ ու կտրուկ ու ժուժկալ իր ոճին մասին քիչ առաջուան մեր ունեցած ար-

տայայտութիւնները: «Համարձակութիւն է պէտք ասելու ճշգրիտ բառը, - կ'անկոյնէ ան, - ասելուց յետոյ կ'ազատագրուի թէ՛ գրողը, թէ՛ ընթերցողը...»:

Վերի նախադասութեան վերջին՝ ընթերցող բառին վերջակէտը հազիւ թէ գրուած, կ'անցնինք նոր տող եւ... «Օթօ նստանք գացինք Քեմք Հայաստան, Ֆրանսիան, Մասաչուսէթս...»: Եւ այդպէս, թելեփիզիոնի գործիքին դիմաց յիմնութ-քոնթրոլը ձեռքին նստած... անհամբեր այդ մէկուն նման, որ անդադար, իւրաքանչիւր մէկ ակնթարթի քանալ կը փոխէ, տեւաբար կոճակներուն հետ խաղալով, մենք ալ այստեղ, վերջակէտի մէկ հարուածով կը փոխադրուինք բոլորիս ծանօթ Պոսթընի Հայաստան Քեմքը, ուր Մայիսի 28ն է ու Հայաստանի անկախութեան տարեդարձը կը տօնուի: Ծառեր, այլեւայլ ելոյթներ, յետոյ դարձեալ, այստեղ ալ հայկական շուրջպար, բայց այս անգամ տարագիր հայորդիներով: Հոս ալ դարձեալ այդ հայկական պարերուն ոգեւորող կըշռոյթովը հազիւ ջերմացած ու տակաւին Հայաստան Քեմքին հռչակաւոր խորովածը չճաշակած, վերջակէտ մը, նոր տող մը եւ այս նոր տողը կը սկսինք Սարոյեանի ու իր գրականութեան մասին կարծիքներ, խորհրդածութիւններ լսելով: Տեղեկանալու համար, որ Սարոյեան իրականին մէջ բանաստեղծ մըն էր, ուրիշ բան ըլլալէ առաջ: Յետոյ դարձեալ նոյն սրբնթաց գնացքով վերջակէտ-նոր տող այդ ամէնուն կարծէք իբրեւ եզրակացութիւն, այդ ամէնը արժեւորելու կարծէք կոչուած պսակադրութիւն, անանուն հայ բանաստեղծուհիի մը կողմէ իբր թէ շարագրուած, զմայլելի, հոգեխոով մենախօսութիւն մը, ի մասին մեր ազգային ցաւերուն, մարդ ըլլալու ընդհանրական ոգբերգութեան, մարդ էակին ճակատին դրոշմուած դաժանութեան, դառնութեան ու տակաւին լինելութեան ասարեկող, ասարկու տազնապնեւրուն, տառապանքներուն...: Չմայլելի, շատ ուշագրաւ խորհրդածութիւն արդարեւ:

Եւ այդպէս, Երեւան, Թաւրիզ, Մասաչուսէթս, Քրնէթիքթթ, Նիւ Եորք, Լոս Անճելըս, Սան Ֆրանսիսքօ, Կլէնտէյլ, երկրագունտ մը ամբողջ երկիր անջրպետանալայն սրբնթացութեամբ պատմուածք կոչուող գրութեան մը էջերուն շրջագայելէ, նոյն սաստկագոյն արագութեամբ նիւթէ

նիւթ, միտքէ միտք, խորհրդածութենէ խորհրդածութիւն թռչկոտելէ ետք, ահա դարձեալ... վերջակէտ-նոր տող ու այս անգամ կը կարդանք. «Այսպէս էր կեանքը այդ օրերուն, մինչեւ որ յայտնուեց Մարգարիտը...»: Այս նոր տողին հետ ուրեմն հրապարակ կ'ելլեն Մարգարիտն ու... Մանուէլը եւ առաջին այս սկիզբէն «յայտնուելէ» ետք ա'լ չեն հեռանար բեմէն, կամ կը հեռանան՝ միշտ աւելի հիմնական ներկայութիւն մը, միշտ աւելի կարեւոր ու տպաւորիչ մուտք մը գործելու, աւելի ազդու գեր մը խաղալու համար: Իրենք են կարծէք ամբողջ գործին հիմը, առանցքը եւ թէ միւս բոլոր իրադարձութիւնները այդ առանցքին շուրջ դարձող, այդ առանցքը իմաստաւորող հարկատուներ, օժանդակներ են...: Իրաւ է, անուն կը փոխեն յաճախ, դիցարանական չաստուածներու կերպարանք կ'առնեն, Աստղիկ կ'ըլլան, Վահագն կը կոչուին, Ալմիրա, Նոկրամիս անուններով կը ներկայանան: Եւ եթէ երբեք չափազանցութիւններու զոհ երթալու վախը չունենալիք, պիտի դիւրաւ փորձուէի ըսել, որ այս հատորը իր ամբողջութեամբ, իր անունով ու մականունով նոյնինքն այդ Ալմիրային, Նոկրամիսին ու Մարգարիտին սիրոյն նուիրուած տեսակ մը ձօներգութիւն է...

Այս առաջին պատմութեամբ իրրեւ նըմոյշ չիշատակելէ, զայն առաւել կամ նուազ հարազատութեամբ ու կարելի հաւատարմութեամբ վերլուծելէ ետք, մնացեալ տասնչորսին առանձին-առանձին անդրադառնալու ու մանրամասն վերլուծելու փորձութիւնը պիտի չունենամ: Անկասկած որ միւս բոլորն ալ միեւնոյն ճարտարապետին կառուցողական ոճը կը կրեն, ինքնատրպութեան միեւնոյն կնիքը: Բոլորին մէջն ալ դէպք ու դրուագ ու գործողութիւն ու գործող անձինք օրովաթիֆ այսպէս դարձող բեմերու արագութեամբ եւ երբեմն ալ սիւսնս ֆիւսիոնի տպաւորութիւն ձգող հեքիաթային կերպարանափոխութիւններով կը յաջորդեն իրարու: Բոլոր պատմութեանքն ալ սակայն, իրրեւ կարծէք շարունակական, տրամաբանական յաջորդականութիւն, բընորոշիչ մէկ ու միեւնոյն դրոշմ մը կը կրեն: Բոլորին մէջ ալ, դիրքին ամբողջ երկայնքին տիրապետող միտքը, խորհուրդը կեանքի դաժան իրողութիւնն է, լինելութեան, մարդըլլալու ցաւը, կսկիծը: Հայ ըլլալու տառապանքը տակաւին: Հայ անհատին ու ժո-

ղովուրդին դիմազրուած արհաւիրքները: Ա'նքան՝ որ հեղինակը կը ստիպուի ինքզինքին հարց տալ. «...Ո՞րն է իրականը: Կեանքը, թէ առասպելը, երբ խորհուրդ գիտէր, որ պատասխան չկար...»: *Ու տակաւին ու, մա'նաւանդ՝ բոլոր էջերուն արձագանգող այդ տեսակ մը ողբի նման, տրտունջքի նման արձակուած ճիչը, չկարեւալ ամբողջովին ինքնզինք ըլլալու, չկարեւալ երբեք գտնելու յաւերժ խոստացուած, յաւերժօրէն բացակայ, անիրականանալի այդ բացարձակ, յաւիտենական Սէրը: Տուայտանքը մէկու մը, որ իր առանձին զուխը դժուար, շատ դժուար կրցած է պահել, որպէսզի օր մըն ալ յանկարծ, խաւարներուն մէջ պլպլացող լոյսի շողի մը նման, Մարգարիտ անուն եթերային էակի մը հանդիպելու բախտը ունենայ: Զինք հալածող, զինք տեսարար յօշոտող ներսի վայրագ դեւերը դուրսի դեւերը պարտութեան մատնող, ներսի իր խաւարները, դուրսի թանձր խաւարը մէկէն այդպէս փարատող, յաւերժօրէն իր որոնած Ալմիրաներուն, Նոկրամիսներուն յար եւ նման Մարգարիտին հանդիպելէ ետք ստիպուած ըլլալ թողու հեռանալ...*

Հոգեկան ու մտային այս իրավիճակները մարմնացնող գրութիւններէն մէկը կարելի է նկատի առնել «Մօրս անաւարտ օրագիրը» խորագրուած պատմութեամբ նախ: Մօրը մահէն վեց ամիս ետք իր ձեռքը հասած օրագրութեան մը ընթերցումին առընթեր, ինքնակենսագրական վերլուծումներու, տեսակ մը չապաղած օրագրութիւն պահելու կը մղուի նաեւ հեղինակը ինք: Մինչ մէկ կողմէ մայրը կը խօսի Ատրպատականի մէջ թուրք զինուորներու եւ այլ թուրք ու քիւրտ խուժանին կողմէ հայ բնակչութեան դէմ շղթայագերծուած խժգժութեանց, հալածանքներուն ու ջարդարարութեանց մասին, մէկ կողմէ՝ անչափահաս գաւակներու մայր այս հայ կինը իր ընտանիքին ու ողջ ժողովուրդին ողիսականը, օրհասական տառապանքները կը նկարագրէ պարզ ու ուսմիկ բառերով, իսկ ինք՝ հեղինակը, անասելի տրտմութեամբ ու թախիծով բեռնաւորուած՝ չորս տարեկան երեխայի, ապա նաեւ պատանեկան իր գոյութեան Թաւրիզի ու Թեհրանի փողոցներուն երկայնքին քաշկըւտած զրկուածութիւնը, որբութիւնը կը պատկերացնէ: Ինք՝ որ այդ օրերուն չէր կրցած գիտնալ, թէ հայրն ու մայրը բաժնուած են արդէն իրարմէ, որբութենէ շատ աւե-

լի ծանր ու ճնշող զրկումների մը, որբացումի մը վիճերուն մէջ գտած է ինքզինք դեռ այդ մատղաշ տարիքին: Ծնողքի կիզիչ, կոտորացող կարօտ ապրած է: Կարօտ՝ մահաւանդ մայրական գուրգուրանքի, գորովի: Ու տակաւին մանուկ, պատանի գացած-ինկած է առանձնութիւն, լքուածութիւն անունը կրող այդ հրէշաչին գոյականներուն ճիրաններուն մէջ: Այս ամբողջը ըսուած են այդ «Մօրս ամաւարտ օրագիրը» խորագրուած պատմուածքին մէջ, առանց սակայն աւելորդ չուզականութիւններու, առանց տրամաբիկական երեւնալու ճիգերու:

Ամբողջական, բացարձակ սիրոյ անկարելիութիւնը, անգտանելիութիւնը բացորոշող կտորներ են «Տիկիմ Յամիկ» եւ «Կամուրջը» պատմուածքները: Տիկին Յամիկներ, պարոն Գրիգորներ, Արամներ ու Նորաններ պիտի միշտ փնտռեն ու չգտնեն այդ սէր ըսուած... կապոյտ թռչունը: Իսկ եթէ գտան, գտնել կարծեցին, պիտի շուտով անդրադառնան, որ այդ ազնիւ, դիւթող, հմայող աննիւթական զգացումը հասարակ, գոհճիկ, ձանձրոյթ, պատճառող կերպարանքներ առած է, վերածուելու համար ի վերջոյ անկողինի, մահճակալի տաղտկացնող, գարշեցնող մարմնամարզի մը:

Մնացեալ բոլոր պատմուածքները կարելի է համարել, ինչպէս կ'ըսէի քիչ առաջ, բանաստեղծական գմայլիլի զեղումներ, գրուել-գործոցներ: Արդարեւ, Ալմիրաներուն, Նոկրամիսներուն, Մարգարիտներուն սիրոյն նուիրուած ձօներգութիւնը եւ ընդհանրապէս կեանքի ամբողջ դառնութիւնը, դաժանութիւնը, լինելութեան այդ ահարկու տաղնապնները, անդոհանքները ու տակաւին կեանքը ապրած ըլլալու, ուրիշ նմաններու հետ միեւնոյն օգը շնչած ըլլալու երջանկութիւնը, անոնց մասին գրսեւորուած փիլիսոփայական խորհրդածութիւնները իրենց զագաթնակէտը կը գտնեն «Տիվերթիմեթի», «Մի սիրոյ պատմութիւն», «Արեւադարձ», «Անեակ թիւ 482», «Անկատար» ու «Հոգեհամգիստ» խորագիրները կրող պատմուածքներուն մէջ:

Այս պատմուածքներուն գրեթէ բոլորը այդ Մարգարիտ ու Մանուէլ անուն առապելական արարածներուն միջեւ ծագած ամբողջական, բացարձակ, բայց անկարելի, անիրականանալի սիրոյն տեսակ մը ող-

բերգութիւնը, ողբասացութիւնն են նաեւ: Ողբերգութիւն մը սակայն, որ տեսնես յանկարծ հեքիաթագրութեան, եւ կամ աւելի ճիշդ՝ սիանս ֆիքսիոնի նկարագիր կը ստանայ: Ծածկագրութեան, քողարկութեան, Բամուֆլաժի, հետք ու հասցէ կորսնցնելու կարիքի մը կարծէք զոհացում կու տայ: Անուն, մականուն, ինքնութիւն փոխելու կարծէք պարտաւորութիւն: Այնպէս որ, մէկէն տեսնես ժամանակի ու տարածութեան սահմաններէն դուրս խոյացած, դուրս նետուած է ամէն անհատ, ամէն բան ու անիրական, անջրպետային գոյավիճակ ստացած: Անդրերկրային չես գիտեր ինչ մշուշներու ետեւէն ինկած, աննիւթական, ֆիքթիֆ գոյութեանց հետ այլեւս կարծէք գործ ունինք, այդպէս, մէկ էջէն միւսը: Կարծէք արդէն սկիզբէն իսկ այդպէս էր: Անիրական, աննիւթական էր սկիզբէն ամէն բան...

Գրական ստեղծագործութիւն մը, վէպ, վիպակ, պատմուածք թէ բանաստեղծական յօրինուածք, երկու տարբեր ահերէ կը ստանայ իր ծագումը: Այդ ահերէն մէկը երեւակայնութիւնն է, իսկ միւսը՝ անմիջական, իրական ապրուած կեանքը: Առաջինը այն գործն է, որուն նիւթը, կառուցը, գործող անձինքը մինչեւ չհատին դէպքերն ու գիպուածները յօրինուած ու կառուցուած են հեղինակին մտքին մէջ: Հեղինակին երեւակայնութեան յղացումն են: Իսկ երկրորդը ա՛յն՝ որ հեղինակը անձնապէս կամ այլոց կողմէ ապրուած, իրապէս պատահած դէպքեր, գիպուածներ կը զրականացնէ: Ապրըւած իրական կեանքը իբրեւ առաջ գործածելով իր աշխատանքին: Անկասկած որ երկու պարագաներուն ալ հեղինակը ինքն է, հեղինակին հարագատ անձը, իմացական, չուզական իր կարողականութիւններով ու նախասիրութիւններով, թերութիւններով ու առաւելութիւններով գործին հոգի ու շունչ տուողը, գործը կեանքի կոչողը: Այն միակ տարբերութեամբ, որ մինչ մէկը արուեստի ձեւին տակ կը վերարտադրէ իր ապրած կեանքը, իրեն պատահածները, իր ըրածները ունի իբրեւ օրինակ, ճիշդ այն նկարիչին պէս, որ կը ստեղծագործէ իր դիմաց զրուած մոտէլին համաձայն, այդ մոտէլը դիտելով, միւսը՝ կը գրէ իր փափաքած, բայց չկրցած ըրածը, իր չկրցած ապրածը, իրմէ խոյս տուած կեանքը: Ուրիշ խօսքով՝ մէկը իրականը, ապրուածը, պատահածը վերացականի, աննիւթականի փոխակերպողն է,

եթէ կարելի է այդպէս ըսել, իսկ միւսը՝ երեւակայականն ու վերացականը իրականութեան տարազներով ներկայացնողը, զանոնք իրականութեամբ այլափոխողը: Կասկածէ դուրս է, որ երկու պարագաներուն ալ ստեղծագործող ենթակային տաղանդը, տաղանդին որակը մա՛նաւանդ շատ գեր ունի խաղալիք: Կասկածէ դուրս է, որ երկու պարագաներուն ալ տաղանդին ներկայութիւնը ինքզինք շուտով կը յայտնէ... Այս երկուքէն ո՞ր մէկն է Կարապետը: Իրական, ապրուած կեանքէն իր նիւթերը քաղո՞ղը, թէ իր մտքին ու երեւակայութեան մէջ զանոնք յղացող, կեանքի կոչողը: Առաջինը, վստահաբար: Ապրուած կեանքէն, իրողութենէն դէպի երեւակայական, դէպի Ֆիքսիոն մեկնողը: Այսպէս թէ այնպէս, անոնցմէ է Կարապետը, այդ բոլորին մէջ բացառիկներէն, որոնք իրական կեանքը, ապրուած դէպքեր, եղելութիւններ երեւակայական ամէնէն փայլուն ու ամէնէն գրաւիչ տարազներով ներկայացնելու գաղտնիքին տէրն են: Որ չոր ու տափակ իրականութիւնները նոյնիսկ կապոյտ, պայծառ մշուշներով պարուրել գիտեն: Յամենայնդէպս, նեղը մնացողը չէ Յակոբ Կարապետը: Եթէ յանկարծ պէտք ըլլայ՝ Տեքիսթագրութիւն կ'ընէ, Տեքիսթներու հրատարակելու կը դիմէ: Գիտէ երկինքէն քանի մը խնձոր վար բերելու գաղտնիքը... մէկը պատմողին, միւսը լսողին, մնացածն ալ...

Եւ ուրեմն... Անկատար...

«Նա հարաւ գնաց, միւսը՝ հիւսիս: Միշտ այդպէս է լինում: Ամէն ո՞ր մի տեղ է գնում, երբեք չի վերադառնում: Եթէ վերադառնում է, չի ճանաչում իր տեղը: ...Հարաւը շիմէր, հիւսիսը շիմէր: Լիմէր միայն մէկ կէտ ու այդ կէտում մա լիմէր»:

Այդպէս ուրեմն, մէկը հարաւ գնաց, իսկ միւսը՝ հիւսիս: Հակոտնեայ երկու ուղղութիւններով բաժնուեցան իրարմէ՝ իրարմով միայն իրենց գոյութեան իմաստ մը գտնող երկու տրտում հոգիներ: Ժամանակներու ծնունդէն ի վեր իրարու համար կեանքի կոչուած, յաւիտեան մը ժամանակ զիրար տեւաբար փնտռող, իրարմով միայն ամբողջ մը դարձող, կատաղօրէն իրարու կարօտ երկու էակներ անջատուեցան իրարմէ հազիւ «միմեանց հպած»...: Որքան, որքան

լաւ կ'ըլլար, որ հարաւ ըլլար, հիւսիս ըլլար, որ հարաւներն ու հիւսիսները հալած, լուծուած, ձուլուած ըլլային մէկ ու միակ կէտի մէջ ու այդ կէտին մէջն ալ այլեւս ոչ մէկ տեղ երթալ չկրցող, այնքան փնտռուած, այնքան կենսական այդ լուսեղէն էակը ըլլար...

Բայց ահաւասիկ: Հիւսիսները կան, հարաւները կան ու կան տակաւին արեւելքներն ու արեւմուտքները իրենց բազում, բիւրատր մասնաբաժիններով: Այդ կողմերուն բոլորն ալ կան, եղած են ժամանակներու ծնունդէն ի վեր, կան ու կը մնան բաժնող, անջատող իրենց մոլուցքով: Կան տակաւին ժամանակ ըսուած միւս պատուհասին, այդ միւս ճիւղին սարքած դաւերը: Քեզ քու անձէդ նոյնիսկ խզող, անջատող, պէտք չեղած պահուն, պէտք չեղած տեղեր յանկարծ քեզ նետող, անյարմար պահու բոլորովին անյարմար անձեր քու դէմդ հանող այդ... ժամանակը: Յետոյ կան տակաւին, մարդկային ընկերութեան ճնշող, ճմլող այդ միւս պարտադրանքները...: Ոչ, ճար չկայ, հնար չկայ, պիտի բաժնուինք, պիտի խզուինք, անջատուինք ամէն վայրկեան, ամէն պահ: Բաժնուիլը, անջատուիլը եղած է, կայ սկիզբէն: Բաժնուելով մը կը սկսի կեանքը: Ձիւնք ծնողին պորտէն խզելով սկիզբ կ'առնէ ամէն կեանք: Այնպէս, որ առանց այդ բաժանման ո՛չ սկիզբ կայ, ոչ ալ կեանք: Եւ այլեւս կը բաժնուինք, մենք ամէնքս, կը բաժնուինք ամէն վայրկեան: Իւրաքանչիւր վայրկեան մեզմէ իւրաքանչիւրէն բան մը արդէն անջատուելու, բաժնուելու վրայ է: Իւրաքանչիւր վայրկեան, հազիւ կեանք առած՝ անցեալ է արդէն: Խզուած, գացած է մեզմէ անվերադարձ, առյաւելտ, իրեն հետ տանելով յաւերժութեան մեզի կտակած այդ մէկ հատիկ, այդ տակաւին չամբողջացած, այդ ԱՆԿԱՏԱՐ մասնիկը...: Եւ կը պակսինք, պիտի պակսինք յաւիտեան այդ կենսական մասնիկը: Պիտի պակսինք, պիտի մնանք Անկատար...

— Սիրուց առաւել սէրն էր սիրում, կ'ըսէ տեղ մը Կարապետնցին այդ Մանուէլը, ու տակաւին, - սիրելով հանդերձ պիտի չհասնէր սիրոյն, - կ'աւելցնէ ան: Այո՛, ճար չկայ, պիտի պակսինք ամէնքս եւ պիտի պակսինք ճիշդ այն ինչով, որմէ արդէն շատ ունինք: Սէր փնտռողին, սիրելով հանդերձ՝ սէր պիտի պակսի, մեծահարուստին, դրամի

դէզերը համրելով հանդերձ՝ յաւիտենարար դրամ պիտի պակսի: Ջուրերու մէջ չղփացած ծով ու ովկիանոսին վերջին կաթիլ մը ջուր պիտի պակսին եւ միլիոն մը բառ, միլիոններով խօսք գրելէ յետոյ, գրագէտներուն, բանաստեղծներուն բառ պիտի պակսի: Պիտի պակսին, պիտի պակսին յաւիտեան:

«Պու երբեք չիմացար բացարձակը: Չիմացար բացարձակը: Կարծեցիր, թէ խաղ է, այսպէս էլ կը լինի, այնպէս էլ կը լինի, երբ ասել էի, թէ բացարձակից այն կողմ ոչինչ կայ, որ բացարձակը է՝ կամ չէ՞»:

Այ՛ո: Արդարեւ: Ո՞վ կրցեր է բացարձակը հասկնալ, ո՞վ կրցեր է բացատրել, որ մենք յաւակնինք հասկնալ հիմա: Որ մենք փորձուինք բացատրել հիմա: Կարելորդ գիտնալն է, հասկնալն է: Կարելորդ այնպիսի բիւրեղացման մը աստիճաններուն բարձրանալն է, որ այլեւս կարենաս տեսնել, թէ կեանքը, կեանքին արժէքը, կեանքին գեղեցկութիւնը, ժամի, օրի, տարիի գումարումին,

բազմապատկումին ու կուտակման մէջ չէ: Կեանքի գեղեցկութիւնը, որքան կարելի է երկար ժամանակ այս հոգին վրայ գոյութիւն մը պահելը, քաջքէլը չէ: Կեանքին գեղեցկութիւնը անգամ մը գոնէ հողին ձայնը, տնքոցը կարենալ լսած ըլլալն է: Կեանքին գեղեցկութիւնը տիեզերք մը ամբողջ թախիժ, տիեզերքներուն ամբողջ ցաւը, կսկիծը, իրա՛ւ, իրական տառապանքները ու անոնց հետ լուսապայծառ հորիզոններուն տիեզերական ուրախութիւնը, հրճուանքն ու բերկրութիւնը վայրկեանի մը, երկվայրկեանի մը, վայրկեաններուն յետին, նո՛յնիսկ մէկ կտորակին մէջ կարենալ նշմարելու ու զանոնք ամբողջ հոգիիդ ու մտքիդ խորը ամփոփելու, խտացնելու իմաստութեան, բիւրեղացումին տէր կարենալ եղած ըլլալն է...


Կարգացէք Կարապէնցի «Անկատար» խորագրուած հատորը, որպէսզի կարենաք հաղորդուիլ կեանքի այդ գեղեցկութիւններուն հետ:

ԺԻՐԱՅԻ ԱԹԹԱՐԵԱՆ

Նիւ Եորք

Ռ. ԻՇԽԱՆԵԱՆ

ՖՐԱՆՍԻԱՑԻ ԱՆՈՒԱՆԻ ՀԱՅԱԳԵՏՏԸ



11 Մայիս 1991ին, Փարիզի մէջ, 83 տարեկան հասակին, իր մահկանացուն կնքեց Փրանսացի նշանաւոր հայագէտ եւ հայ ժողովուրդի մեծ բարեկամ փրոֆեսէօր Ֆրետերիք Ֆէյտի:

1798ին, զօրավար Նափոլիոնի յայտարարութեամբ հիմնուած Արիւելեան Լեզուներու Դպրոցի հայկական ամպիոնի ութերորդ տիտղոսակիրը հանդիսացող Ֆրետերիք Ֆէյտին 1949ին յաջորդեց ժորժ սը Մեզիլի եւ վերոնշեալ ամպիոնի տնօրէնութիւնը վարեց մինչեւ 1977:

Հայ լեզուի եւ բարբառներու ուսումնասիրութեան, հայկական դիցարանութեան եւ մշակոյթի բազմաթիւ հարցերու լուսարանման մէջ մեծ վաստակ մը կտակած փրոֆ. Ֆրետերիք Ֆէյտիի աշակերտած են Լեւոնական եւ ամերիկեան բազմաթիւ համալսարաններու դասախօսներ, ինչպէս՝ Յիսուսեան միաբանութեան ներկայ պետը՝ Հայր Քոլվէնպախ եւ Բարձրագոյն Ուսմանց Գործնական Դպրոցի ուսումնական վարիչ Ժան-Փիէռ Մահէ:

Մեծանուն հայագէտին մահուան առիթով, ստորեւ ընթերցողին ուշազրութեան կը յանձնենք փրոֆ. Ռաֆայէլ Իշխանեանի «Ֆրանսիացի անուանի հայագէտը» խորագրեայ յօդուածը, զայն քաղելով «Սովետական Հաստատան» ամսագրի 1969ի առաջին թիւէն:

Փրանսիացի ամենանշանաւոր հայագէտներից կարելի է յիշատակել Մատիւրէն դը Լաբորդոն, Գուլիելմ Վիֆրուային, Լը Վայան դը Ճլորիվային, Էդուարդ Դիւլորիէն, Ավգուստ Կարիերին, Վիկտոր Լանգլուային, Գուստաւ Շրուամպֆին, Անտուան Մէյէին, Ֆրեդերիկ Մակլերին: Ահա այս հայագէտները—

րից է նաեւ Ֆրեդերիկ Ֆէյդին՝ Փրանսիական հայազիտութեան ամենալուաւանդների ժամանակակից պահպանողն ու զարգացնողը:

Ուսուցչապետ Ֆրեդերիկ Ֆէյդին ծնուել է Փարիզում, 1908 թուականին: Մանկուց հետաքրքրուել է արեւելեան լեզուներով, այդ թւում՝ հայերէնով: Վերսալում միջնակարգ կրթութիւնն ստանալուց յետոյ՝ նա սկսել է լրջօրէն հետաքրքրուել հայերի անցեալով եւ լեզուով: Հետաքրքրութիւնների մղումով էլ ընդունուել է Արեւելեան կենդանի լեզուների ազգային ճեմարանը, Փարիզում: Ֆր. Ֆէյդիի հայազիտութեան առաջին ուսուցիչը եղել է վաստակաշատ Ֆր. Մակլերը, որի ուշադրութիւնից շէն վրիպում իր քսաներեքամեայ ուսանողի ընդունակութիւնները եւ սէրը հայազիտական առարկաների նկատմամբ: Ճեմարանի դասընթացները (1931–1933 թթ.) Ֆր. Ֆէյդիին հիմնաւոր գիտելիքներ են տալիս հայոց լեզուից ու մատենագրութիւնից, նրա առջև բացում հայ բանասիրութեան հետաքրքրաշատ ասպարէզը:

Իր ուսումնառութեան ժամանակ Ֆր. Ֆէյդին Փրանսերէնի գասեր էր տալիս Փարիզի Սամուէլ Մուրադեան դպրոցում, մի հանգամանք, որ օգնում է հայազիտութեան ապագայ ուսուցչապետին վարժուելու կենդանի հայերէնում:

1933–1936 թուականներին Ֆր. Ֆէյդին Փրանսերէն է գասուանդում Վենետիկի Մուրատ–Ռափայէլեան նշանաւոր դպրոցում, որը նրան աւելի է օգնում զարգացնելու իր հմտութիւնները հայերէնի բնագաւառում: Նա այնքան է տիրապետում կենդանի հայերէնին, որ Փարիզում մի շարք զեկուցումներ է կարգում արդէն հայերէն: Այդ զեկուցումներից մէկը, որ նուիրւած է Կիլիկիայի մատենագիր Հեթում պատմիչի մի երկին («Ճաղիկ պատմութեանց աշխարհին»), հրատարակում է Արշակ Զօպանեանի «Անահիտ» հանդէսում (1938 թ.):

Նախքան այդ, 1935 թուականին, Վենետիկում Ֆր. Ֆէյդին հրատարակել էր «Ժամանակակից հայոց լեզուի (արեւմտեան տարբերակի) քերականութիւն»ը, Փրանսերէն լեզուով: Դա ձեռնարկ էր Փրանսերէնի միջոցով հայերէն սովորեցնելու համար: Այդ աշխատութիւնը ամբողջովին վերամշակւած եւ հարստացուած վերահրատարակուեց Փարիզում, 1948 թուականին, «Հայոց լեզուի» (ժամանակակից արեւմտահայերէնի) ձեռնարկ» վերնագրով:

Սա արդէն հայոց լեզուն այլազգիներին, ինչպէս եւ օտարախօս հայերին ուսուցանելու մի շատ արժէքաւոր դասագիրք է: Գրքում տրուած են նաեւ ծանօթութիւններ հայոց լեզուի պատմութեան եւ նրա ներկայ վիճակի որոշ առանձնայատկութիւնների մասին:

Ֆրեդերիկ Ֆէյդին սովորել է նաեւ Սորբոնի համալսարանում (աւարտել է 1940ին), բայց այդ ժամանակ նա արդէն ճանաչցուած հայազէտ էր: 1937ին ընտրուել էր Վենետիկի Միսիթարեան կաճառի անդամ:

1949 թուականին նա Արեւելեան կենդանի լեզուների ճեմարանի հայազիտութեան ամբիոնի ուսուցչապետ էր: Նոյն թուականին էլ ստանձնում է այդ ամբիոնի վարիչի պարտականութիւնը, որը եւ վարում է մինչեւ այժմ: Այս պաշտօնում հայազիտութեան եռանդուն ուսուցչապետը մանկավարժական գործունէութիւնը միշտ զուգակցել է հետազօտական աշխատանքի հետ. նա շարունակել է ուսումնասիրել հայոց լեզուն իր բոլոր արտայայտութիւններով՝ զրարարը, հայ նոր դրական լեզուն՝ իր արեւելեան եւ արեւմտեան ճիւղով, բարբառները:

1962 եւ 63 թուականներին Մեսրոպ Մաշտոցի ծննդեան 1600ամեակի տօնակատարութեան առիթով Վիեննայի «Հանդէս ամսօրեայ»-ում տպագրուում էին Ֆրեդերիկ Ֆէյզլի յօդուածները Հայ մեծագոյն լուսաւորչի կեանքի ու գործունէութեան մասին: Այդ ուսումնասիրութիւններում հեղինակը ի յայտ է բերում ո՛չ միայն իր քաջատեղեակութիւնը Հայ գրերի դիւար բնագաւառում, այլեւ՝ Ծրդ դարի սկզբում Հայաստանում կատարուած իրազարձութիւնների ներքին քաղաքական շարժառիթները ճիշտ գնահատելու կարողութիւն: Մասնաւորապէս ճիշտ է գնահատուած գրերի գիւտի ազգապահպանման կենտրոնածիւղ նշանակութիւնը, Մաշտոցի հանճարի քաղաքական հեռատեսութիւնը, նրա գործունէութեան նշանակութիւնը հետագայ դարերում:

Ուշագրաւ են նաեւ Ֆրեդերիկ Ֆէյզլի աշխատութիւնները Հայ գեղարուեստական գրականութեան եւ ժողովրդական բանահիւսութեան թեմաներով: Յատկապէս նշելի է նրա «Հայ ժողովրդական դիւցազնավէպը» ուսումնասիրութիւնը, որը 1957 թուականին շարունակաբար տպագրուեց «Բազմավէպ»ի մի քանի համարներում: Հեղինակը առանձնապէս նշում է «Սասունցի Դաւիթ»ի խաղաղասիրական, մարդասիրական ներքին ոգին, որը իրօք մեր դիւցազնավէպի ամենակարեւոր տարրերից առանձնայայտկութիւնն է եւ արժանիքը:

Ֆէյզլին ՄԱԿի ընկերային-մշակութային կազմակերպութեան (ԵՈՒՆԵՍԿՈՅԻ) յանձնարարութեամբ ձեռնարկում է «Սասունցի Դաւիթ»ի թարգմանութեանը Ֆրանսերէն: 1964 թուականին Փարիզում այն լոյս տեսաւ Հ. Օրբելու առաջաբանով եւ թարգմանչի ներածութեամբ: Դա անշուշտ շատ մեծ ծառայութիւն էր Հայ մշակութային զանձերը համաշխարհային ասպարէզ հանելու, այլազգիներին ծանօթացնելու գործում:

Հայ նոր գրականութեանից ականաւոր հայագէտին ամէնից աւելի գրադէցրել են Յակոբ Պարոնեանը եւ Երուանդ Օտեանը, որոնց ստեղծագործութիւնների վերլուծութեանն ու գնահատականին են նուիրուած նրա «Տետրերի հայ գրականութեան» շարքը:

Հայագիտութեանը Ֆր. Ֆէյզլի մատուցած կարեւոր ծառայութիւններից է նաեւ այն, որ վերջին ժամանակների արեւելագիտական համաժողովներում նա է հիմնականում ներկայացրել Հայագիտութիւնը: Այսպէս, 1954 թուականին Գիմբրիջում կայացած արեւելագիտական համաժողովում մեծ հետաքրքրութեամբ լսուեց նրա զեկուցումը՝ նուիրուած Հայոց լեզուի արտայայտչական կարողութիւններին: Զեկուցման համառօտումը հրատարակուեց անգլերէն: 1957 թուականին Միւնխենում կայացած արեւելագիտական համաժողովում Ֆր. Ֆէյզլին հանդէս եկաւ Փաւստոս Բուզանդի «Հայոց պատմութեան» մէջ իր առաջարկած ճշտումներին վերաբերող զեկուցմամբ:

60ական թուականների սկզբներին գիտնականները նորից սկսեցին խօսել մի միջազգային գիտական լեզուի անհրաժեշտութեան մասին, քանի որ արհեստական լեզուները (էսպերանտօ, վոլապուկ, եւայլն) շատ փոքր տարածում ստացան, «մեռած» լեզուները (լատիներէն, հին յունարէն) չվերակենդանացան, լայն օգտագործման չզրուեցին: Եւ ահա, Ֆրեդերիկ Ֆէյզլին մի յայտարարութիւն արեց, ուր նա մի շարք փաստարկներ բերելով, գտնում էր, որ իբրեւ միջազգային գիտական լեզու ամէնից յարմար է գործածել Հայերէնը: Հայերէնի հարուստ բառապանծը, բառաստեղծական անսահման կարողութիւնները, արտայայտման ճշգրտութիւնը (երկդիմութեան բացակայութիւնը) Փրանսիացի ուսուցչապետի կարծիքով Հայոց լեզուն գարձնում են

միջազգային գիտական լեզու լինելու լաւագոյն թեկնածու: Գիտնականի կարծիքը տպագրուեց արտասահմանեան մի շարք լրագրերում: Հետագայում նա մի քանի անգամ էլ պաշտպանեց իր այդ կարծիքը, սակայն միշտ աւելացնելով, որ դա այնպիսի մի տեսակէտ է, որը իրականացնելու համար չկան անհրաժեշտ պայմաններ, եւ որ միջազգային գիտական աշխարհում քչերը գիտեն հայերէն, ուստի եւ հայերէնի հարստութիւններն ու կարողութիւնները շատերին չէ, որ յայտնի են:

1965 թուականին Հայոց Մեծ Եղեռնի յիսնամեակի կապակցութեամբ Փարիզի Ֆրանսիական «Մոնդ» յայտնի լրագրում տպագրուեց Ֆրեդերիկ Ֆէյդիի մի ծաւալուն յօդուածը, որը յետոյ արտատպուեց նաեւ այլ թերթերի մէջ: Յօդուածում ակնաւոր գիտնականը գրում է իթթիհատի ցեղաջինջ քաղաքականութեան ահաւոր քստմնելիութեան մասին եւ աւելացնում, որ «այս աւանդներուն Հիթլեր եղաւ սոսկ աշակերտ մը»: Պրն. Ֆր. Ֆէյդին անկեղծ յուզմունքով է խօսում Եղեռնի դժոխային օրերին հարիւր հազարաւոր հայերի կրած անլուր տառապանքների, բազմահազար անմեղ գոհերի մասին. «Աւա՛ղ, անկարելի է յուշի այս հանդիսութիւններուն մասին խօսել առանց ակնարկելու այս վայրագութիւնները», — բացականչում է նա: Վրդովմունք կայ նրա այն խօսքերում, որոնք վերաբերում են հայութեան մեծագոյն ողբերգութեան նկատմամբ մեծ տէրութիւնների անտարբերութեանը:

Յօդուածում Ֆրանսիացի ընթերցողին հակիրճ ծանօթութիւն է տրուում հայ ժողովրդի պատմութեան ու մշակոյթի վերաբերեալ: Տրուում են հայ գրականութեան, ճարտարապետութեան, երաժշտութեան, նկարչութեան ու քանդակագործութեան մասին կարեւորագոյն տեղեկանքներ: Հեղինակը ջերմութեամբ է խօսում փոքր ժողովրդի ստեղծած մեծ մշակոյթի մասին, ցաւով յիշում նրա կորուստները. «1915ի Եղեռնի գոհերուն մէջ կը գտնուին երկու բանաստեղծներ՝ Սիւսանթօ եւ մանաւանդ Վարուժան, որոնք արժանի են դասաւորուելու 20րդ դարուն սկզբին աշխարհառշակ ամենամեծ բանաստեղծներուն կարգին», գրում է հեղինակը:

Վաստակաշատ հայագէտը եւ հայ ժողովրդի մեծ բարեկամը երկու անգամ (1963 եւ 1968 թթ.) եղել է Հայաստանում, մօտիկից ծանօթացել ժողովրդի կեանքին, մասնակցել գիտական նիստերի ու քննարկումների, զրուցել բազմաթիւ հայ գիտնականների հետ, զեկուցումներ կարգացել:

Երեւանում լսելով Զուխաջեանի «Արշակ երկրորդ»ը, Ֆէյդին ասել է. «Ասիկա հայկական հրաշալիքներէն մէկը կը դիտեմ: «Արշակ երկրորդ»ը ձեր բարոյականին դատն է, ձեր իրաւունքը, որ պետականութիւն չունեցող ատենն ալ մնացած էք կազմակերպուած ազգ եւ միշտ պաշտպանած էք ձեր ազգային նկարագիրն ու ոգին: Ես կը դիմեմ բոլոր հայ երաժշտագէտներուն, որ խորհին կերպ մը «Արշակ երկրորդ»ը համաշխարհային բեմին վրայ հանելու: Ան իսկական գիւտ մը կ'ըլլայ համաշխարհային երաժշտութեան մէջ»:


Հայաստանի գիտութիւնների կաճառում Ֆր. Ֆէյդիի վերջին զեկուցումը նուիրուած էր հայերէնի յօդերին եւ հնչիւնաբանութեան որոշ խնդիրներին: Սակայն ունկնդիրներին արուած հարցերի շնորհիւ խօսակցութեան շրջանակները լայնացան եւ գիտնականը նորից շարադրեց իր տեսակէտները հայոց լեզուի կարողութիւնների վերաբերեալ: Նա ասաց, որ հայերէնը նորագոյն գիտութեան լեզու լինելու համար ունի այնպիսի արժանիքներ, որպիսիք

երբեմն պակասում են վաղուց ի վեր գիտութեանը սպասարկող ամենաառաջնակտրդ լեզուներում. այդ թւում՝ անգլերէնում եւ Փրանսերէնում:

Ֆրեդերիկ Ֆէյզիի գեկուցումները լսելիս, հայերէն գրած նրա յօդուածները կարգալիս, ինչպէս եւ նրա հետ գրուցելիս չի կարելի նաեւ ուշադրութիւն չդարձնել գիտնականի գործածած մաքուր հայերէնի վրայ. հնարտւոր չէ նրա խօսքում գտնել անհարկի օտարաբանութիւններ: Դա, թւում է, ամէն բանի հետ նաեւ հայոց լեզուի նկատմամբ գիտնականի ունեցած հոգատարութեան եւ սիրոյ մի արտայայտութիւնն է:

Յիշելով Սայաթ-Նովայի յայտնի խօսքերը՝ «Սէրը սէր կու բերէ», կարող ենք ասել, որ հայ ժողովրդի, մեր լեզուի ու մշակոյթի նկատմամբ Ֆրեդերիկ Ֆէյզիի ունեցած անկաշառ սէրը, պատկառանքը հայութեան մէջ էլ նրա նկատմամբ առաջացրել են հարազատութեան զգացում, փոխադարձ ջերմ սէր եւ բարձր գնահատում:

ՌԱՖԱՅԷԼ ԻՇԽԱՆԵԱՆ



«ԲԱՑՕԹԵԱՅ ՇԻՐԻՄՆԵՐՈՒ ԵՐԿԻՐԸ»

Դերասան ու բեմագրիչ Արա Մաժուճեան, 1990ի աշնան, աւարտած է նկարահանումը «Բացօթեայ շիրիմներու երկիրը» խորագրեալ վաւերագրական ժապաւէնին, իրբեւ գործակից ու նենալով վաւերագրական ժապաւէններու մասնագէտ չեխ նկարահան Փաւել Սթինկըլ:

1915ի Մեծ Եղեռնէն մինչեւ ստալինեան մաքրագործումներ, Սոււմկայիթի փոկրոմ, վերապրողներու ողիսական եւ Հայաստանի սահմանները արեան մկրտութեամբ պաշտպանող մերօրեայ Ֆետայիներ երկարող այս ժապաւէնին նկարահանումը տեսած է երեք շաբաթ: Հայաստանի մէջ նկարահանուած հարցազրոյցներու եւ դրուագներու համալըման աշխատանքը (մոնթաժ) կատարուած է Փրակայի մէջ՝ չեխ մասնագէտներու ամբողջական գործակցութեամբ:

Ժապաւէնի ծնունդին եւ շարժապատկերի չեխ մասնագէտներու հետ ունեցած իր փորձառութեան մասին խօսելով՝ Արա Մաժուճեան կը յայտնէ, թէ Բաքուի արիւնալի ծանօթ դէպքերէն ետք, Փաւել Սթինկըլի հետ ծրագրած է պատրաստել վաւերագրական այս ժապաւէնը՝ իրբեւ հիմ ունենալով Բաքուի եւ Սոււմկայիթի կոտորածներուն ունեցած անդրադարձը Հայ ժողովուրդին վրայ, դիտուած՝ 1915ի Յեղասպանութեան, 1988ի աղէտալի երկրաշարժին եւ Հայաստանի ներկայ ճգնաժամին հոգեբանական ազդեցութեանց դիտանկիւնէն:

«Բացօթեայ շիրիմներու երկիրը» ժապաւէնին մէջ ներկայացուած են հարցազրոյցներ՝ ստալինեան դժոխքէն, Սոււմկայիթի եւ Բաքուի կոտորածներէն եւ երկրաշարժէն վերապրած հայորդիներու, ինչպէս նաեւ՝ Հայաստան ապրող գիւղացիներու, Ֆետայիներու եւ քաղաքական գործիչներու հետ: Ժապաւէնին մէջ նաեւ տեղ գտած են արխիւային նկարներ՝ ազերիներու կողմէ գործադրուած փողորմներէն, ինչպէս նաեւ տեսարաններ՝ Հայ ազատամարտիկներու մղած կենաց-մահու կոիւներէն:

Ձեխուսլովաքիոյ պետական պատկերասփիւռին հետ համագործակցաբար պատրաստուած այս ժապաւէնին միջազգային տարողութեամբ առաջին ներկայացումը կատարուած է Փրակայի պատկերասփիւռէն: Ապա, Արա Մաժուճեան աւարտած է անգլերէնի թարգմանութեան աշխատանքները, որպէսզի օտարները աւելի մօտէն ծանօթանան Հայաստանի այժմու կացութեան եւ Հայ ժողովուրդի մղած դոյապայքարին, քաղաքական դժուարին ծանօթ պայմաններուն մէջ:

Պատկերասփիւռի աշխարհի պատասխանատուներու ցուցաբերած հետաքրքրութեան մասին անդրադառնալով, Արա Մաժուճեան կ'ըսէ. «Եւրոպացիները, ամերիկացիներն ու ճապոնցիները մեծ հետաքրքրութիւն ցոյց տուին, ի տես անոնք թեքնիք որակիւ եւ գեղեցիկ նկարահանումին, գոր իրականացուցուց շարժապատկերի նկարահան Մարքիս Քուպալա»:

ՄԵԾԱՐԱՆՔ՝ ԼՈՒԴՎԻԳ ԲԱԶԻԼԻ

Շաբաթ, 29 Յունիս 1991ի երեկոյեան, Լուդվիգ Բազիլի յիշատակին նուիրուած համերգով մը կատարուած է բացման հանդիսութիւնը Մուրատ Թափայէլեան վարժարանի հիմնովին վերանորոգուած «Լոճիս տէլ Թեմանցա» երկայրկանի շէնքին:

«Ազելօ մուզիքա - Վենեթօ մուզիքա» հաստատութեան աջակցութեամբ կազմակերպուած այս համերգին իրենց մասնակցութիւնը բերած են Թրեւիզոյի լարային քառեակը եւ Միւնիխ բնակող անուանի թաւջութակահարուհի Իրմինգարտ Սիմա, որոնք մեծ յաջողութեամբ մեկնաբանած են Լ. Բազիլի երրորդ (1977) եւ Զիլինկիերեանի քառեակին ձօնուած վեցերորդ (1987) քառեակները: Ի. Սիմա թաւջութակով մեկնաբանած է նաեւ Լ. Բազիլի «Իմմառիսի» (1980) անուն բաւական դժուարին ստեղծագործութիւնը:

Համերգի աւարտին, խօսք առած է Միխայիլ Բաբայանի միաբանութեան մեծաւորը՝ Հ. Ներսէս վրդ. Տէր Ներսէսեան, որ մեծ գնահատանքով անդրադարձած է բարեբարին եւ Լ. Բազիլի անձերուն եւ գործին:

ՀԱՅԿԱԿԱՆ ԽԱԶՔԱՐ ՄԸ՝ ՎԻԵՆՆԱՅԻ ՄԷՁ

Վիեննայի Ս. Անտոնիոս տաճարի հրապարակին վրայ զետեղուած է հայրենի քանդակագործ Վաչէ Պետրոսեանի մտայղացման արգիւնքը հանդիսացող տպաւորիչ խաչքար մը՝ իբրեւ երախտագիտութիւն երկրաշարժէն տուժած Հայաստանին օգնութիւն ցուցաբերած աւարիացի ժողովուրդին: Մխիթարեան միաբանութեան հայրերու կողմէ կատարուած օրհնութեան եւ օժման արարողութեան ներկայ գտնուած են կրօնական, դիւանագիտական եւ միութենական ներկայացուցիչներ եւ լրագրողներ:

«Հայաստանի Հանրապետութիւն» օրաթերթին մէջ հրատարակուած թղթակցութենէն կ'իմանանք, որ այս խաչքարի իրականացման մէջ մեծ դեր խաղացած է վիեննացի մտաւորական Հերպրթ Մաուէր, որուն մասին խօսելով քանդակագործ Վաչէ Պետրոսեան կու տայ հետեւեալ տեղեկութիւնները. «Նա հայոց պատմութեան ու գրականութեան գիտակ է: Վերջեքս աւարտել եւ հրատարակութեան է պատրաստել Գրիգոր Նարեկացու «Մատան ողբերգութեան» պոեմի գերմաներէն ամբողջական թարգմանութիւնը»:

Ինչ կը վերաբերի 3.42 մեթր բարձրութիւն ունեցող խաչքարին, անոր վրայ քանդակուած է հայ մանուկ մը՝ մէկ ձեռքին հայկական եկեղեցւոյ մը պատկերը, իսկ միւսին՝ կեանքի խորհրդանիշ ձիթենիի ճիւղը:

«ՆԱԽԻՉԵՒԱՆԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՅՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ»՝ ԱՆԳԼԵՐԷՆՈՎ

Վերջերս, Մ. Նահանգներու մէջ, անգլերէնով լոյս տեսաւ հայկական ճարտարապետական կոթողներու ուսումնասիրման մէջ յարգելի անուն մը զարձած Արզամ Այվազեանի «Նախիջեւանի պատմական յուշարձանները» աշխատութիւնը, նախաձեռնութեամբ Հ.Բ.Ը.Մ.Ի «Ալեք Մանուկեան» մշակութային հիմնադրամի:

Նախիջեւանի պատմութեան, մշակութային արժէքներուն եւ գանձերուն մասին մասնագիտական բազմաթիւ յօդուածներ, աշխատութիւններ եւ հատորներ ստորագրած հայ-

րենի մտաւորականին «Նախիջեւանի պատմական յուշարձանները» գործը անգլերէնի թարգմանած է լեզուարան եւ թարգմանիչ Գրիգոր Մաքսուտեան:

Հայագիտութեան եւ յատկապէս հայկական ճարտարապետութեան պատմութեան հոլովայթով հետաքրքրուողներուն համար յատուկ կարեւորութիւն ներկայացնող այս հատորը նախապէս՝ 1981ին, լոյս աեսած է նաև ռուսերէնով: Արզամ Այվազեանի ստորագրութեամբ հրատարակուած են «Ագուլիս» (1984), «Ջուղա» (հայերէն՝ 1984, անգլերէն եւ ռուսերէն՝ 1990), «Նախիջեւանի հայկական յուշարձանները. համահաւաք ցուցակ» (1986) եւ «Նախիջեւանի կոթողային յուշարձաններն ու պատկերաքանդակները» (1987) խորագրեալ պակերագրող աշխատութիւնները:

ԱՆԱՀԻՏ ՄԵԻԹԱՐԵԱՆ Կ'ԱՐԺԱՆԱՆԱՅ ՍՊԱՆԻՈՅ «ԿՐԱՆ ՓՐԻ»ԻՆ

Սպանիոյ Պարչելոնա քաղաքի «Կրանտ» օփերային մէջ, վերջերս տեղի ունեցած է Ֆրանչիսկօ Վինեասի անուան միջազգային 28րդ մրցոյթը, որուն մասնակցած են 35 երկիրներ ներկայացնող օփերայի շուրջ 300 երգիչ-երգչուհիներ:

Անձնական նախաձեռնութեամբ եւ իբրեւ Հայաստանի Հանրապետութեան ներկայացուցիչ այս միջազգային մրցոյթին մասնակցած հայրենի դեռատի երգչուհին առաջին անգամ մեկնաբանած է Կոմիտասի «Անտառնի»ն, ապա՝ համաշխարհային հռչակ վայելող օփերաներէն քաղուած արիաներ:

Առաջին իսկ վայրկեանէն, հայրենի երիտասարդ երգչուհին ներկաներն ու 26 մասնագէտներէ կազմուած դատակազմը հմայած է իր «Լիբիկա-կոլորատուրային սուպրանոյով», այսինքն՝ քնարական գունեղ ձայնով: Խստապահանջ գատակազմը, որուն մաս կազմած են օփերային թատրոններու տնօրէններ եւ աշխարհահռչակ կատարողներ, մրցոյթի առաջին մրցանակը միաձայնութեամբ շնորհած է երկարատեւ ծափահարութիւններու արժանացած Անահիտ Մխիթարեանին, որ նաև տիրացած է Գաթալոնիոյ կառավարութեան յատուկ պարգևին:

ՀԱՅԿԱԿԱՆ ԴՐԱՄՆԵՐՈՒ ՑՈՒՑԱԴՐՈՒԹԻՒՆ

Անթիլիասի կաթողիկոսարանի «Կիւլպէնկեան» սրահին մէջ, Յունիս ամսուան ընթացքին տեղի ունեցաւ Արտաշիսեան եւ Կիլիկեան թագաւորութեանց մետաղադրամներու ցուցադրութիւն մը, նախաձեռնութեամբ՝ Երուանդ Ապաճեանի, որ հիմնադիրն է Լիրանանեան եւ Հայկական Հնագիտական Միութեան:

Ցուցադրուած դրամներու շարքին էին Տիգրան Ա-ի, Տիգրան Բ-ի, Կոստանդին Ա-ի պղինձէ դրամները, ինչպէս նաեւ՝ Լեւոն Բ. թագաւորի արծաթէ աղօթատուփը (հմայեակ)՝ իր շղթայով: Ցուցադրուած նմոշներու կողքին գետեղուած էին մետաղադրամներուն մեծցուած լուսանկարները:

ԱՆԳԼԻՈՑ ԱՐՔԱՅԱԿԱՆ ՀԱԻԱՔԱԾՈՆ

Էլիզապէթ Թագուհին յատուկ թոյլատրուութեամբ՝ անգլիական պատկերասփիւռի «Չենըլ 4» անկախ կայանը սկսած է պատրաստել վեց յայտագիրներէ բաղկացած պատկերասփիւռի շարք մը՝ Հանրութեան ցուցադրելու համար բրիտանական թագաւորութեան արուեստի գործերու յատուկ հաւաքածոն:

Բրիտանական եւ ճափոնական նախաձեռնութեամբ պատրաստուած այս շարքը հանրութեան սեփականութիւնը պիտի դարձնէ բազմաձաբիւր անձանց զգաստաներ: Պիտի ցուցադրուին թագաւորական ընտանիքի անդամներուն դիմանկարները եւ թագաւորական ընտանիքի անդամներուն հետ սիրային յարաբերութիւններ ունեցած կիներու դիմանկարներ եւ աւելի համարձակ պաստառներ:

Թագուհին արուեստի գործերուն ընդհանուր պատասխանատուն յայտնած է, որ 7000 պաստառ հաշուող հաւաքածոյին մեծամասնութիւնը կը ցուցնէ արքայական ընտանիքին մտերմիկ պահերը: Այս գեղանկարներուն շարքին է սիրահարուած վիճակով պատկերուած Վիքթորիա թագուհին դիմանկարը: Վեհաշուք եւ ժուժկալ թագուհի մը նկատուած Վիքթորիան, այլ պատաստի մը մէջ, կ'երեւի արձակ մազերով եւ փարթիւմ հագուստով, իսկ երկրորդ գործի մը մէջ՝ իր նորածին մանչըր դիեցնելու վիճակով:

Յայտագիրին պատրաստութեան համար (որուն նկարահանումը պիտի արժէ շուրջ երկու միլիոն տոլար), լուսանկարիչները չըջած են արքայական 6 տուներ եւ նկարահանած՝ Ռամպրանտի, Ռիւպէնսի, Թիթիանի, Ռէյնոլտի եւ Կէյնզպորոյի նման աշխարհահռչակ գեղանկարիչներու բազմաձաբիւր գործեր:

Խ. ՄԻՈՒԹԻՒՆ – ԳԵՐՄԱՆԻԱ ԱՐՈՒԵՍՏԻ ԳՈՐԾԵՐՈՒ ՓՈԽԱՆԱԿՈՒՄ

Պոննի արտաքին գործոց նախարարութիւնը Մայիս ամսուան ընթացքին յայտարարած է, որ Գերմանիա եւ Խորհրդային Միութիւն պատրաստ են բանակցելու՝ Բ. Ալլաքահամարտի ընթացքին իրարմէ խլած արուեստի գործերու վերադարձին շուրջ:

Անցեալ Նոյեմբերին, Պոննի մէջ Միխայիլ Գորբաչով եւ Հելմութ Քոհլ ստորագրեցին բարեկամութեան 20 տարուան պատմական դաշնագիր մը, որուն մէջ յիշատակուած է նաեւ արուեստի գործերու վերադարձին հարցը:

Նիւ Եորքի մէջ տպուող արուեստի յատուկ շարաթաթերթ մը կը հաղորդէ, որ խնդրոյ առարկայ են միլիառաւոր տոլար արժողութեամբ հազարաւոր գործեր, որոնք խլուած են նացիական զօրքերու Խորհրդային Միութիւն ներխուժումին, սպա խորհրդային ուժերու գէպի Գերմանիա արչաւանքի օրերուն:

Մոսկուայի մէջ տպուող «Արուեստ» շարաթաթերթը, իր Մայիսի թիւին մէջ, կ'ըսէ, թէ բանակցութիւնները կրնան լոյս սփռել Խորհրդային Միութեան մէջ երկար ատեն թաքուն մնացած գործերուն վրայ:

Աւարին մաս կը կազմեն աշխարհահռչակ գեղանկարիչներէ գործեր, ինչպէս՝ Թիթիանի, Թինթորեթոյի, Վելասքէզի, Էլ Կրեթոյի, Կոյայի, Պրիւկէլի, Մոնէի, Սեզանի, Տեկասի, Ռընուարի եւ այլ անտանի գեղանկարիչներու արժեքաւոր գործեր եւ հին Տրովադայի պեղումներէն յայտնաբերուած ոսկեայ գանձ մը: